ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

3

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2021 ԹՎԱԿԱՆ, ՀՈՒՆԻՍ 20

ԱՊԱԳԱ ԿԱ՛Ռ ԱՊԱԳԱ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովման գործոններն են.

ՀԱՅՈՑ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՆԱԿԸ

Մեկնարկել է Հայաստանի Զինված ուժերի կառուցվածքային և բովանդակային բարեփոխումների լայնածավալ գործընթացը: Ռազմավարական հեռանկարում Հայաստանի Հանրապետությունն աստիճանաբար անցում կկատարի պրոֆեսիոնալ բանակի, էականորեն կփոխվի ժամկետային և զորահավաքային զինծառայության կառուցվածքը:

Հեռանկարում Հայաստանի պետական սահմանների այն հատվածների պահպանությունը, որն այժմ իրականացնում են Հայաստանի Զինված ուժերը, կիրականացնեն Սահմանապահ զորքերը, իսկ բանակի ստորաբաժանումները կզբաղվեն բացառապես մարտական պատրաստվածության, մարտունակության բարձրացման հարցերով:

Արցախի և Արցախի ժողովրդի անվտանգությունը կշարունակի ապահովել Պաշտպանության բանակը: Պաշտպանության բանակն ամբողջությամբ անցում կկատարի պայմանագրային զինծառայության: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերի ներկայությունը Արցախում և Լաչինի միջանցքում Արցախի անվտանգության կարևորագույն երաշխիք է:

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման մասին, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին համաձայնագրերի հիման վրա հագեցվում են Հայաստանում ռուսական 102-րդ ռազմաբազայի հնարավորությունները: Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի շրջաններում հիմնվել են Հայաստանում ռուսական 102-րդ ռազմաբազայի հենակետեր, Սյունիքի մարզի մի շարք հատվածներում Հայաստանի պետական սահմանի պահպանությանը մասնակցում են ռուսական սահմանապահները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ-ԻՆ

Հայաստանը շարունակում է ակտիվորեն ներգրավված լինել կառույցի աշխատանքներին և շարունակելու է աշխատել պայմանագրային և փաստաթղթային բազայի էլ ավելի կատարելագործման ուղղությամբ, ինչը լավագույնս կարտացոլի անդամ պետությունների շահերը և համատեղ նպատակները:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ և ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՊԱՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ

Տարածաշրջանային կայունության հաստատումը և տարածաշրջանի ապաշրջափակումը Հայաստանի անվտանգության կարևոր երաշխիք է, և, հետևաբար, պետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Միաժամանակ, այս գործընթացը չի կարող տեղի ունենալ Հայաստանի ու Արցախի այլ անվտանգային և կենսական շահերի հաշվին, այլ հակառակը, պետք է նպաստի դրանց ամրապնդմանը:

Տարածաշրջանի ապաշրջափակմանն ուղղված մեր արտաքին քաղաքական ջանքերը, մյուս դերակատարների կողմից կառուցողական դիրքորոշման ցուցաբերման դեպքում, կարող են բերել ինչպես Հայաստանի անվտանգային համակարգի հավելյալ երաշխիքների, այնպես էլ Հայաստանի տարածաշրջանային դերակատարության բարձրացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, տնտեսական հզորությունների ավելացմանը, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղ և փոխշահավետ գոյակցության մթնոլորտի ձևավորմանը: Այս տեսանկյունից առանցքային է 2020 թվականի նոյեմբերի 9-ի և 2021 թվականի հունվարի 11-ի Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից ստորագրված եռակողմ հայտարարություններից բխող քայլերի ամբողջական և անվերապահ իրագործումը:

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության դերը Ղարաբաղյան հակամարտության լուծման և Արցախի վերջնական կարգավիճակի հստակեցման, տարածաշրջանային կայունության ու անվտանգության ապահովման գործում առանցքային է, և Հայաստանը նպաստելու է այս ձևաչափի արդյունավետ գործունեությանը:
Բոլոր ուղղություններով նախաձեռնողական և արդյունավետ ներգրավման արտաքին քաղաքականությունը
Մեզ համար արտաքին քաղաքականության կարևոր նպատակներից է աշխարհի բոլոր տարածաշրջաններում գտնվող պետությունների և կազմակերպությունների հետ Հայաստանի երկկողմ և բազմակողմ հարաբերությունների շարունակական զարգացումը և արդյունավետ համագործակցությունը: Այս համատեքստում ևս մեր հիմնական գործընկերների հետ փոխշահավետ և բովանդակային փոխգործակցությունը կարևոր բաղադրիչ է Հայաստանի անվտանգային ճարտարապետության մեջ:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնվում է Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի հավաքական շահերի վրա: Արտաքին քաղաքականության մեր ուղենիշն է ինչպես Հայաստանի Հանրապետության և Արցախի ժողովրդի, այնպես էլ սփյուռքահայության իրավունքների, անվտանգության և շահերի ապահովումը: Արտաքին և անվտանգային քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից են լինելու Ղարաբաղյան հակամարտության խաղաղ և համապարփակ կարգավորումը՝ արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման միջոցով Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումը, ինչպես նաև մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը և հումանիտար խնդիրների լուծումը: Հայաստանի Հանրապետությունն օգտագործելու է իր ողջ ներուժը վերոնշյալ նպատակներին հասնելու համար՝ առաջնորդվելով մեր պետական շահերով և հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հրամայականով:

- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը շարունակելու է լինել մեր արտաքին քաղաքական առաջնահերթությունների շարքում: Հայոց ցեղասպանության անվիճարկելի փաստի համընդհանուր ճանաչումը կնպաստի տարածաշրջանի կայունությանն ու անվտանգությանը, ժողովուրդների միջև հաշտեցմանն ու համերաշխությանը, ինչպես նաև երաշխիք կդառնա նմանատիպ ոճրագործությունների կանխարգելման համար: Հայաստանը շարունակելու է ակտիվորեն նպաստել ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային հանրության ջանքերին, էթնիկ, կրոնական և ռասայական հողի վրա խտրականության և անհանդուրժողականության դրսևորումների դեմ պայքարին:

- Հայաստան-Ռուսաստան երկկողմ համագործակցության օրակարգի բոլոր ուղղություններով՝ ներառյալ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, հումանիտար ոլորտներում, շարունակելու ենք ամրապնդել և ընդլայնել Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններն ու ռազմավարական գործընկերությունը: Քայլեր ենք ձեռնարկելու բարձրագույն մակարդակում հայ-ռուսական քաղաքական երկխոսությունն էլ ավելի ակտիվացնելու, Ռուսաստանի հետ ԵԱՏՄ, ՀԱՊԿ և այլ բազմակողմ ձևաչափերում համագործակցությունն էլ ավելի խորացնելու ուղղությամբ:

- Հայաստան-ԱՄՆ հարաբերությունները բարձրացել են նոր՝ ռազմավարական երկխոսության մակարդակի: Մենք շարունակելու ենք հետևողականորեն աշխատել ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության զարգացման և խորացման ուղղությամբ՝ ընդլայնելով ժողովրդավարական բարեփոխումների, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում փոխգործակցությունը, ինչպես նաև տնտեսական և քաղաքական ոլորտներում

երկխոսությունը: Հայաստանը շարունակելու է համագործակցությունը ԱՄՆ-ի հետ՝ այդ թվում որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրի՝ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով:

• Շարունակելու ենք Եվրոպական Միության և ԵՄ անդամ պետությունների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցությունը՝ հիմնվելով Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և այլ պայմանագրերի վրա: Մինչև 2026 թվականը ավարտին ենք հասցնելու 2021 թվականի մարտին ամբողջությամբ ուժի մեջ մտած ՀԸԳՀ կիրարկման գործընթացը: Շարունակելու ենք Հայաստան-ԵՄ ինստիտուցիոնալ համագործակցությունը առկա ոլորտային մարտահրավերները հաղթահարելու, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար ԵՄ մուտքի արտոնագրի ազատականացման երկխոսությունը մեկնարկելու ուղղությամբ:

• Շարունակելու ենք ամրապնդել Ֆրանսիայի Հանրապետության հետ առանձնաշնորհյալ հարաբերությունները՝ ելնելով նաև Ֆրանսիայի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրի կարգավիճակից: Քաղաքական ոլորտում առկա փոխգործակցությանը զուգահեռ պետք է կոնկրետ քայլեր իրականացնենք Ֆրանսիայի հետ տնտեսական հարաբերությունների խորացման համար: Կարևորում ենք նաև Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածությունը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության աշխատանքներում:

• Ապահովելու ենք Իրանի հետ առանձնահատուկ հարաբերությունների հետագա զարգացումը՝ անկախ աշխարհաքաղաքական ազդեցություններից: Կարևորելով Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային դերակատարությունը՝ ձգտելու ենք առանձնահատուկ բարիդրացիական հարաբերություններն Իրանի հետ էլ ավելի զարգացնել: Համագործակցության շրջանակներում ակտիվ քայլեր ենք իրականացնելու տնտեսական բաղադրիչի մեծացման ուղղությամբ: Այս առումով կարևորում ենք համատեղ ջանքերը լոգիստիկ, ենթակառուցվածքների զարգացման, տրանսպորտային փոխկապակցվածության, էներգետիկ և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային ծրագրերի իրականացման համար: Հատուկ ուշադրություն ենք դարձնելու «Պարսից ծոց-Սև ծով» տրանսպորտային միջանցքի ձևավորմանը:

• Ապահովելու ենք Վրաստանի հետ առանձնահատուկ հարաբերությունների հետագա զարգացումը՝ անկախ աշխարհաքաղաքական ազդեցություններից: Հայաստանի և Վրաստանի միջև քաղաքական, անվտանգային, տնտեսական, հաղորդակցային, մշակութային, հումանիտար և զբոսաշրջային ոլորտներում հարաբերությունների խորացումն ունի փոխադարձ կենսական նշանակություն: Վրաստանի հետ հաղորդակցության ուղիների բարելավումը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն: Երկու երկրների միջև փոխվստահության ամրապնդումը, շարունակական երկխոսությունը և համագործակցությունը կնպաստի տարածաշրջանային կայունությանը:

• Հայաստանը կարևորում է 2020 թվականի նոյեմբերի 9-ի և 2021 թվականի հունվարի 11-ի՝ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից ստորագրված եռակողմ հայտարարությունների ամբողջական կյանքի կոչումը, ինչը կարող է խթան հանդիսանալ տարածաշրջանային կայունության և երկարատև խաղաղության հաստատման համար: Սրան կարելի է հասնել միայն բոլոր կողմերի կառուցողական ջանքերի և համապատասխան միջավայրի ձևավորման միջոցով:

• Թուրքիայի ղեկավարության ապակառուցողական գործողությունները, մասնավորապես՝ Հայաստանի տնտեսական շրջափակումը, Ադրբեջանին 44-օրյա պատերազմում ցուցաբերած բացահայտ աջակցությունը, ինչպես նաև հակահայկական քաղաքականությունը բացասական ազդեցություն են ունենում տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացի վրա: Հայաստանը մշտապես պատրաստ է եղել Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորմանը, ինչը բխում է տարածաշրջանային կայունության, անվտանգության և տնտեսական զարգացման շահերից: Հարաբերությունների կարգավորումը կարող է տեղի ունենալ Թուրքիայի կողմից համապատասխան կառուցողական քայլերի դեպքում:

• Լինելու ենք նախաձեռնող Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի հետ բարեկամական ու փոխշահավետ կապերի ամրապնդման և նոր համագործակցային հարաբերությունների կայացման ուղղությամբ:

• Նպաստելու ենք Մերձավոր և Միջին Արևելքի ավանդաբար բարեկամ երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնմանը, հակամարտության գոտիներում բնակվող մեր հայրենակիցների անվտանգությանը և շահերի պաշտպանությանը:

• Զարգացնելու ենք համագործակցությունն ամերիկյան, ասիական, աֆրիկյան և խաղաղօվկիանոսյան պետությունների հետ:

• Արտաքին հարաբերություններում շարունակելու ենք Հայաստանի ակտիվ և նախաձեռնողական քաղաքականությունը, հատկապես այն միջազգային կառույցների շրջանակներում, որոնց անդամ է Հայաստանը կամ որոնց հետ կան արդեն ձևավորված փոխգործակցության ձևաչափեր:

• ԵԱՏՄ շրջանակներում շարունակելու ենք նախաձեռնողական և փոխշահավետ համագործակցության տարբերակների քննարկումները՝ միտված կառույցի ընձեռած հնարավորությունների առավելագույն օգտագործմանը և գործընկեր երկրների միջև առևտրաշրջանառության ծավալների աճին:

• Դիտարկելով ՀԱՊԿ-ը որպես Հայաստանի անվտանգային համակարգի կարևորագույն օղակ՝ շարունակելու ենք ակտիվորեն ներգրավված լինել կառույցի աշխատանքներին:

• Հայաստանը շարունակելու է ակտիվ մասնակցություն ունենալ ԱՊՀ շրջանակներում համագործակցությանը և կազմակերպությունում ընթացող գործընթացներին: Ծարունակելու ենք կարևորել նաև ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը:

• Հայաստանը հավատարիմ է ՄԱԿ հիմնարար արժեքներին և բարձր է գնահատում կառույցի դերը միջազգային խաղաղության, ժողովուրդների համագործակցության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բնագավառում: Հայաստանը շարունակելու է իր ակտիվ աշխատանքները կառույցի շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերը ինչպես տարածաշրջանային խնդիրների լուծման, այնպես էլ գլոբալ մարտահրավերների ձևակերպման և դրանց շուրջ աշխատանքների կազմակերպման տեսակետից:

• Հետամուտ ենք լինելու ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակությանը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացմանը:

• Շարունակելու ենք ակտիվորեն մասնակցել ԵԱՀԿ շրջանակներում ընթացող գործընթացներին՝ ելնելով այն հանգամանքից, որ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ և համապարփակ կարգավորումը պետք է տրվի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում և ԵԱՀԿ-ն տարածաշրջանային անվտանգության և խաղաղության խնդիրների հասցեգրման կարևոր հարթակ է:

ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի ազգային դիվանագիտական համակարգը ձևավորված և ավանդույթներ ունեցող ինստիտուտ է: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է արդի միտումներին ու զարգացումներին համահունչ բարեփոխումներ իրականացնել արտաքին քաղաքականության ձևակերպման, կառավարման ու իրականացման գործընթացներում: Այս առումով, առաջիկա 5 տարիներին շեշտադրելու ենք հատկապես տնտեսական, թվային և իրավական դիվանագիտության զարգացումը:

• Արդիականացնելու ենք **տնտեսական դիվանագիտության** մեխանիզմներն ու գործընթացները: Այդպիսով, կկարողանանք առավել բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանի զարգացման համար, զգալիորեն մեծացնել օտարերկրյա ներդրումների ներհոսքը, ավելացնել արտաքին առևտրաշրջանառության ծավալները, խթանել առաջատար տեխնոլոգիաների և փորձի փոխանակման գործընթացը, համագործակցությունը հետազոտությունների ու մշակումների ոլորտում, մեծացնել զբոսաշրջության ծավալները, նպաստել հայկական ու օտարերկրյա բիզնեսների համագործակցության ակտիվացմանը:

• Աշխարհում ընթացող հեղափոխական զարգացումներից հետ չմնալու համար մեծ ուշադրություն ենք դարձնելու **թվային դիվանագիտությանը**: Խթանելու ենք թե՛ դիվանագիտության թվայնացումը, թե՛ թվային տեխնոլոգիաների զարգացման մեջ դիվանագիտության դերը: Դիվանագիտության լայնածավալ թվայնացումը կբերի մի շարք գործառույթների ավտոմատացման և արդյունավետության բարձրացման, օրինակ՝ արհեստական բանականության օգտագործման միջոցով, ինչը հատկապես շահավետ է մարդկային ու նյութական ռեսուսների ճիշտ օգտագործման ու բաշխման տեսանկյունից: Տեխնոլոգիական կորպորացիաների հետ համագործակցության շնորհիվ նպաստելու ենք թվային հարթակներում Հայաստանի դրական ընկալման բարձրացմանը և շահերի ամրապնդմանը, թվային տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների ծավալի աճին:

• Հատկապես փոքր պետությունների դեպքում միջազգային իրավունքն ու միջազգային իրավական ռեժիմի ամրապնդումը կարևոր գործիք է՝ արտաքին քաղաքական շահերը պաշտպանելու համար: Մենք զարգացնելու ենք **իրավական դիվանագիտության** գործիքակազմն արտաքին քաղաքականության մեջ և նպաստելու ենք նորմերի ու կանոնների վրա հիմնված միջազգային համակարգի առաջխաղացմանը: Իրավական գործիքակազմի կոորդինացված ու արդյունավետ օգտագործումը հնարավորություն կտա միջազգային իրավական ռեժիմի շրջանակներում խթանել ու առաջ մղել հայությանը մտահոգող հարցերը ու խնդիրները և պաշտպանել Հայաստանի ու Արցախի շահերը:

ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

44-օրյա պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը մեծ կորուստներ են կրել: Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հազարավոր քաղաքացիներ զոհաբերել են իրենց կյանքը հանուն սեփական հայրենիքի և ժողովրդի անվտանգության ու բարօրության: Մենք ունեցել ենք նաև ահռելի տարածքային և նյութական կորուստներ: Սակայն մեր ժողովուրդը և բանակը գերմարդկային ջանքերի և հսկայական զոհողությունների գնով կարողացել են կանխել Արցախի ամբողջական հայաթափումը և արցախյան պետականության ոչնչացումը:

Հայաստանի Հանրապետությունն արձանագրում է, որ Ադրբեջանի Հանրապետությունը՝ Թուրքիայի Հանրապետության և վարձկան ահաբեկիչների օժանդակությամբ և ուղղակի ներգրավվածությամբ, ուժի գործադրմամբ է փորձել լուծել Ղարաբաղյան հակամարտությունը՝ այդպիսով խախտելով ուժի կամ ուժի սպառնալիքի չօգտագործման միջազգային իրավական սկզբունքը: Միջազգային իրավունքի ընձեռած բոլոր մեխանիզմներով հետամուտ ենք լինելու ագրեսիայի ընթացքում ռազմական հանցագործությունների և հանցագործների բացահայտմանը և պատասխանատվության ենթարկելուն:

• Մոտակա տարիներին մեր գլխավոր խնդիրը պետք է լինի աղետալի պատերազմի հետևանքների վերացումը, ինչպես նաև Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումն ու Ղարաբաղյան հակամարտության խաղաղ և համապարփակ կարգավորումը՝ հիմնված Արցախի ժողովրդի ինքնորոշման՝ առանց սահմանափակումների իրականացման վրա, որը բխում է Արցախի ժողովրդի գոյութենական վտանգներին դիմակայելու անհրաժեշտությունից: Այն փաստը, որ մարդու իրավունքների զանգվածային խախտումների և զանգվածային ոճրագործությունների հետևանքով հայաթափվել են Արցախի բոլոր այն տարածքները, որտեղ հաստատվել է ադրբեջանական վերահսկողություն, մատնանշում է, որ Արցախի ժողովուրդը չի կարող գոյատևել Ադրբեջանի ենթակայության ներքո:

• Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը տեսնում ենք Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացման և Արցախի կարգավիճակի վերջնական հստակեցման տեսքով՝ առաջնորդվելով «Անջատում հանուն փրկության» սկզբունքով: «Անջատում հանուն փրկության» սկզբունքն իրավունք է տալիս ժողովուրդներին ինչպես անջատվել որևէ պետությունից, երբ առկա է խտրականության, մարդու իրավունքների լայնածավալ խախտումների կամ ցեղասպանության ռիսկ, այնպես էլ բացառում է միացումը մի պետության հետ, եթե միավորումը բերելու է վերը նշված հետևանքներին:

• Արցախի հետպատերազմյան վերականգնումը, տնտեսական կյանքի աշխուժացումը, տեղահանված բնակչության սոցիալական խնդիրների լուծումը, մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը լինելու են մեր

ուշադրության կենտրոնում: Ջանք չենք խնայելու Արցախում արժանապատիվ և բարեկեցիկ կյանքի պայմանների ստեղծման համար: Այս նպատակներին հասնելու ենք Արցախի իշխանությունների հետ համագործակցության խորացման, ինչպես նաև Արցախի հետ փոխգործակցության նոր ձևաչափերի ստեղծման միջոցով:

• Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է լինել Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը և շարունակելու է աշխատել Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Խորացնելու ենք համագործակցությունը Արցախի հետ անվտանգային և ռազմական ոլորտներում: Մենք գործուն օժանդակություն ենք ցուցաբերելու Արցախին՝ Պաշտպանության բանակի վերակառուցման ու արդյունավետության բարձրացման գործընթացում:

• Մենք Արցախի անվտանգության ապահովման կարևորագույն գործոն ենք համարում հակամարտության գոտում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերի երկարաժամկետ ներկայությունը: Երաշխավորելու ենք բոլոր անհրաժեշտ պայմանների գոյությունը խաղաղապահ առաքելության անխափան ու անխոչընդոտ գործունեության համար:

• Արցախյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման համար առանցքային կարևորություն ենք տալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափի շրջանակներում բովանդակային բանակցությունների անցկացմանը: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը հիմնախնդրի կարգավորման միակ ընդունված միջազգային ձևաչափն է:

• Բանակցային գործընթացում Հայաստանի առաջնահերթություններից է լինելու այն տարածքների դեօկուպացիան, որի վրա ինքնորոշվել է Արցախի ժողովուրդը, նախևառաջ նախկին ԼՂԻՄ բնակավայրերի վերադարձն Արցախի վերահսկողության ներքո՝ խաղաղ, բանակցային ճանապարհով, ինչը հնարավորություն կտա տեղահանված անձանց վերադառնալ իրենց տները:



ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Պաշտպանական բյուջեն ավելացրել ենք 48%-ով:



2017 թվականից ի վեր Հայաստանի պաշտպանական բյուջեն ավելացել է շուրջ 48%-ով՝ 207 մլրդ-ից դառնալով 307 մլրդ դրամ, որից 302 մլրդ-ն ուղղվել է ռազմական պաշտպանությանը: 2018-2020 թվականներին մեծապես աճել է սպառազինության և ռազմական տեխնիկայի հիմնական միջոցների ձեռքբերումը՝ ի համեմատություն 2016-2018 թվականների, ընդ որում՝

- հրաձգային զենքերի և մերձամարտի միջոցների թիվը մեծացել է մինչև 2 անգամ,
- հրետանային միջոցներ (ականանետեր, փողային և ռեակտիվ հրետանի)՝ ավելի քան 7 անգամ,
- օպտիկական սարքեր և սարքավորումներ՝ ավելի քան 3 անգամ,
- խոշոր տրամաչափի զենքեր՝ ավելի քան 10 անգամ,
- ավտոմոբիլային տեխնիկա՝ ավելի քան 2 անգամ,

- տեսադիտարկման սարքեր՝ մինչև 2 անգամ,
- ինքնաթիռային և «Կոպտեր» տեսակի ԱԹՍ-ներ՝ ավելի քան 6 անգամ:

Ինժեներական ապահովման հարցում՝ ամրաշինական կառույցների, կենցաղի ապահովման կառույցների, ռազմական ճանապարհների, պաշտպանիչ հողաթմբերի թվաքանակն ավելացել է մինչև 3 անգամ: Առաջին անգամ կառուցվել են երկաթբետոնե կոնստրուկցիաներով և նոր կոմպոզիցիոն նյութերով ինժեներական ապաստարաններ և գետնատներ՝ շուրջ 150 միավոր:

Բացի վերոնշյալից՝ Զինված ուժերի կարիքների համար ձեռք են բերվել բազմաֆունկցիոնալ «ՍՈՒ-30ՍՄ», «ՏՈՐ», «ՕՍԱ-ԱԿ» զենիթահրթիռային համալիրներ, ՌՔԿՊ միջոցներ: Զինված ուժերի գլխավոր շտաբում կազմավորվել է Զինված ուժերի օպերատիվ կառավարման կենտրոն:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 2019 թվականին բարձրացրել ենք զինծառայողների աշխատավարձը 22,000-ից մինչև 97,000 դրամով՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրտսեր կազմի և հատուկ պայմաններում ծառայություն իրականացնող զինծառայողների դրամական բավարարման մակարդակի բարձրացմանը: Ըստ այդմ՝

- գնդի հրամանատարի դրամական բավարարումը աճել է 4.6%-ով,
- գնդի հրամանատարի տեղակալինը՝ 12.7%-ով,
- գումարտակի հրամանատարինը՝ 23%-ով,
- վաշտի հրամանատարինը՝ 32.6%-ով,
- դասակի հրամանատարինը՝ 26.2%-ով,
- ավագ ենթասպայինը՝ 18%-ով,
- շարքային պայմանագրայինինը՝ 13.7%-ով,
- պայմանագրային սերժանտինը՝ 22%-ով:

2019 թվականի հունիսից Զինված ուժերի բոլոր զորամասերում զինծառայողների սննդի մատակարարումը պատվիրակել ենք մասնավոր կազմակերպություններին: Կատարվել է խոհանոցային տեխնիկայի և սպասքի վերազինում, ճաշարանային հատվածի թարմացում: Հստակեցվել է սննդի չափաքանակը՝ հաշվի առնելով կալորիականությունն ու օգտակարությունը: Ճաշացանկն առանձնանում է ուտեստների բազմազանությամբ՝ ներառելով տարբեր տեսակի տաք ուտեստներ և աղցաններ, կաթնամթերք, քաղցրավենիք, թխվածք, միրգ:

Հաստատել ենք պայմանագրային և պարտադիր ժամկետային ծառայողների հագուստի որակական նոր չափանիշներ: Արդյունքում զինծառայողներին հատկացվում է բարձրորակ բամբակյա հագուստ: Զորամասերն ապահովել ենք նաև կենցաղային լվացքի տեխնիկայով և անհատական լվացքի պարկերով: 2020 թվականի մայիսից նաև 70 զորամասերի մարտական հերթապահություն իրականացնող դիրքերում սննդի մատուցման ծառայությունը իրականացնում են 5 մասնավոր կազմակերպություններ: Մարտական դիրքերը էլեկտրաֆիկացմանը զուգահեռ համալրվել են կենցաղային սառնարաններով:

Ծուրջ 1000 զինվորական թոշակառուների՝ տարիներով չլուծված պետության պարտավորությունը լուծել ենք՝ կառավարության որոշմամբ տրամադրելով 5.7 մլրդ դրամի ֆինանսական աջակցություն: Ծուրջ 180 զինծառայողներ ստացել են նորակառույց բնակարաններ:

107 զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ենք բնակարաններ: Ընտանիքի համալրման արդյունքում բնակարանի բարելավման կարիք ունեցող 355 զինծառայողների անհատույց տրամադրել ենք նոր բնակարաններ՝ ըստ ընտանիքի անդամների քանակի:

12 զինավաններում իրականացրել ենք բարեկարգման և կապիտալ վերանորոգման աշխատանքներ (ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրասնուցման, շանթարգելների կառուցում, տարածքների բարեկարգում, ասֆալտապատում, ցանապատում և այլն):

Զինծառայողները, նրանց ընտանիքների անդամները, նրանց հավասարեցված անձինք այսուհետ իրավունք են ունենալու անվճար և/կամ զեղչված գներով իրենց հանգիստն անցկացնել Պաշտպանության նախարարության համակարգում գործող հանգստյան տանը:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի սահմանադրական առաքելությունն է ապահովել Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը: Հետևաբար, Զինված ուժերի բնագավառում մեր նպատակն է իրականացնել շարունակական բարեփոխումներ, որոնք կապահովեն Զինված ուժերի կողմից այս սահմանադրական առաքելության կատարումը: Ընդ որում, բարեփոխումների մեր ռազմավարությունը նախատեսում է, որ պաշտպանական համակարգի բոլոր կառույցները և բաղադրիչները, ներառյալ Զինված ուժերը, պետք է համակարգված և ներդաշնակ աշխատեն և մնան քաղաքական չեզոքության սահմանադրական պահանջի շրջանակում:

Պաշտպանական համակարգի այդ ավելի լայն ռազմավարությունը մենք մշակում ենք հաշվի առնելով համաշխարհային և հարավկովկասյան տարածաշրջանի քաղաքական, ռազմաքաղաքական, ռազմատնտեսական ու ռազմական գործընթացները: Մենք հաշվի ենք առնում նաև ռազմական գործողությունների բնույթի, օպերատիվ մարտավարական արվեստի և մարտավարության փոփոխություններն աշխարհում: Սրանով պայմանավորված մենք վերանայում ենք պատերազմավարության դրույթները, մարտական գործողությունների պլանավորման և վարման ձևերը, այդ թվում՝ Զինված ուժերի կառավարման համակարգը:

Զինված ուժերի բարեփոխումների մեր ռազմավարությունը մեծապես հիմնվում է նաև 44-օրյա պատերազմի փորձառության և նոյեմբերի 9-ից հետո ձևավորված անվտանգային միջավայրի վերլուծության վրա: Մենք սահմանում ենք այն հիմնական ուղենիշները, երկարատև պլանավորման խնդիրներն ու ռեսուրսները, որոնց վրա հիմնվելու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտի և հինգերորդ սերնդի պատերազմավարման գործիքակազմի զարգացումը:

Հայաստանի Զինված ուժերի բարեփոխումների մեկնարկած լայնածավալ գործընթացը ներառում է կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ: Ռազմավարական հեռանկարում Հայաստանի Հանրապետությունն աստիճանաբար անցում կկատարի պրոֆեսիոնալ բանակի, ժամկետային և զորահավաքային զինծառայության կառուցվածքն էականորեն կփոխվի:

• Հաշվի առնելով զինվորական ծառայության զարգացման ու կատարելագործման հեռանկարները՝ առաջիկայում ձգտելու ենք զինծառայության ժամկետների կրճատմանը՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի: Սրանով մենք խթանելու ենք զինվորական ծառայության շահադրդման թե՛ նյութական, և թե՛ բարոյահոգեբանական մեխանիզմները:

• Մենք բարձրացնելու ենք Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետությունը, մասնավորապես՝ ներդնելու ենք միասնական ավտոմատացված համակարգ:

• Զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով հասնելու ենք արդյունավետության բաձրացման, մասնավորապես՝ ձևավորելու ենք մեծ շարժունակությամբ օժտված այնպիսի մարտական կազմավորումներ, որոնք ունակ կլինեն երկար ժամանակ ինքնուրույնաբար վարել ակտիվ մարտական գործողություններ:

• Մենք շարունակելու ենք սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացները նախևառաջ Հայաստանի Հանրապետության ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ: Զինված ուժերը հագեցնելու ենք հակաօդային պաշտպանության համակարգերով և անօդաչու թռչող սարքերով, ինչպես նաև ռոբոտացված և հեռակառավարվող այլ միջոցներով: Զինված ուժերը համալրելու ենք նաև գերճշգրիտ հեռահար հրթիռային, ժամանակակից ռադիոէլեկտրոնային, հետախուզության և կապի այլ միջոցներով:

• Մենք խթանելու ենք ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը՝ հիմնված հայաստանյան գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վրա: Ոլորտի զարգացման համար բարենպաստ միջավայր է ստեղծելու նաև մեր կողմից արդեն իսկ մշակված ներդրումների խթանման և համատեղ ձեռնարկությունների ստեղծման քաղաքականությունը: Այս քաղաքականությունը հիմնված է հարկային և վարչարարական ընթացակարգերի բարելավման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, ինչպես նաև հանրային, մասնավոր ու միջազգային համագործակցության վրա:

• Շարունակելու ենք զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործումը: Այս ոլորտում մենք արդեն իսկ արդիականացրել ենք անհրաժեշտ իրավական և օրենսդրական բազան, մշակել ենք ոլորտի ռազմավարական փաստաթղթերը:

• Ռազմական կրթության և գիտության զարգացումը լինելու է մեր գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Մենք արդեն իսկ մշակել ենք ռազմական կրթության համակարգի վերակազմավորման նոր մեխանիզմներ, որոնց նպատակն է ապահովել հետազոտական և կրթական բաղադրիչների համատեղումը, ռազմական կրթության շարունակականությունը՝ ցկյանս կրթության գործիքակազմի ներդրմամբ:

• Իրականացնելու ենք ծրագրեր՝ ուղղված Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանը: Այդ

ծրագրերի նպատակն է զարգացնել զինծառայողի և զինվորի անհրաժեշտ բարոյական հատկությունները, մեծացնել հոգեբանական կայունությունը և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը, կատարելագործել զինվորական հոգեբանների ինստիտուտը, ինչպես նաև բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը:

• Մեր ուշադրության կենտրոնում մշտապես եղել է զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը, ուստի մեծացնելու ենք զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործելու ենք զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները: Զինծառայողների աշխատավարձերի և այլ վճարների բարձրացումը, բնակարանային ապահովման ուղղությամբ մեր ծրագրերը, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական ծրագրերը նոր թափ են ստանալու:
Մենք կատարելագործելու ենք ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը Զինված ուժերի նկատմամբ, խթանելու ենք Զինված ուժերի կարգապահությունը, Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը և ջանալու ենք, որ բացառվեն ոչ կանոնադրային հարաբերությունների դեպքերը:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2008-2009 թվականներին համաշխարհային ճգնաժամի հետևանքով հայաստանյան տնտեսության «շինարարական փուչիկի» պայթյունից հետո մեկ տասնամյակի ընթացքում Հայաստանն այդպես էլ ի վիճակի չեղավ վերականգնել դոլարով արտահայտված Համախառն ներքին արդյունքի մինչճգնաժամային մակարդակը՝ ՀՆԱ միջին աճը կազմեց մոտ 3.6%:

2019 թվականին հաջողվեց գրանցել 2008 թվականից ի վեր ամենաբարձր տնտեսական աճը՝ 7.6%, որն այդ տարում կրկնակի գերազանցեց նախկին 5 տարիների միջին աճի ցուցանիշը և ամենաբարձրն էր ԵԱՏՄ, հարևան և եվրոպական տարածաշրջանի բոլոր երկրների համեմատ:

2019 թվականին Հայաստանում արձանագրվել է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի երբևէ գրանցված ամենաբարձր մակարդակը՝ 4604 դոլար, ինչը 2017 թվականի համեմատ ավել է գրեթե 20%-ով:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, հազար դոլար

2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
3.08	3.91	2.91	3.12	3.42	3.58	3.73	3.89	3.53	3.52	3.87	4.2	4.6

2017 թվականի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալը 2019 թվականին ընդլայնվեց ավելի քան 27%-ով՝ կազմելով 2.7 տրիլիոն դրամ: Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 1993 թվականից ի վեր առաջին անգամ գերազանցեց 41.4%-ը:

Հայաստանում 2018-2020 թվականների ընթացքում տնտեսական աճին զուգընթաց էականորեն կրճատվել է ստվերային տնտեսությունը: Մեր կառավարության իրականացրած տնտեսական ստվերի դեմ արդյունավետ պայքարի շնորհիվ Հայաստանի պետական եկամուտներն ավելացել են ավելի քան 40%-ով:

2018 թվականից հետո բյուջեի եկամուտների նշանակալի ավելացումը հնարավորություն է տվել մեծացնել սոցիալական, առողջապահական, կրթական ծախսերը, բարձրացնել կենսաթոշակներն ու աշխատավարձերը, բարենպաստ միջավայր ստեղծել մեծ ծավալի բնակարանաշինության համար, կառուցել և բարեկարգել աննախադեպ ծավալի ճանապարհներ և ենթակառուցվածքներ:

Էականորեն ավելացել է գրանցված աշխատողների թիվը՝ 510,000-ից դառնալով 610,000, իսկ 2021 թվականի ապրիլ ամսին հասել է ռեկորդային 626,000-ի: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ստվերային աշխատատեղերի դեմ ուղղված մեր քաղաքականությունը տալիս է իր արդյունքները:

2018-2020 թվականներին պետական բյուջեի հարկային եկամուտները 1 տրլն 237 մլրդ դրամից դարձել են 1 տրլն 560 մլրդ դրամ՝ ավելանալով 26%-ով, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը նշանակալի բարելավվել է՝ 20.8%-ից դառնալով 22.4%:

	2017	2018	2019	2020
Հարկեր/ՀՆԱ, %	**20.80**	**20.95**	**22.35**	**22.40**
Բյուջեի եկամուտներ, մլն դրամ	**1,237,155.5**	**1,340,948.9**	**1,559,124.8**	**1,560,388.3**

Ստվերի կրճատումը տեղի է ունեցել տնտեսական ազատության բարելավմանը զուգընթաց. 2018 թվականից ի վեր Հայաստանին հաջողվել է նշանակալիորեն բարելավել տնտեսական ազատության մակարդակը: Միջազգային «Տնտեսական ազատության ցուցիչ» զեկույցի համաձայն 3 տարվա ընթացքում Հայաստանը դիրքերը բարելավել է 12 հորիզոնականով՝ «չափավոր ազատ» տնտեսությունից անցում կատարելով «հիմնականում ազատ» տնտեսության մակարդակի:

	2018	2019	2020	2021
Հորիզոնական	**44**	**47**	**34**	**32**
Կատեգորիա	**չափավոր ազատ**	**չափավոր ազատ**	**չափավոր ազատ**	**չափավոր ազատ**

2018-2020 թվականների ընթացքում տնտեսության մեջ ստվերի կրճատման և բյուջեի երկամուտների ավելացման շնորհիվ բարձրացրել ենք հետևյալ ոլորտների աշխատողների վարձատրությունը՝

- Զինված ուժերի զինծառայողներ,
- հանրակրթական դպրոցների ուսուցիչներ,
- մանկապարտեզների աշխատողներ,
- Ոստիկանության ծառայողներ,
- ԱԱԾ աշխատակիցներ,
- Փրկարար ծառայության աշխատակիցներ, անտառապետեր և անտառապահներ,
- քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներ,
- քռաջնային օղակի և շտապ բժշկական օգնության բուժաշխատողներ,
- բուհերի դասախոսներ,
- մանկատների և երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների աշխատողներ,
- երաժշտական, արվեստի դպրոցների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների աշխատողներ,
- մարզադպրոցների, մարզամշակութային հիմնարկների աշխատողներ,
- էլեկտրաէներգետիկ համակարգի աշխատողներ և այլն:

Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը, որը 2013 թվականից ի վեր նվազում էր, 2019 թվականին առաջին անգամ աճ գրանցեց:

2019 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ոչ պետական ֆորմալ զբաղվածների թիվը կազմեց 422,000՝ ընդլայնվելով ավելի քան 86,000-ով 2017 թվականի նկատմամբ, 2019 թվականի ոչ պետական ֆորմալ աշխատավարձի ֆոնդը ընդլայնվեց 43%-ով 2017 թվականի նկատմամբ և կազմեց ՀՆԱ-ի 15.4%-ը:

Բացի այդ, 2020 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը 55,000 դրամից բարձրացել է մինչև 68,000 դրամ, ինչի արդյունքում միջինում 20%-ով բարձրացել է մոտ 130,000 աշխատողի աշխատավարձ: 2020 թվականի դրությամբ Հայաստանում նվազագույն աշխատավարձը 24%-ով բարձր է 2017 և 340%-ով՝ 2007 թվականի համեմատ:

	2007	2017	2020
Միջին աշխատավարձ	**74.227**	**166.004**	**189.716**
Նվազագույն աշխատավարձ	**20.000**	**55.000**	**68.000**

Ընդհանուր առմամբ 3 տարիների ընթացքում Հայաստանում միջին աշխատավարձը 2020 թվականին 2017 թվականի համեմատ բարձրացել է 14%-ով:

2020 թվականին տեղի է ունեցել կենսաթոշակների համատարած բարձրացում: Կենսաթոշակի միջին չափը բարձրացել է ավելի քան 7%-ով: Մինչ այդ բարձրացումը 5 տարի շարունակ կենսաթոշակները չէին բարձրացվել: Բարձրացման արդյունքում 2020 թվականից 2018 թվականի համեմատ կենսաթոշակները բարձր են մոտ 9%-ով, իսկ 2008 թվականի համեմատ՝ ավելի քան 2 անգամ:

Կենսաթոշակի միջին չափը, դրամ

2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
21,252	24,498	27,114	27,128	29,689	29,114	36,028	40,520	40,353	40,296	40,114	40,424	43,590

2019 թվականին սահմանվել է նվազագույն կենսաթոշակ հասկացությունը և որպես դրա շեմ հաստատվել է 25,500 դրամը, միաժամանակ դրան հավասարեցվել են հաշմանդամության, ծերության և կերակրող կորցնելու դեպքերում տրվող նպաստների չափերը:

2020 թվականի հունվարի 1-ից նաև նվազագույն կենսաթոշակի չափը 18,000 դրամից բարձրացրել ենք՝ հասցնելով 26,500 դրամի, աշխատանքային և զինվորական կենսաթոշակի չափը (18,000 դրամ), աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը (950 դրամ), զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը (1-ին խումբ՝ 40,000 դրամ, 2-րդ խումբ՝ 30,000 դրամ, 3-րդ խումբ՝ 27,000 դրամ), ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը (26,500 դրամ), 18 տարին չլրացած երեխայի կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը (90,000 դրամ):

Արդյունքում բարձրացել են շուրջ 34,000 զինկենսաթոշակառուների, շուրջ 470,000 աշխատանքային կենսաթոշակառուների կենսաթոշակների չափերը, մոտ 71,000 նպաստառուների նպաստների չափերը:

Ոլորտի բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին կենսաթոշակառուներին նշանակված կենսաթոշակի միջին չափը կազմել է 43,590.4 դրամ:

2018 թվականից կառավարությունը ձեռնամուխ է եղել էականորեն բարելավել Հայաստանի հարկային դաշտը, թեթևացնել փոքր բիզնեսի հարկային բեռը, բարելավել բիզնես հիմնելու, բիզնեսը զարգացնելու պայմանները, իսկ 2020 թվականի ճգնաժամային իրավիճակներում աջակցության գործուն մեխանիզմներ է ներդրել գործարարությանն աջակցելու նպատակով:

2020 թվականին ներդրվել է միկրոձեռնարկատիրության հարկման համակարգը, որով մինչև 24 մլն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսները գրեթե ազատվել են բոլոր հարկերից: Միայն 2021 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ ավելի քան 18%-ով ավելացել է միկրոձեռնարկատիրության համակարգում գործունեություն իրականացնող տնտեսվարողների տեսակարար կշիռը: 2021 թվականի ապրիլի 1-ի դրությամբ գործել է 42,801 միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, նախորդ տարվա՝ 36,198-ի փոխարեն:

2020 թվականին նվազել է եկամտային հարկի դրույքաչափը՝ միասնական 23% դրույքաչափի սահմանումը հանգեցրել է եկամտային հարկի սանդղակով հարկվող եկամուտներից հաշվարկված եկամահարկի նվազեցման 9.1%-ով: Մինչև 2023 թվականը եկամատային հարկը աստիճանաբար նվազելու է տարեկան 1%-ով՝ 2023 թվականի հունվարի 1-ից սահմանվելով 20%: Մինչև այս փոփոխությունը գործում էր եռաստիճան եկամտային հարկ համակարգը՝ 23%, 28% և 36% դրույքաչափերով:

2020 թվականին շահութահարկի դրույքաչափը 20%-ից նվազել է մինչև 18%: Օտարերկրյա քաղաքացիների՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող շահաբաժնի մասով շահութահարկը սահմանվել է 5%՝ նախկինում սահմանված 10% դրույքաչափի փոխարեն:

Հարկային համակարգում իրականացրել ենք բազմաթիվ համակարգային բարեփոխումներ, մասնավորապես ԱԱՀ շեմը 58,35 մլն դրամից բարձրացել է 115 մլն դրամի, կատարվել է շահութահարկի կանխավճարների համակարգի փոփոխություն, ժամկետանց հարկային պարտավորությունների համար տույժի հաշվարկի դրույքաչափի նվազեցում և այլն:

Էականորեն ավելացել է քաղաքացիներին տրամադրած հիփոթեկային վարկերի ծավալները, ինչպես նաև նվազել է հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը, մասնավորապես՝ եթե 2018 թվականիի մարտ ամսին տրամադրված հիփոթեկային վարկերի ընդհանուր ծավալը կազմել է 210,5 մլրդ դրամ, ապա 2021 թվականի մարտին այդ ցուցանիշը կազմել է 517, 2 մլրդ դրամ՝ 3 տարվա ընթացքում աճելով գրեթե 146%-ով: Նվազել են նաև տրամադրված վարկերի տոկոսադրույքները, մասնավորապես՝ դրամային վարկերի համար 0,4%-ով, դոլարային վարկերի համար 0,8%-ով: Մեծ աճ են արձանագրել նաև ֆիզիկական անձանց տրված հիփոթեկային վարկերի մասով փոխհատուցված եկամտային հարկի ծավալները: Եթե 2017 թվականին այս մասով վերադարձված գումարները կազմել են 2,8 մլրդ դրամ, ապա 2020 թվականի դրությամբ այն ավելացել է գրեթե 5,2 անգամ՝ հասնելով 14,5 մլրդ դրամի:

Կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքներին հակազդելու նպատակով կառավարությունը 2020 թվականին ընդունել է 25 միջոցառում, որոնք ուղղված են եղել համավարակից տուժած տնտեսության գրեթե բոլոր ոլորտներին, ինչպես նաև առավել անապահով հատվածի աջակցությանը: Միջոցառումների

շրջանակում միայն 2020 թվականին հատկացվել է 200 մլրդ դրամից ավելի ֆինանսական ռեսուրս, ինչը ՀՆԱ-ի մոտ 3.2%-ն է: Հակաճգնաժամային միջոցառումներից տնտեսվարողներին տրամադրվել է մոտ 83,000 միավոր աջակցություն, իսկ մոտ 180,000 քաղաքացի ստացել է սոցիալական աջակցություն:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

2020 թվականի ճգնաժամերի՝ կորոնավիրուսի համավարակի և Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի հետևանքները ծանր հարված են հասցրել Հայաստանի տնտեսությանը: Տարին ավարտվել է 7.6% տնտեսական անկմամբ: Հատկանշական է նաև, որ 2020 թվականին տնտեսական անկում արձանագրվել է աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Ըստ էության 2020 թվականի ճգնաժամերի արդյունքում ընդհատվել է տնտեսական աճի նախորդ բարձր տեմպը:

Չնայած առկա մարտահրավերներին՝ 2021 թվականի առաջին 5 ամիսները տնտեսական առումով բավականին հուսադրող են: Մասնավորապես արդեն մարտ ամսին գրանցվել է տնտեսական ակտիվության 3.8% աճ, աճ են գրանցել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, հատկապես տպավորիչ է արտահանման 21.8% աճը: Հարկ է նշել, որ տնտեսության արագ թափով վերականգնումը ունի ընդգծված ներառական բնույթ, որի ամենացցուն ապացույցը աշխատատեղերի և միջին աշխատավարձի էական ավելացումն է: Մասնավորապես՝ եթե 2018 թվականի մարտ ամսին գրանցված աշխատողների թիվը 537,000 էր, ապա 2021 թվականի մարտին այդ ցուցանիշը ավելացել է 85,500-ով կամ 16%-ով՝ հասնելով 622,500-ի:

Էականորեն ավելացել է նաև միջին աշխատավարձի չափը, մասնավորապես՝ եթե 2018 թվականի մարտ ամսին միջին անվանական աշխատավարձը 174,100 դրամ էր, ապա 2021 թվականի մարտին այդ ցուցանիշը ավելացել է 37,200 դրամով կամ ավելի քան 21%-ով՝ հասնելով 211,300 դրամի: Սա մեր երկրում երբևէ արձանագրված լավագույն ցուցանիշն է: Եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ կրճատվել է աշխատավարձից վճարվող եկամտային հարկի չափը, ապա մարդկանց կողմից տնօրինվող, իրական եկամուտը շատ ավելի մեծ չափով է ավելացել:

Տնտեսության վերականգնման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2021 թվականի առաջին 4 ամիսներին հավաքագրվել է ավելի քան 40 %-ով ավելի հարկ, քան 2018 թվականի նույն ժամանակահատվածում, ընդ որում այս ցուցանիշը լավագույնն է անկախ Հայաստանի ողջ պատմության ընթացքում: Հաշվի առնելով երկրում կատարվող ինստիտուցիոնալ բարեփոխումները, մենաշնորհների դեմ պայքարի շարունակական ապահովումը, արտաքին մակրոտնտեսական ազդակները, արտահանմանը միտված մեր տնտեսական քաղաքականությունը՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը առաջիկա հնգամյակում պետք է ունենա միջինում 7% տնտեսական աճ, որի արդյունքում էականորեն կբարձանա մարդկանց կյանքի որակը, աշխատավարձերը, աշխատատեղերի թիվը, կենսաթոշակը, կկրճատվի գործազրկությունն ու աղքատության մակարդակը, հնարավորություն կունենանք վերազինել և արդիականացնել բանակը, էլ ավելի մեծ գումարներ հատկացնել առողջապահությանը, կրթությանը, գիտությանը և մյուս ոլորտներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ստեղծարար միտքը շարունակում է լինել մեր երկրի առանցքային մրցակցային առավելությունը:

Հետճգնաժամային շրջանում տնտեսական քաղաքականության և կառուցվածքային բարեփոխումների առանցքում դնելու ենք Հայաստանի անվտանգությունն ու կայուն զարգացումը երաշխավորող նախապայմաններ ձևավորելու գերնպատակը: Կարևորագույն խնդիրը լինելու է սոցիալ-տնտեսական լիարժեք վերականգնումը, կայուն զարգացումը՝ հիմնված տեխնոլոգիաների վրա:

Չնայած ճգնաժամերի արդյունքում առաջացած նոր մարտահրավերներին՝ մեր նպատակներն ու սկզբունքները շարունակում են մնալ անփոփոխ:

Ըստ այդմ, մեր քաղաքականության **նպատակներն** են՝

- տնտեսական հնարավորությունների ընդլայնումը և դրանց հավասար հասանելիության ապահովումը,
- մարդու ներքին կարողությունների զարգացման և իրացման միջոցով միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը:

Մինչև 2026 թվականը մեր **թիրախներն** են՝

- ՀՆԱ-ի տարեկան միջին աճը նվազագույնը դարձնել 7% (բարենպաստ արտաքին տնտեսական պայմաններում՝ 9%),
- մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 4269 ԱՄՆ դոլարից դարձնել նվազագույնը 5900 ԱՄՆ դոլար,
- ոչ պետական աշխատավարձի ֆոնդը հասցնել ՀՆԱ-ի 25%-ի՝ ներկայիս 16%-ի փոխարեն,
- գործազրկությունը իջեցնել 10%-ից ցածր,
- աղքատության մակարդակը կրկնակի նվազեցնել,
- կենսաթոշակի միջին չափը 43,500 դրամից դարձնել առնվազն 61,000 դրամ,
- նվազագույն կենսաթոշակը 26,500 դրամից դարձնել 37,000 դրամ,
- նվազագույն աշխատավարձը 68,000 դրամից դարձնել առնվազն 85,000 դրամ,
- միջին աշխատավարձը 190,000 դրամից դարձնել 300,000 դրամ,
- հաշմանդամություն ունեցող անձանց նպաստները 26,500 դրամից դարձնելու ենք 33,000-52,000 դրամ՝ ըստ ծանրության աստիճանի,
- զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը 1-ին խմբի համար դրաձնել 55,000 դրամ, 2-րդ խմբի համար՝ 42,000 դրամ, 3-րդ խմբի համար՝ 37,000 դրամ:

Հայաստանի Հանրապետության տնտեսության առանձնահատկություններով պայմանավորված աղքատության կրճատման և բարեկեցության աճի ավելացման հիմնական շարժիչ ուժն է բարձր (ՀՆԱ-ի 7% և ավելի) տնտեսական աճը:

2026 թվականին աղքատությունը կրկնակի կրճատելու և գործազրկության մակարդակը մինչև 10% նվազեցնելու համար Հայաստանի Հանրապետությանն անհրաժեշտ է տարեկան ՀՆԱ 7%-ից ավելի աճ:

Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում բարձր տնտեսական աճի հասնելու միակ իրատեսական ուղին արտահանման ընդլայնումն է: Ուստի աճի տնտեսական քաղաքանության առանցքային թիրախը միջազգային մրցունակության ավելացումն է լինելու՝ գիտելիքի կլանման, տեխնոլոգիական վերազինման և կարողությունների զարգացման միջոցով:

Աճի ներառականությունն ապահովվելու է յուրաքանչյուր անձի կարողությունների զարգացման և աճի արդյունքում ստեղծված տնտեսական հնարավորությունների հավասար հասանելիության միջոցով:

Տնտեսական աճի թիրախին հասնելու նպատակով կատարելու ենք հետևյալ քայլերը:

• Ապահովելու ենք ներդրումների ծավալի զգալի աճ:

Մասնավորապես ներդրում/ՀՆԱ հարաբերակցությունը չպետք է նվազ լինի 25%-ից: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը ապահովելու ենք նոր գիտելիքի, կառավարման հմտությունների և արտաքին գործարար կապերի միջոցով: Տնտեսական աճի թիրախին հասնելու նպատակով անհրաժեշտ է լինելու օտարերկրյա ուղղակի ներդրումների և ՀՆԱ-ի 6% հարաբերակցություն:

Այս նպատակով իրականացնելու ենք կառուցվածքային բարեփոխումներ, այդ թվում՝ հարկաբյուջետային, ֆինանսական ու կապիտալի շուկայի, աշխատաշուկայի, ներդրումային ու գործարար միջավայրի, մրցակցության պաշտպանության, արտաքին առևտրի և այլ ուղղություններով՝ նպատակ ունենալով առավելագույնս խրախուսել ներքին և օտարերկրյա մասնավոր ներդրումները, բարձրացնել վերջիններիս արդյունավետությունը:

• Բարձրացնելու ենք արտադրողականությունը:

Միայն ներդրումների և զբաղվածության աճը չի կարող լինել կայուն տնտեսական զարգացման հիմք: Մրցունակության երկարաժամկետ աճի և պահպանման նպատակով անհրաժեշտ է լինելու զգալիորեն բարձրացնել կապիտալի և աշխատանքի արտադրողականությունը: Թիրախավորելու ենք համախառն գործոնային արտադրողականության տարեկան առնվազն 5% աճ: Այս նպատակով գործարկելու ենք աջակցության համալիր փաթեթներ՝ խրախուսելով տեխնոլոգիական վերազինումը և աշխատուժի կարողությունների զարգացումը:

• Բարձրացնելու ենք զբաղվածությունը և տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը:

Տնտեսական աճն առանց քաղաքացիների լայն ներգրավվածության ոչ միայն չի լինի ներառական, այլև պարզապես չի կարող տեղի ունենալ: Առանց տնտեսապես ակտիվ քաղաքացիների տեսակարար կշռի աճի զգալի հնարավոր չէ տնտեսական աճի թիրախի ապահովումը: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է լինելու բնակչության շարժունակության ապահովումը, ստեղծարար կարողությունների զարգացումն ու իրացումը, ինչպես նաև տնտեսական կյանքում կանանց մասնակցության մեծացումը: Առավել ևս հետճգնաժամային պայմաններում կանանց ցածր ներգրավվածությունը տնտեսական կյանքում անթույլատրելի շռայլություն է: Կառավարությունը մշակելու է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հատկապես կանանց ստեղծարար ու գործարար ներուժի զարգացմանն ու իրացմանը միտված քաղաքականությունների և աջակցության միջոցառումների փաթեթներ:

ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Չնայած արձանագրված տնտեսական աճին՝ 2000-2008 թվականներին մշակող արդյունաբերության դերը տնտեսության մեջ գրեթե կրկնակի նվազեց՝ 2008 թվականին կազմելով 8,6%:

2019 թվականին մշակող արդյունաբերության դերը ՀՆԱ-ի մեջ ընդլայնվեց շուրջ 6%-ով՝ կազմելով 12,4%, որը վերջին 8 տարիների ամենաբարձր ցուցանիշն է: Հայաստանի մշակող արդյունաբերության դերն աշխարհի մշակող արդյունաբերության կողմից ստեղծվող ավելացված արժեքում ընդլայնվեց 16.5%-ով՝ ապահովելով վերջին 8 տարիների առավել արագ աճը:

Տնտեսության փոքր ծավալներով պայմանավորված՝ Հայաստանը կարող է միջազգայնորեն մրցունակ լինել՝ թողարկելով տնտեսապես բարդ, բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքներ և ծառայություններ: Սակայն 2000-2018 թվականներին Հայաստանը աշխարհում բարդությամբ 32-րդ դիրքից գահավիժել է և այժմ գտնվում է 79-րդ դիրքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկարաժամկետ տնտեսական աճի ներուժը զգալիորեն պայմանավորվում է տնտեսական բարդության մակարդակով, անհրաժեշտ է էականորեն բարձրացնել Հայաստանի տնտեսական բարդությունը:

Մշակող արդյունաբերությունում գործող ընկերությունների մեծ մասում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ցածր մակարդակի վրա է: Բացի այն հանգամանքից, որ ոչ արդիական սարքավորումների օգտագործումը բերում է հումքի, ժամանակի և էներգետիկ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը, այն բացասաբար է ազդում թողարկվող արտադրանքի որակի վրա: Ավելին, ոչ արդիական սարքավորումների օգտագործումը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, որ Հայաստանի արդյունաբերությունը պատրաստ չէ օգտագործել արդյունաբերական հեղափոխության արդյունքում ի հայտ եկած հնարավոր մրցակցային առավելությունները:

Որպես հետևանք Հայաստանի մշակող արդյունաբերության արտադրողականությունը զգալիորեն զիջում է մեզ համար թիրախային ԵԱՏՄ շուկայի միջին կշռված արտադրողականությանը:

Ակնհայտ է, որ մշակող արդյունաբերության ճյուղը ունի պետական ներգործության կարիք: 2012-2017 թվականներին մշակող արդյունաբերության զարգացման համար տրամադրված գումարային միջոցները չեն գերազանցել 6 մլրդ դրամը:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Մեր **նպատակն** է՝

- ապահովել Հայաստանի մշակող արդյունաբերության միջազգային մրցունակության շարունակական աճը,

- մշակող արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը գալիք 5 տարիների ընթացքում տրամադրել նվազագույնը 80 մլրդ դրամ,

- հիմնել 3 արդյունաբերական գոտիներ՝ ապահովելով ենթակառուցվածքների և միջավայրի գերազանցություն:

- քայլեր ձեռնարկել Հայաստանի արդյունաբերականացման ուղղությամբ, հատկապես պղնձի արդյունաբերության ոլորտում և հնարավորինս երկարեցնել արտադրական շղթան, խթանել ավելի բարդ և բարձրարժեք արտադրանքի թողարկումը:

Մեր **թիրախներն** են՝

- մշակող արդյունաբերության դերը ՀՆԱ-ի մեջ դարձնել առնվազն 15%,

- միջնաժամկետ հատվածում տնտեսական բարդության ցուցանիշը -0.39-ից հասցնել 0.1 միավորի և ստեղծել հիմքեր՝ 10 տարվա ընթացքում դասվելու բարձր տնտեսական բարդություն ունեցող երկրների շարքին (ցուցիչի արժեք՝ 0.46, 42-րդ հորիզոնական):

Վերոնշյալ ցուցնիշներին հասնելու համար իրականացնելու ենք համալիր միջոցառումներ՝ ուղղված ձեռնարկությունների տեխնոլոգիական արդիականացմանը, ինչպես նաև միջազգային շուկաներ ներթափանցմանն ու առկա դիրքերի ամրապնդմանը: Հայաստանի մշակող արդյունաբերության միջազգային ասպարեզում դերի զգալիորեն բարձրացման նպատակով անհրաժեշտ է լինելու նաև հանրային և մասնավոր ռեսուրսների կենտրոնացում:

• Սուբսիդավորելու ենք առաջին անգամ ոլորտ մուտք գործող մասնագետների աշխատավարձը:

Արդյունքում կբարձրանան երիտասարդ մասնագետների մրցունակությունը և բոլոր մասնագետների միջոլորտային շարժունակությունը, վերջինս իր հերթին կհանգեցնի միջոլորտային գիտելիքի բազայի ստեղծմանն ու տարածմանը:

• Աջակցելու ենք հայաստանյան ընկերությունների մասնակցությունը միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսներին՝ հարկային քաղաքականության գործիքակազմի և ծախսերի ուղղակի փոխհատուցման միջոցով:

Արդյունքում կբարձրանա տնտեսվարողների տեղեկացվածությունը միջազգային հարթակներում առկա տեխնոոգիական լուծումների վերաբերյալ և հայաստանյան ընկերությունների ճանաչելիությունը և միջազգային համագործակցության հնարավորությունները:

• Նորարարական աջակցության գործիքակազմի միջոցով չեզոքացնելու ենք տնտեսությունում առկա ռիսկերը տնտեսական բարդություն ապահովող ներդրումային ծրագրերի համար:

Արդյունքում կբարձրանա Հայաստանի Հանրապետության ներդրումային գրավչությունը տնտեսապես բարդ, գիտելիքահենք ապրանքներ և ծառայություններ թողարկող ընկերությունների համար: Վերջիններիս մուտքը և ընդլայնումը դեպի Հայաստան հնարավորություն կընձեռի մեր տնտեսությանը կլանել գիտելիք և տեխնոլոգիական նոր լուծումներ:

• Հաստատելու ենք վերապատրաստման կենտրոնների ցանկը, համաֆինանսավորելու ենք այդ ցանկում ներառված կենտրոնների կողմից տրամադրվող դասընթացների ծախսերը:

Արդյունքում կխրախուսենք հայաստանյան ընկերությունների աշխատանքի արտադրողականության բարձրացումը և մասնագետների կարողությունների զարգացումը:

• Հարկային և ծախսային գործիքակազմի միջոցով աջակցելու ենք մշակող արդյունաբերությունում ISO սերտիֆիկատների ձեռքբերմանը, ոլորտի միջազգային առաջատար կազմակերպություններում աշխատող փորձագետների գործառնական գիտելիքի փոխանցմանը:

Արդյունքում 3500 մասնագետ կանցնի վերապատրաստում՝ ոլորտի առաջատարներից ձեռք բերելով արդի գիտելիք և կարողություններ, 200 կազմակերպություն ձեռք կբերի ISO սերտիֆիկատներ, 250 մասնագետ կանցնի միջնաժամկետ գործառնական վերապատրաստում/փորձի փոխանակում արտերկրում: Կբարձրանա աշխատանքի արտադրողականությունը, կներդրվեն կառավարման նոր համակարգեր և կստեղծվեն գործարար կապեր արտերկրի հետ:

• 3 ամսվա ընթացքում սահմանելու ենք արդյունաբերական զարգացման գերակա 5 ոլորտներ՝ հիմնված վերջիններիս հետկովիդյան շրջանում տնտեսական պոտենցիալի և համախմբվածության վրա: 1 տարվա ընթացքում յուրաքանչյուրի համար մշակելու ենք ոլորտային զարգացման ծրագիր՝ պետություն-մասնավոր համագործակցություն սկզբունքով:

Արդյունքում գերակա ոլորտները կհամախմբվեն միասնական օրակարգի շուրջ, պետության աջակցության գործիքակազմը զգալիորեն կբարձրացնի տնտեսվարողների միջազգային մրցունակությունը: Կստեղծվեն պայմաններ Հայաստանի մշակող արդյունաբերության միջազգային մրցունակության աճի համար:

• Հիմնվելով մասնավոր հատվածի պահանջարկի վրա՝ տարեկան պատրաստելու և վերապատրաստելու ենք մշակող արդյունաբերության 2000 մասնագետ:

Արդյունքում կբարձրանա աշխատանքի արտադրողականությունը և իրական հատվածի միջազգային մրցունակությունը:

• Բարձրացնելու ենք մշակող արդյունաբերության տեխնիկական հագեցվածությունը՝ տրամադրելով ֆինանսական, տեղեկատվական և մի շարք այլ աջակցության գործիքներ՝ ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով:

Արդյունքում կրկնակի կաճի հիմնական միջոցների դերը մշակող արդյունաբերության ավելացված արժեքում և ծրագրի շահառու ընկերություններում զգալիորեն կաճի արտադրողականությունը:

• Իրականացնելու ենք արտահանման աջակցության ընդլայնված գործողությունների ծրագիր՝ գործարկելով ինչպես ուղղակի ֆինանսական, այնպես էլ տնտեսական դիվանագիտության գործիքակազմը:

Արդյունքում յուրաքանչյուր արտաքին տնտեսական գործունեության մեջ ներգրավված տնտեսվարող կստանա հնարավորություն պաշտպանելու և առաջ մղելու իր դիրքը արտաքին շուկաներում և/կամ մուտք գործելու նոր շուկաներ: Բացի այդ, կազմելու ենք կոնկրետ ներդրումային նախագծեր, որոնք մեր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով ներկայացնելու ենք միջազգային ներդրողներին:

• Ձեռնարկելու ենք միջոցներ՝ ուղղված ածխածնազերծ (carbon-free) ապրանքների թողարկման խթանմանը:

Արդյունքում Հայաստանը պատրաստ կլինի միջազգային առևտրում ի հայտ եկող նոր փոփոխություններին և կկարողանա մուտք գործել նոր շուկաներ, երբ մի շարք մեզ համար թիրախային շուկաներ սահմանափակումներ մտցնեն ածխածնային մեծ պարունակություն ունեցող ապրանքների ներմուծման համար:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Կարևորելով բարձր տեխնոլոգիաների դերը տնտեսության բոլոր բնագավառներում, ինչպես նաև Հայաստանում առկա զարգացման հեռանկարը՝ 2019 թվականին ստեղծել ենք Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը: Հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումները և Հայաստանի անվտանգային մարտահրավերները, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների նշանակությունը ժամանակակից ռազմարդյունաբերության ոլորտում՝ նախարարության կառուցվածքի մեջ ենք ներառել նաև Ռազմարդյունաբերության կոմիտեն: Նախարարությունը նաև պատասխանատու է կապի, փոստի և թվայնացման ուղղություններով:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի շրջանառությունը Հայաստանի տնտեսության ամենաբարձր աճի ցուցանիշերն է ապահովել՝ 2019 թվականին արձանագրելով 30%, իսկ 2020 թվականի ճգնաժամային պայմաններում՝ 21% աճ՝ ընդհանուր առմամբ հասնելով շուրջ 200 մլրդ դրամի: Ոլորտում զբաղվածների թիվը գերազանցում է 19,000-ը:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում պետական բյուջեից ֆինանսավորման ծավալները 150 մլն դրամից ավելացրել ենք՝ հասցնելով տարեկան շուրջ 5 մլրդ դրամի: Ստարտափ տեխնոլոգիական ընկերությունների աջակցման ծրագրի շրջանակում 2021 թվականին 64 ընկերությունների տրամադրել ենք մինչև 20 մլն դրամ պետական դրամաշնորհներ՝ նպաստելով նորարարական ընկերությունների ձևավորմանը, ներդրումային դաշտի զարգացմանը և սկսնակ ընկերությունների ռիսկերի նվազեցմանը: 2020 թվականին հայկական ծագում ունեցող ստարտափները ներգրավել են ավելի քան 50 մլն դոլարի ներդրումներ:

2020 թվականին առաջին անգամ իրականացրել ենք բուհ-մասնավոր հատված համագործակցության կրթական ծրագիր, որի արդյունքում շուրջ 5200 անձ ստացել են ամենաորակյալ մասնագիտական կուրսերը՝ համաձայն ոլորտի պահանջարկի: Նրանցից շուրջ 30%-ն աշխատանք է գտել ոլորտում: Կազմակերպել ենք Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային 23-րդ համաժողովը՝ WCIT-2019, որն իր մասնակիցների թվով WCIT-ի ողջ պատմության ընթացքում ռեկորդային էր՝ 6200 մարդ աշխարհի 70 երկրներից: Աշխարհի ավելի քան 20 երկրներից միջոցառմանը մասնակցել են նախարարական պատվիրակություններ:

Սկսել ենք «Ինժեներական քաղաքի» շինարարությունը, որը նոր միջավայր է ինժեներական, սարքաշինական ընկերությունների համար՝ հագեցած արդի լաբորատորիաներով, արտադրական ենթակառուցվածքներով և Պոլիտեխնիկական համալսարանի նոր մասնաճյուղով:

Մշակել և ընդունել ենք սկսնակ ընկերությունների հարկային արտոնությունների տրամադրման օրենքը, որի շրջանակում շուրջ 550 նոր ընկերություն ստացել է հարկային արտոնություն:

Ռազմարդյունաբերության ոլորտի բյուջեն 2017 թվականի համեմատ 2021-ին ավելացրել ենք 3 մլրդ դրամով՝ 1.8 մլրդ դրամից հասցնելով 4.8 մլրդ դրամի:

Պետություն-մասնավոր գործակցությամբ կազմակերպել ենք ականանետերի, ականների, հրետանու տարբեր տեսակի արկերի, հակատանկային նռնականետերի և դրանց նռնակների մշակում և արտադրությունների հիմնում: Կազմակերպել ենք ժամանակակից ՌԷՊ, ՌԱԴԱՐ, կապի համակարգերի և այլ ուղղություններով գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքներն օգտագործվել են մարտական պայմաններում:

Ռազմարդյունաբերության կոմիտեի միջոցով ֆինանսավորում ենք տարբեր տեսակի հետախուզական և հարվածային ԱԹՍ-ների մշակումների աշխատանքները, որոնց մի մասն արդեն իսկ գտնվում է արտադրական փուլում և օգտագործվել է մարտական պայմաններում:

Պետական գործարաններում և հիմնարկներում իրականացրել ենք բարեփոխումներ, որոնց արդյունքում միջինում ավելի քան 30%-ով բարձրացել է շուրջ 2500 մասնագետի աշխատավարձ և որոշ գործարաններում թարմացվում է հաստոցային պարկը:

Ընդունել ենք «Տիեզերական գործունեության մասին» օրենքը, որը կանոնակարգում է Հայաստանում արբանյակների, դրանց մասերի արտադրությամբ և տիեզերական տեխնոլոգիաներով զբաղվող ընկերությունների աշխատանքը, ինչպես նաև լիցենզավորված ընկերությունների համար սահմանում է հարկային արտոնություններ:

«Հայփոստի» կառավարումը վերադարձվել է Հայաստանի Հանրապետությանը, որն իրականացվում է կորպորատիվ կանոններով: «Հայփոստի» որոշ գրասենյակներում Արդարադատության նախարարության հետ համատեղ ներդրել ենք պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակներ՝ քաղաքացիներին հասանելի դարձնելով տարբեր տեսակի պետական ծառայությունները մեկ վայրում: «Հայփոստում» ներդրել ենք աշխատանքի արդյունավետության և աշխատակիցների ատեստավորման նոր համակարգեր՝ բարձրացնելով քաղաքացիների սպասարկման որակը: Տարբեր երկրների փոստերի հետ կնքվել են երկկողմ համագործակցության համաձայնագրեր: Քաղաքացիների համար հասանելի է դարձել էլեկտրոնային վճարման դրամապանակը և մի շարք այլ նոր ծառայություններ:

Մշակել և ընդունել ենք թվայնացման հնգամյա ռազմավարությունը: Ծարունակաբար թվայնացնում ենք պետական շուրջ 400 ծառայությունները՝ քաղաքացիների համար ավելի հարմարավետ և թափանցիկ դարձնելով շփումը պետության հետ: Մշակել և ընդունել ենք նաև կիբերանվտանգության բազային ստանդարտները:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Բարձր տեխնոլոգիաների ոլորտում մինչև 2026 թվականը նախատեսում ենք ունենալ շուրջ 35,000 զբաղվածներ և ոլորտի շրջանառությունը հասցնել 500 մլրդ դրամի, որը կկազմի ՀՆԱ-ի 6-7%-ը: 2020 թվականի տվյալներով այս ցուցանիշը 3.2% է:

Արդյունքում Հայաստանում կստեղծվի առնվազն 16,000 նոր աշխատատեղ բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

• Պետություն-մասնավոր համագործակցությամբ ստեղծելու ենք նոր «Արտադրական քաղաք՝ «ինժեներական քաղաք»-ի օրինակով, որը նախատեսված է բարձր տեխնոլոգիական սարքերի և համակարգերի մասսայական արտադրության համար:

Արդյունքում կունենանք նորագույն հաստոցներով հագեցած, ժամանակակից արտադրական միջավայր և լաբորատորիաներ՝ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրության կազմակերպման նպատակով:

• Գյումրու և Վանաձորի տեխնոպարկերի օրինակներով շարունակելու ենք մարզերում նոր տեխնոպարկերի կառուցումը: Առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսում ենք կառուցել տեխնոպարկեր Կապանում, Գորիսում, Մարտունիում, Արմավիրում:

Արդյունքում մարզերում կունենանք ժամանակակից տեխնոլոգիական ենթակառուցվածքներ, որոնք թույլ կտան ապակենտրոնացնել տեխնոլոգիական զարգացումը և մարզերում կստեղծվեն ընկերությունների մասնաճյուղեր, կբացվեն հարյուրավոր նոր աշխատատեղեր, կրթական, ձեռներեցության և արտադրանքի մշակման նոր հնարավորություններ:

• Շարունակելու ենք տարեկան շուրջ 500 մլն դրամ հատկացնել «Մասնագետների պատրաստման բուհ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի իրագործմանը՝ ամեն տարի առնվազն 5000 նոր մասնագետների պատրաստման համար:

Արդյունքում Հայաստանում առաջանցիկ տեմպերով կզարգանա բարձր տեխնոլոգիական ոլորտը: Այս ծրագրին մասնակցում են նաև հազարավոր այլ ոլորտի մասնագետներ, որոնք ցանկանում են վերամասնագիտանալ՝ ձեռք բերելով նոր գիտելիքներ տեխնոլոգիական ոլորտում:

• Շարունակելու ենք տարեկան շուրջ 500 մլն դրամ հատկացնել միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների միասնական տաղավարով մասնակցությանը:

Արդյունքում հարյուրավոր հայկական ընկերություններ հնարավորություն են ստանալու իրենց արտադրանքը հասանելի դարձնել միջազգային շուկաներին: 2019 թվականի նմանատիպ միջոցառումների ընթացքում ձեռք են բերվել ավելի քան 8 մլն դոլարի հավելյալ պայմանավորվածություններ: Սա նպաստում է նաև Հայաստանի՝ որպես տեխնոլոգիական երկրի դիրքավորվելուն:

• Շարունակելու ենք տարեկան 1 մլրդ դրամ հատկացնել «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի իրականացմանը և խթանել նորաստեղծ ընկերությունների քանակական և որակական աճը:

Արդյունքում տարեկան մի քանի տասնյակ ընկերություններ կստանան պետական աջակցություն և հնարավորություն կունենան նվազ ռիսկերով և մեծ արագությամբ հասնելու իրենց նպատակների իրագործմանը:

• Շարունակելու ենք տարեկան 1 մլրդ դրամ հատկացնել ձեռներեցության զարգացման և արտասահմանում մասնագետների վերապատրաստման ծրագրերին:

Արդյունքում կնպաստենք Հայաստանում ձեռներեցության զարգացմանը, մասնագետները հնարավորություն կստանան ծանոթանալ և նոր կապեր ձեռք բերել Սփյուռքում և այլ երկրներից նմանատիպ ծրագրերին մասնակցող ձեռներեցների շրջանում՝ հետագայում ընդլայնելով ներդրումների հավելյալ հոսքը և շուկաների զարգացումը:

• Ռազմարդյունաբերության ոլորտում շարունակելու ենք արտադրական, նորոգման գործարանների արդիականացումը: Պետություն-մասնավոր հատվածի, ինչպես նաև միջազգային համագործակցության արդյունքում նախատեսում ենք ներքին սպառման սպառազինության արտադրության ամբողջական ցիկլի ներդրում: Հեռահար ԱԹՍ-ների, ՌԱԴԱՐ-ների, ՌԷՊ համակարգերի, կապի համակարգերի, լազերային տեխնոլոգիաների, հրթիռային համակարգերի և այլ ստրատեգիական ուղղություններով շարունակելու ենք ծրագրերի լայնամասշտաբ ֆինանսավորումը:

Արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, նոր տեխնոլոգիաներով հագեցած արտադրամասեր, ներքին պահանջարկի բավարարման նոր հնարավորություններ՝ նվազեցնելով կախվածությունը արտաքին շուկաներից ինչպես նաև ստեղծելով արտահանման նոր հնարավորություններ:

• Ավարտին ենք հասցնելու տիեզերական ոլորտի զարգացման ռազմավարությունը, զուգահեռաբար մշակում ենք արհեստական արբանյակների գործարկման տարբեր ծրագրեր:

Արդյունքում մինչև 2026 թվականը Հայաստանի Հանրապետությունը տիեզերքում կունենա սեփական արբանյակ՝ պաշտպանական, գյուղատնտեսական և այլ ոլորտներում կիրառման նպատակով:

• «Հայփոստի» գրասենյակներում հասանելի են լինելու հարյուրավոր պետական ծառայություններ՝ քաղաքացիների համար սպասարկման բարձրակարգ հնարավորություններով:

Արդյունքում քաղաքացիները և գործարարները ստիպված չեն լինի շրջել տարբեր գերատեսչություններով՝ փաստաթղթերի անհրաժեշտ փաթեթները ստանալու, պետության նկատմամբ իրենց պարտավորությունների իրականացման կամ տարբեր պետական ծառայություններից օգտվելու համար:

• Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի 80%-ը ապահոված կլինի լայնաշերտ ու բարձրորակ ինտերնետ կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ:

Արդյունքում Հայաստանի ողջ տարածքում ինտերնետ հասանելիությունը կաճի: Այժմ այդ ցուցանիշը մոտ 40% է:

• Մինչև 2023 թվականը ստեղծելու ենք Ազգային կիբերանվտանգության գերազանցության կենտրոնը:

Արդյունքում կբարելավենք պետական համակարգերի կիբերանվտանգությունը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությունը և կխթանենք կիբերգրագիտության զարգացումը: Տարբեր կրթական ծրագրերի միջոցով կբարձրացնենք բնակչության թվային և կիբերանվտանգության ոլորտում հմտությունների մակարդակը: Պետական և մասնավոր հատվածի տվյալները հնարավոր կլինի պահպանել տվյալների պահպանման, մշակման և փոխանցման հատուկ կենտրոնում՝ հիմնված ամպային ենթակառուցվածքների տեխնոլոգիաների վրա: Ենթակառուցվածքը նաև տարածաշրջանային նշանակություն կունենա:

• Մինչև 2024 թվականը մշակելու և ավարտին ենք հասցնելու պետական կայքերի և էլեկտրոնային համակարգերի միասնական չափանիշներն ու ճարտարապետությունը, որոնք ամբողջությամբ հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար։

Արդյունքում պետական առցանց ծառայություններն ավելի հասանելի կդառնան քաղաքացիների տարբեր խմբերին, մի կայքից մյուսն անցնելիս չեն փոխվի ստանդարտները, վիզուալ տեսքը, կայքի դասավորությունը։

• Թվայնացնելու ենք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող շուրջ 300 ծառայություններ, մասնավորապես շուրջ 150 լիցենզիաներ և թույլտվություններ հնարավոր կլինի ստանալ առցանց, այդ թվում նաև շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացը կլինի առցանց։ Պետական բոլոր կայքերից և էլեկտրոնային համակարգերից հնարավոր կլինի օգտվել նաև էլեկտրոնային ստորագրությամբ։

Արդյունքում նվազեցնելու ենք կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև բացառելու ենք ծառայությունների ստացման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ այցելելու անհրաժեշտությունը։

• Թվայնացմանը զուգընթաց քաղաքացին փաստաթուղթը պետական հաստատություններին տրամադրելու է միայն մեկ անգամ։ Իրավական կարգավորումների միջոցով բացառելու ենք քաղաքացուց փաստաթղթեր և տեղեկություններ պահանջելու լրացուցիչ դեպքերը, եթե նման փաստաթղթերն արդեն իսկ առկա են որևէ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանում։

Արդյունքում կրճատելու ենք վարչարարությունը, քաղաքացուն ազատելու ենք հավելյալ քաշքշուքներից։

• Մինչև 2025 թվականը արտերկրում գտնվող մեր քաղաքացիներին բազմաթիվ ծառայություններ, օրինակ՝ անձնագրի փոխում, վավերականության ժամկետի երկարաձգում, տեղեկանքների տրամադրում և մի շարք այլ ծառայություններ, կմատուցվեն առցանց։

Արդյունքում կրճատելու ենք վարչարարությունը, արտերկրում գտնվող մեր հայրենակիցներին ազատելու ենք հավելյալ քաշքշուքներից։

• Մինչև 2025 թվականը ապահովելու ենք, որ իրավաբանական անձանց հետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հաղորդակցվեն բացառապես էլեկտրոնային եղանակով, իսկ քաղաքացիները՝ գերազանցապես էլեկտրոնային եղանակով։

Արդյունքում պետություն-գործարար հարաբերությունները կբերվեն որակական նոր մակարդակի։ Վարչարարությունը կլինի ավելի թափանցիկ, պետությունը կլինի ավելի կանխատեսելի, ծառայությունները՝ ավելի հասանելի։

• Հանրությանը թվային տնտեսության զարգացումներին հնարավորինս արագ ինտեգրելու նպատակով հասարակության տարբեր խմբերի համար կիրականացվեն թվային կարողությունների զարգացմանն ուղղված կրթական ծրագրեր։

Արդյունքում քաղաքացիները կստանան հավելյալ թվային հմտություններ և համակարգչային գիտելիքներ։

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Հաստատել ենք Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը և իրագործման ժամանակացույցը: Սկսել ենք Հայաստանի էլեկտրաէներգետիկ շուկայի փուլային ազատակացմանն ուղղված աշխատանքները:

Վերակառուցման փուլում է գտնվում Հայաստանի ատոմային էլեկտրակայանը, աշխատանքները կավարտվեն առաջիկա ամիսներին:

Ամբողջությամբ հաստատվել և իրականացման փուլում է գտնվում Հյուսիս-հարավ էներգետիկ միջանցքի կառուցման ծրագիրը՝ հնարավորություն ընձեռելով կամուրջ հանդիսանալ ինչպես Իրանի և Վրաստանի հետ փոխշահավետ էլեկտրաէներգիայի առևտրի իրականացման, այնպես էլ ավելի գլոբալ էներգետիկ շուկաների հետ ինտեգրման համար: Ծրագիրն առանցքային նշանակություն ունի տարածաշրջանում Հայաստանի դերի բարձրացման տեսանկյունից:

Էական քայլեր ենք ձեռնարկել վերականգնվող էներգետիկայի զարգացման, մասնավորապես՝ արևային էներգետիկայի զարգացման ուղղությամբ: Արդեն իսկ տրվել են շուրջ 200 ՄՎտ հզորությամբ արևային կայանների կառուցման լիցենզիաներ: Սուբվենցիոն 30 ծրագրի շրջանակներում տեղադրվել են վերականգնվող էներգիայի, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայաններ:

Մշակել ենք օրենսդրական փաթեթ, որը հնարավորություն կընձեռի ցանկացած սպառողի արտադրել էներգիա իր կարիքների համար, իսկ ավելցուկը՝ վաճառել: 2020 թվականին նախապատրաստել և հայտարարել է միջազգային մրցույթ Այգ-1 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նպատակով:

Նախատեսում ենք կայանը շահագործման հանձնել 2024 թվականի սկզբին:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Հայաստանը շարունակելու է խաղաղ նպատակներով միջուկային էներգետիկայի զարգացումը:

2026 թվականից հետո ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի ևս 10 տարով երկարաձգումը մեր էներգետիկ քաղաքականության առաջնահերթություններից է: Դրան զուգահեռ ձեռնամուխ ենք լինելու նոր միջուկային էներգաբլոկի կառուցմանը՝ որպես հիմնական ռազմավարական նպատակ: Արդյունքում կամրապնդենք մեր էներգետիկ անկախությունը՝ ապահովելով ռեսուրսների դիվերսիֆիկացիայի անհրաժեշտ մակարդակ:

• Զարգացնելու ենք վերականգնվող էներգետիկան:

Էներգետիկ ռեսուրսների բազմազանեցման ճանապարհին մենք առաջնորդվելու ենք վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործման սկզբունքով՝ կիրառելով բնապահպանական բարձր չափանիշներ: Մինչև 2030 թվականը արևային էներգիայի արտադրության մասնաբաժինն ընդհանուրի մեջ հասցնելու ենք առնվազն 15%-ի: Այդ նպատակով կառուցելու ենք գումարային շուրջ 1000 ՄՎտ հզորությամբ արևային կայաններ, իսկ հետագայում նաև շուրջ 500 ՄՎտ հզորությամբ հողմային կայաններ:

• Էներգաարդյունավետ և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրումը մեր էներգետիկ քաղաքականության հենասյուներից է:

Մենք ձևավորելու ենք էներգախնայողության նոր մշակույթ տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ տրանսպորտի, արդյունաբերության, գյուղատնտեսության, բազմաբնակարան շենքերի, բյուջետային հանրային հատվածի, վառելիքաէներգետիկ համակարգի և այլ բնագավառներում:

• Ծարունակելու ենք աշխատանքներ տանել էներգակիրների մատակարարման եղանակների և հնարավորությունների բազմազանեցման ուղղությամբ:

Ջանքեր ենք գործադրելու Հայաստանը տարածաշրջանային էլեկտրաէներգետիկ հանգույց դարձնելու ուղղությամբ՝ կապելով հարևան երկրների էներգահամակարգերը և ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկան:

• Ազատականացնելու ենք էլեկտրաէներգետիկ շուկան:

Ապահովելու ենք անցումը շուկայի նոր՝ ազատականացված մոդելին, որը դեռևս սահմանափակ կլինի մրցակցության համար, սակայն հստակ ուղենիշ կունենա դեպի ամբողջական ազատականացում՝ հաշվի առնելով ԵԱՏՄ ընդհանուր էներգետիկ շուկայի ձևավորման ընթացքը և Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Հաստատել ենք գյուղատնտեսության ոլորտի զարգացման 10-ամյա ռազմավարությունը:

Այս պահին գործում են ոլորտի զարգացման 14 ծրագրեր, որոնք իրականացվում են 3 բաղադրիչով՝ տոկոսադրույքի սուբսիդավորում, ծախսերի սուբսիդավորում և գնի մասնակի սուբսիդավորում:

Իրականացված քայլերի արդյունքում արձանագրել ենք հետևյալ ձեռբերումները. առաջին անգամ Հայաստանում ներդրել ենք գյուղատնտեսության ապահովագրություն, ապահովագրավճարի ֆինանսական բեռի 50-60% կառավարությունը վերցրել է իր վրա: 2020 թվականին՝ մեկնարկային տարում, ծրագիրը հնարավորություն էր տալիս ապահովագրել 2 մշակաբույս 8 մարզերում, իսկ այժմ արդեն այն հասանելի է բոլոր մարզերում 11 մշակաբույսի համար: Այս պահին շուրջ 5000 ֆերմեր ապահովագրել է իր բերքը:

2020 թվականից առաջին անգամ ապահովել ենք 0% տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկեր և գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերման նպատակով լիզինգ ֆերմերների և տնտեսավարողների համար, որի արդյունքում 100 մլրդ դրամի ներդրում ենք ապահովել գյուղատնտեսության ոլորտում: Սրա արդյունքում հնարավորություն ենք տվել վերամշակողներին վերազինել իրենց արտադրական կարողությունները, արդյունավետ կազմակերպել արտադրությունը և մրցունակ լինել շուկայում:

Հանրապետությունում սառնարանային տնտեսությունների ծավալը 3 տարիների ընթացքում ավելացել է գրեթե կիսով չափ՝ 20,000 տոննայով: 2017 թվականի 44,500 տոննա սառնարանային տարողության համեմատ 2021 թվականի սկզբին այդ ցուցանիշը հասել է 64,000 տոննայի:

Խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար 90 տնտեսավարողի տրամադրել ենք աջակցություն, որի արդյունքում 792 հեկտար ինտենսիվ այգի է հիմնվել: 2020 թվականին պտուղ-բանջարեղենի և խաղողի մթերման ծավալները 2018 թվականի համեմատությամբ ավելացել են 143,300 տոննայով կամ շուրջ 76%-ով:

Ամբողջ հանրապետությունում 3 տարվա ընթացքում կաթիլային համակարգերով ոռոգվող հողատարածքների մակերեսն ավելացել է 3000 հեկտարով կամ 2.7 անգամ: Կաթիլային համակարգերով ոռոգվող հողատարածքներն ամենաշատն ավելացել են Արմավիրի մարզում՝ 1750 հեկտարով (4.5 անգամ), Արարատի մարզում՝ 730 հեկտարով (5 անգամ) և Կոտայքի մարզում՝ 180 հեկտարով (2 անգամ):

Առաջին անգամ Հայաստանում մեկնարկել է խաղողի տնկարկների քարտեզագրումը, որի արդյունքում կունենանք առկա խաղողի տեսակի և քանակի ամբողջական պատկեր և կփակենք խաղողի մթերման ողջ շղթան՝ խուսափելով բերքի իրացման խնդիրներից:

Եթե 2016-2017 թվականներին Հայաստան է ներմուծվել տարեկան 8 մլն լիտր կոնյակի սպիրտ, որը համարժեք է շուրջ 88,000 տոննա խաղողի, ապա արդեն 2020 թվականին կոնյակի սպիրտի ներմուծումը եղել է 400,000 լիտր կամ 20 անգամ պակաս: Այսպիսով, մեր վարած քաղաքականության արդյունքում պահանջարկ ենք ստեղծել տեղական խաղողի նկատմամբ՝ հանգեցնելով տեղական խաղողի մթերման ծավալների կտրուկ աճի: Միաժամանակ, կոնյակի արտադրության տուրքը տարեկան 15 մլն դրամից նվազեցրել ենք 50,000 դրամի՝ հնարավորություն տալով փոքր և նոր արտադրողներին զբաղվել կոնյակի արտադրությամբ:

Հակակարկտային ցանցերով պաշտպանված հողատարածքների մակերեսը 3 տարվա ընթացքում ավելացել է 413 հեկտարով կամ 3.7 անգամ: Այս ցուցանիշով ամենամեծ աճը գրանցվել է Արարատի մարզում՝ 153 հեկտարով (2017 թվականին ցանցապատ է եղել միայն 0.5 հեկտար հողատարածք), Արմավիրի մարզում՝ 98 հեկտարով և Արագածոտնի մարզում՝ 64 հեկտարով:

Առաջին անգամ կառավարությունը սկսել է խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը՝ կենդանիների հիվանդությունների կանխարգելման միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով: Առաջին անգամ 50-70%-ով փոխհատուցել ենք փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի ծախսերը: Դրանցից 20-ն արդեն կառուցվել են և 60-ն արդեն կառուցման կամ վերակառուցման ընթացքի մեջ են: Կենդանիների ձեռք բերման համար ապահովել ենք 0% տոկոսադրույքով ֆինանսական ռեսուրսներ և ծախսերի մասնակի հետվերադարձ: Ինչպես նաև վերջին 2 տարվա ընթացքում 34 համայնքում հիմնել ենք արոտավայրերի ջրարբիացման համակարգեր՝ շուրջ 45 կմ ջրագծերի կառուցմամբ:

2020 թվականից ներդրել ենք նաև սերմի գնի մասնակի սուբսիդավորման գործիք, որը հնարավորություն է տվել բարձրորակ սերմնացուն մատչելի և հասանելի դարձնել ֆերմերներին: Ի տարբերություն նախկինում իրականացված ծրագրերի, որոնց մասնակցում էին մեկ կամ երկու մատակարար, այժմ սերմերի վաճառքն իրականացնում են 15-ից ավելի մատակարարներ. գործընթացը դարձել է առավել մրցակցային և թափանցիկ՝ հանգեցնելով սերմի գնի իջեցման և որակի բարձրացման: Ի տարբերություն նախկին պետական աջակցության ծրագրերի, երբ ֆերմերներին ներկայացնում էին համայնքների ղեկավարները, ներկայումս աջակցությունն ավելի հասցեական է, և ֆերմերներն իրենք են նախաձեռնում ծրագրի մասնակցության գործընթացը:

Նոր թափ ենք հաղորդել ինտենսիվ այգեգործությանը՝ 2020 թվականին շուրջ 10 անգամ ավելացնելով ինտենսիվ այգիների քանակը: Միաժամանակ, առաջին անգամ մեկնարկել է տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրումը: Արդյունքում ֆերմերները կկարողանան կանխատեսել, թե ինչ տեսակի և քանակի բերք են ակնկալելու իրենց հիմնած այգուց:

2021 թվականի մայիսին 2018 թվականի սկզբի համեմատ Հայաստանում ջերմոցային տնտեսությունների մակերեսն ավելացել է 342 հեկտարով կամ շուրջ 30%-ով: Ջերմոցային տնտեսություններն ամենաշատն ավելացել են Արմավիրի մարզում՝ 3 տարվա ընթացքում մոտ 200 հեկտարով, երկրորդը՝ Արարատի մարզում, որտեղ ջերմոցների մակերեսն ավելացել է 64 հեկտարով:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Յուրաքանչյուր տարվա ընթացքում ինտենսիվ այգիներն ավելացնելու ենք 1000 հեկտարով: Ներդնելու ենք տնկանյութի հավաստագրման համակարգը:

Արդյունքում կունենանք կանոնակարգված ոլորտ, կանխատեսելի բերքատվություն, արտահանման ծավալների կայուն աճ, ռեսուրսների խնայողություն:

• Մշակաբույսերի ամբողջական ապահովագրությունը ներդրված կլինի մինչև 2023 թվականը՝ ներառելով հիմնական մշակաբույսերը: Առաջիկա տարիներին շարունակելու ենք սուբսիդավորել ապահովագրավճարի 50-60%-ը: Ընդլայնելու ենք նաև ապահովագրվող ռիսկերի ցանկը, ինչպես նաև ներդնելու ենք կենդանիների ապահովագրություն, որտեղ ֆինանասական բեռի մի զգալի մասը պետությունը կվերցնի իր վրա: Ընդլայնելու ենք գյուղատնտեսական ապահովագրության աշխարհագրությունը՝ ներառելով բոլոր մարզերը:

Արդյունքում կնվազեցնենք գյուղատնտեսական ռիսկերը և ոլորտում ներդրումներ կատարելը կդարձնենք ավելի կանխատեսելի և գրավիչ: Բնակլիմայական պայմանաններով պայմավորված ռիսկերը կդարձնենք կառավարելի:

• Շարունակելու ենք սուբսիդավորել գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքները՝ ապահովելով մատչելի՝ 0-5% տոկոսադրույքով ֆինանսական ռեսուրսներ և հնարավորություն ենք տալու վարկերը մարել արտոնյալ ժամկետի ավարտից հետո:

Արդյունքում բուսաբուծության ցանկացած ուղղությամբ զբաղվելը կդառնա հասանելի և տնտեսվարողը հնարավորություն կունենա կատարել կապիտալ ներդրումներ, հզորացնել արտադրական կարողությունները, ինչպես նաև ձեռք բերել անհրաժեշտ պարարտանյութ, սերմացու, տնկի, կազմակերպել գյուղատնտեսական աշխատանքները, արտադրել գյուղատնտեսական արտադրանք, իրացնել և առնվազն մեկ տարի արտոնյալ ժամանակահատված ունենալ, որը հնարավորություն կտա իրականացնել գյուղարտադրանքները, արտադրել, վաճառել և այնուհետ նոր մարել ֆինանսական պարտավորությունները:

• Արդիականացնելու ենք ոռոգման համակարգերի 50%-ը՝ ներդնելով ժամանակակից տեխնոլոգիաներ և ավարտին ենք հասցնելու ու կառուցելու ենք նոր ջրավազաններ/ջրամբարներ:

Արդյունքում կնվազեն ջրի կորուստները, ոռոգելի հողատարածքները կավելանան 50%-ով, կավելանա ոռոգման ջրի մատակարարման ժամանակահատվածը և կապահովվի մատակարարման մշտականությունը՝ բացառելով ամառային ամիսներին ոռոգման ջրի սակավության խնդիրը:

• 5 տարի ժամկետով ամբողջությամբ փոխհատուցելու ենք ոռոգման ջրի վարձավճարը մինչև 3 հեկտար հողատարածքներում կաթիլային և/կամ անձրևացման ոռոգման արդի համակարգերի ներդրման դեպքում:

Արդյունքում կունենանք ոռոգման ջրի խնայողական և արդյունավետ օգտագործում, մատակարարված ոռոգման ջրի հաշվառման գործընթացի բարելավում, հողօգտագործողների եկամուտների աճի ապահովում, գյուղատնտեսությամբ զբաղվողների ֆինանսական բեռի նվազեցում:

• Շարունակելու ենք գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի ծրագրի շրջանակում յուրաքանչյուր տարի տեխնիկայի հավաքակազմը թարմացնել առնվազն 500 միավոր գյուղատնտեսական տեխնիկայով: Ներդնելու ենք նաև գյուղատնտեսական տեխնիկայով ծառայությունների մատուցման համակարգը:

Արդյունքում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը կդառնա դյուրին սեփական տեխնիկայի կամ մատուցվող ծառայությունների միջոցով:

• Սուբսիդավորվող վարկային ծրագրերի միջոցով խթանելու ենք բարձրարժեք մշակաբույսերի արտադրությունը և օրգանական գյուղատնտեսությունը, որը արտաքին շուկայում ունի մեծ պահանջարկ և բարձր գին: Մշակող արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը գալիք 5 տարիների ընթացքում տրամադրելու ենք 80 մլրդ դրամ:

Արդյունքում տնտեսվարողները կունենան ավելի բարձր եկամտաբերություն, կգրանցենք նոր տեսակի մշակաբույսերի արտադրության և արտահանման ծավալների աճ:

• Մինչև 70%-ով սուբսիդավորելու ենք բարձրորակ գարնանացանի և աշնանացանի սերմերի ձեռքբերումը:

Արդյունքում կխթանենք բարձրորակ սերմնացուի օգտագործումը, ցանքաշրջանառության ապահովումը և անհրաժեշտ ագրոտեխնիկական միջոցառումների իրականացումը, որոնք կնպաստեն 1 հեկտարից առավելագույն քանակի բերքի ստացմանը՝ այդպիսով հացահատիկի և հատիկաընդեղենի մշակությունը դարձնելով գրավիչ և եկամտաբեր ենթաուղղություն: 2020 թվականին մեկնարկել է Աշնանացան ցորենի ծրագիրը, որի արդյունքում առնվազն 15,000 հեկտար ցանքատարածություններ կապահովեն 2 անգամ ավելի շատ բերքատվություն: Նմանատիպ ծրագիր 2021 թվականին իրականացնում ենք նաև գարնանացան հացահատիկի, հատիկաընդեղենի և կերային մշակաբույսերի համար:

• Շարունակելու ենք վարկային, լիզինգային և փոխհատուցման գործիքներով օժանդակել ջերմատնային տնտեսությունների հիմնմանը:

Արդյունքում կհիմնվեն մինչև 100 հեկտար ջերմատնային տնտեսություններ՝ հայկական արտադրանքը հասանելի դարձնելով այն ժամանակ, երբ գինն ամենաբարձրն է:

• Թվային և ճշգրիտ գյուղատնտեսությունը պետք է դառնա մեր ընդհանուր գյուղատնտեսության բաղկացուցիչ մաս:

Արդյունքում ոլորտում վարած քաղաքականությունը կլինի փաստահենք, և ֆերմերներին տրվող խորհրդատվությունը կլինի ավելի որակյալ և նպատակային:

• Ներդնելու ենք կենդանիների համարակալման և հաշվառման համակարգը և օժանդակելու ենք տոհմային գործի բարելավմանը:

Արդյունքում անասնաբուծության ոլորտում կվարենք փաստահենք քաղաքականություն, կապահովենք վերջնական մթերքի ամբողջական պատասխանատվությունը՝ հետագծելիության երաշխավորմամբ, ինչպես նաև կունենանք կենդանիների բարելավված տոհմային կազմ:

• Շարունակելու ենք տրամադրել մատչելի ֆինանսական ռեսուրսներ անասնապահությանը՝ կառուցելու անասնաշենքեր, ձեռք բերելու կենդանիներ, մասնավորապես՝ տոհմային կենդանիներ, անասնակեր:

Արդյունքում ձեռք կբերվի շուրջ 3000 գլուխ տոհմային կենդանի՝ ապահովելով բարձր մթերատվություն և կաթնատվություն: Բարձրարժեք մթերատու անասնաբուծությամբ զբաղվելը կդառնա եկամտաբեր և հասանելի:

• Կաթի և կաթնամթերքի արտադրության և վերամշակման, ինչպես նաև սպանդանոցների կառուցման համար շարունակելու ենք ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրման լիզինգի ծրագիրը:

Արդյունքում տնտեսվարողները մատչելի պայմաններով կարող են ձեռք բերել անասնապահության ճյուղում օգտագործվող սարքավորումներ:

• Բուսաբուծության և անասնաբուծության ոլորտում վարակիչ հիվանդությունների դեմ կանխարգելիչ միջոցառումները շարունակաբար լինելու են մեր ուշադրության կենտրոնում: Խթանելու ենք անասնաբուժության որակյալ ծառայությունների մատուցումը նաև մասնավոր ոլորտում:

Արդյունքում կարտադրվի անվտանգ սննդամթերք և կկանխարգելվի հիվանդությունների տարածումը:

• Սուբսիդավորվող վարկային և լիզինգային ծրագրերի շրջանակներում աջակցելու ենք ագրովերամշակողներին՝ արտադրական կարողությունները հզորացնելու, նորագույն տեխնոլոգիաներ ներդնելու և մթերումները արդյունավետ կազմակերպելու համար: Ագրոպարենային սարքավորումների լիզինգի ծրագրից կարող են օգտվել նաև սառնարանային, պահեստային, ջերմատնային տնտեսությունները, սպանդանոցային գործունեությամբ զբաղվող տնտեսավարողները:

Արդյունքում վերամշակողները կունենան շրջանառու միջոցներ, արտադրանքը կիրացվի, գյուղացիները ժամանակին կստանան իրացված բերքի արժեքը, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ կկրճատվեն արտադրական ծախսերը և արտադրանքը կդառնա առավել մրցունակ: Ծրագրի շրջանակում մատչելի ֆինանսական ռեսուրսների տրամադրմամբ կնպաստենք նաև հետբերքահավաքային կարողությունների հզորացմանը, որոնք կնպաստեն արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը:

• Խթանելու ենք տեղական սերմնաբուծությունը՝ աստիճանաբար հասնելով ինքնաբավության:

Արդյունքում սերմնարտադրությունը կդառնա տեղական և արտաքին շուկայում մրցունակ արտադրանք:

• Համաֆինանսավորելու և ֆինանսավորելու ենք մեծածախ շուկաների և լոգիստիկ կենտրոնների ստեղծումը։

Արդյունքում գյուղացին կազատվի իր արտադրանքն իրացնելու խնդրից և ողջ ջանքերը կուղղի արտադրողականության աճին, քանի որ այսուհետ գյուղացու խնդիրը պետք է լինի ոչ թե ապրանքի դժվարությամբ իրացումը, այլ որակյալ բերքի ստացումը։ Կօգնենք ֆերմերներին տեսակավորել, փաթեթավորել և արտահանել իրենց արտադրանքը՝ ստեղծելով կայուն մատակարարման շղթաներ։

• Համաֆինանսավորելու և ֆինանսավորելու ենք Հայաստանում և մեր հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծումը։

Արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ իրացնել արտադրանքը և ապահովել անխափան մատակարարումը։ Մեծացնելու ենք արտահանման ծավալները, որն էլ իր հերթին կնպաստի հայկական գյուղարտադրանքի նկատմամբ պահանջարկի ավելացմանը Հայաստանում։

• Հասցեական աջակցություն ենք ցուցաբերելու Հայաստանի ազգային ագրարային համալսարանին՝ շուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելու և վերապատրաստելու համար։

Արդյունքում կունենանք ոլորտի պատրաստված մասնագետներ և կխթանենք գիտելիքահենք գյուղատնտեսությունը։

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2020 թվականին ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում կորոնավիրուսային համավարակի հետևանքով մեծապես տուժեց զբոսաշրջության ոլորտը: Սպասարկման և հյուրընկալության ծառայություններ մատուցող տնտեսվարողներին պաշտպանելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրականացրել է տնտեսական աջակցության միջոցառումներ: Զբոսաշրջության ոլորտին առնչվող ծրագրերից մեկի շահառու է դարձել 1375 տնտեսվարողներ, որոնց տրամադրվել է 4.7 մլրդ դրամ, ոլորտի մյուս ծրագրի շահառու է դարձել 24 տնտեսվարողներ, որոնց վարկերի սուբսիդավորման ծավալը կազմել է 89.1 մլն դրամ:

Մշակել ենք զբոսաշրջության ոլորտի զարգացման 10-ամյա ռազմավարությունը, որի իրականացման արդյունքում նախատեսվում է մինչև 2030 թվականը ունենալ տարեկան զբոսաշրջային այցելությունների թվի և զբոսաշրջային ծախսերի կայուն 8% աճ՝ համապատասխանաբար տարեկան 4.3 մլն միջազգային այցելու և 3.4 մլրդ ԱՄՆ դոլար, ինչպես նաև լրացուցիչ 85,000 մշտական աշխատատեղ:

Այս ցուցանիշներին հասնելու նպատակով իրականացրել ենք ծրագրեր մարքեթինգի, զբոսաշրջային արդյունքի բազմազանեցման, օդային ուղիների դիվերսիֆիկացման, ենթակառուցվածքների զարգացման ուղղություններով, որոնց արդունքում 2018 թվականին ունեցել ենք միջազգային զբոսաշրջային այցելությունների 11.5% (1,651,782 զբոսաշրջիկ), իսկ 2019 թվականին 14.7 % (1,894,377 զբոսաշրջիկ) աճ: 2019 թվականին ներքին զբոսաշրջությունն աճել է 41%-ով:

Ներդրել ենք Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի վերաբերյալ եռամսյակային առավելագույն ճշգրիտ տվյալներ ապահովող համակարգը, որը ներառում է տեղեկություն ըստ քաղաքացիության, սեռատարիքային խմբերի, սահմանային անցման կետերի, այցի տևողության, ինչպես նաև զբոսաշրջային այցելությունների թվում կրկնվող այցելությունների քանակի:
2018-2019 թվականների ընթացքում դեպի Հայաստան հայտնի բլոգերների, հեռուստաընկերությունների և պարբերականների այցերի արդյունքում լուսաբանվել են երկրի գրավիչ վայրերը, մշակութային արժեքներն ու խոհանոցը՝ ապահովելով Հայաստանի մասին 30-ից ավելի միջազգային տեսանյութեր, 50-ից ավելի հոդվածներներ (National Geographic և այլն):

Իրականացված մարքեթինգային արվաշների արդյունքում գրանցել ենք դեպի Հայաստան զբոսաշրջային հոսքի զգալի աճ թիրախային շուկաներից, մասնավորապես՝ Ռուսաստանից 25.1%, Գերմանիայից՝ 38.5%, Շվեյցարիայից՝ 16.3%, Իսրայելից՝ 11.9%, ԱՄՆ-ից 17.6%, Լեհաստանից 11.3%:

Հիմնանորոգել և վերակառուցել ենք զբոսաշրջային 10 ուղղությունների ենթակառուցվածքներ:

Մշակել ենք զբոսաշրջային փաթեթներ զբոսաշրջային թիրախային խմբերի համար: Արկածային զբոսաշրջության զարգացման նպատակով իրականացրել ենք քայլարշավային, հեծանվային և լեռնադահուկային արահետների քարտեզագրում:

Հայաստանի հասանելիությունը բարձրացնելու նպատակով աշխատանքներ ենք տարել՝ ավելացնելու դեպի Հայաստան թռչող ավիաընկերությունների թիվը, որի արդյունքում 2019-2021 թվականներին Հայաստան է եկել 11 ավիաընկերություն, այդ թվում՝ 3 ցածր արժեք ունեցող (low-cost airlines):
Փոքր ավիացիայի ոլորտի զարգացման նպատակով 2018 թվականին «Արմենիան Հելիքոփթերս» և «Սքայբոլ» ավիաընկերություններին առաջին անգամ տրամադրվել են օդանավ շահագործողի վկայականներ, որով սկիզբ է դրվել փոքր ավիացիայի զարգացմանը:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Հայաստանի ճանաչելիության բարձրացման և շահավետ դիրքավորման նպատակով մշակելու ենք Հայաստանի նոր բրենդ և մարքեթինգային նյութեր, որով ներկայանալու ենք մեր թիրախային շուկաներում և մինչև 2030 թվականը հասնելու ենք մեր թիրախին՝ տարեկան 4.3 մլն միջազգային այցելու:

Արդյունքում ունենալու ենք Հայաստանը ներկայացնող թեմատիկ, սեզոնային վիզուալ բովանդակություն, տպագիր և թվային մարքեթինգային նյութեր, որոնց միջոցով Հայաստանը տեսանելի և գրավիչ զբոսաշրջային ուղղություն է դառնալու:

• Շարունակելու ենք հանրային կարծիք ձևավորվողների (social influencer) և զբոսաշրջային ոլորտի հեռուստատեսային և առցանց հաղորդումներ հրավիրել Հայաստան:

Արդյունքում, համեմատաբար փոքր գումարներ ծախսելով, ունենալու ենք Հայաստանի ներկայացում բազմահազարանոց թիրախային լսարաններում, որը կնպաստի Հայաստանի տեսալիության բարձացմանը և զբոսաշրջիկների թվի աճին:

• Շարունակելու ենք մեծացնել Հայաստան թռչող ավիաընկերությունների թիվը, այդ թվում՝ ցածր արժեք ունեցող (low-cost airlines):

Արդյունքում ավելացնելու ենք ուղիղ չվերթների ուղղությունները, ինչը Հայաստանը դարձնելու է առավել հասանելի և մատչելի զբոսաշրջային ուղղություն՝ մեծացնելով Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը:

• Մինչև 2023 թվականը բարեկարգելու ենք ավելի քան 20 զբոսաշրջային վայրեր և հարակից տարածքներ և բազմազանեցնելու ենք զբոսաշրջության տեսակները՝ մշակութային, բնության, ժամանցային, գործարար, բժշկական, առողջարանային, արկածային զբոսաշրջությունը՝ ընդգրկելով Հայաստանի զբոսաշրջային ներուժը:

Արդյունքում առավել մեծ թվով ենթաոլորտներ, մասնագետներ կընդգրկվեն հյուրընկալության ինդուստրիայում և իրենց չափաբաժինը կստանան զբոսաշրջության եկամտից: Միաժամանակ կունենանք ամենատարբեր հետաքրքրությունների և բյուջեի տեր զբոսաշրջիկների համար առաջարկվող

զբոսաշրջային փորձառություններ, ինչն էլ կբերի ինչպես զբոսաշրջիկների թվի, այնպես էլ նրանց կողմից ծախսվող գումարների աճի:

• Զբոսաշրջային ծավալների աճին զուգընթաց պայմաններ ենք ապահովելու տեղական և միջազգային ներդրումներ կատարելու համար: Սպասարկման և հյուրընկալության ծառայությունների բազմազանեցման և բարելավման ուղղությամբ նախատեսում ենք մեծացնել միջազգային հյուրանոցային բրենդների և միջազգային ցանց հանդիսացող խոշոր հանրային սննդի օբյեկտների թիվը:

Արդյունքում կբավարարենք զբոսաշրջային աճի պահանջարկը, կօժանդակենք ոլորտի տեղական փոքր ու միջին ձեռնարկություններին:

• Մեծացնելու ենք Հայաստանի մարզերում անցկացվող փառատոնների թիվը, ընդլայնվելու ենք մարզային բաշխվածությունը:

Արդյունքում Հայաստանի առավել շատ համայնքներ են ներգրավվելու և ավելացնելու են իրենց եկամուտը զբոսաշրջության զարգացումից: Միաժամանակ մարզերում Հայաստանի մշակույթը, արվեստներն ու արհեստները կապիտալիզացնելու հնարավորություն կստեղծվի, ինչի շնորհիվ կբազմապատկվի փառատոններից ստացվող եկամուտը:

• Ստեղծելու ենք առցանց հարթակ, որտեղից օտարերկրյա զբոսաշրջիկները հեշտությամբ կկարողանան ձեռք բերել դեպի Հայաստան զբոսաշրջային փաթեթներ:

Արդյունքում, ցանկացած ոք, աշխարհի ցանկացած կետից կարող է մտնել այդ կայքը և ընտրել զբոսաշրջային փաթեթ, որը կներառի ավիատոմս, դիմավորում, հյուրանոց, այցելության կոնկրետ վայրեր, ճանապարհում և այլ ծառայություններ: Սա կհեշտացնի զբոսաշրջիկի կյանքը և գրավիչ կդարձնի դեպի մեր երկիր ճանապարհորդությունը:

• Նախատեսում ենք կարգավորել զբոսաշրջության ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը:

Արդյունքում կներդրվեն պարտադիր հաշվառման մեխանիզմներ ոլորտի տնտեսվարողների համար, ինչպես նաև զբոսավարների որակավորման, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների հավաստագրման մեխանիզմներ, ինչն էլ կբերի ոլորտի ծառայությունների և ստանդարտների որակի բարձրացման և բարելավման:

ԱՎԻԱՑԻԱ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Կատարել ենք օրենսդրական փոփոխություններ, այդ թվում՝ օդի տուրքի վերացում նոր ուղղությունների համար, որով բարենպաստ պայմաններ ենք ապահովել միջազգային բյուջետային ավիաընկերությունների հայկական շուկա մուտք գործելու համար: Սրա արդյունքում 2019 թվականին շեշտակի ավելացել են զբոսաշրջության ծավալները:

Իրականացրել ենք կանոնավոր փոխադրումներ օտարերկրյա 9 նոր ավիաընկերությունների հետ: 2020 թվականին 2019 թվականի համեմատ արդեն իսկ ավելացրել էինք 16 նոր ուղղություններ՝ հիմնականում դեպի եվրոպական երկրներ: Համաշխարհային համավարակով պայմանավորված՝ այդ ուղղություններով թռիչքները հետաձգվել են:

2021 թվականին հայկական շուկա են մուտք գործել ևս 2 նոր ավիաընկերություն՝ իրականացնելով կանոնավոր չվերթներ դեպի Թբիլիսի և Կիև:

2019 թվականից ներդրել ենք Հայաստանի և Վրաստանի օդային տարածքին վերաբերող հայեցակարգեր, որով հնարավորություն է տրվել ավիաընկերություններին կատարել օդային մայրուղիներից դուրս թռիչքներ և հատել սահմանը ցակացած կետում, ինչն էլ նպաստել է Հայաստանի օդային տարածքի արդյունավետ օգտագործմանը և թռիչքային ճանապարհների կրճատմանը:

Ավարտել ենք Կապան քաղաքի «Սյունիք» օդանավակայանի վերականգնման աշխատանքները:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Բարելավելու ենք թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակը՝ համապատասխանեցնելով միջազգային ավիացիոն կազմակերպությունների ստանդարտներին:

Արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել թռիչքային և ավիացիոն անվտանգությանը սպառնացող ռիսկերը և աշխատանքը կազմակերպել՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները և դրանից բխող առաջնահերթությունները:

• Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն դարձնելու ենք կառավարության ենթակա մարմին, մարդկային ռեսուրսների հաշվարկների հիման վրա իրականացնելու ենք կառուցվածքային փոփոխություններ և հասնելու ենք կոմիտեի ինքնաֆինանսավորմանը:

Արդյունքում կբացառենք գործառույթների կրկնությունները, կբարձրացնենք մարդկային ռեսուրսների ճիշտ և արդյունավետ կառավարումը: Ինքնաֆինանսավորման արդյունքում հնարավորություն կընձեռվի ներգրավել ոլորտի բարձրակարգ մասնագետներին՝ տարածաշրջանում մրցունակ պայմաններ ստեղծելով, ինչը կնպաստի թռիչքային և ավիացիոն անվտանգության բարձր մակարդակի ապահովմանը:

• Զարգացնելու ենք ընդհանուր նշանակության ավիացիա՝ մշակելով և ներդնելով անօդաչու թռչող համակարգերի շահագործման նոր կանոնակարգեր: Ստեղծելու ենք ընթացակարգեր Հայաստանի Հանրապետությունում թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների ուսումնասիրման և թույլտվության տրամադրման վերաբերյալ:

Արդյունքում կմշակենք քարտեզներ և կսահմանենք թույլատրելի թռիչքային գոտիներ, որոնք հնարավորություն կտան ապահովել օդային տարածքի օգտագործման անվտանգությունը: Թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների վերաբերյալ ընթացակարգերի մշակման և իրականացման արդյունքում ներդրողների մոտ կառաջանա հնարավոր ներդրումներ իրականացնելու և ընդհանուր նշանակության ավիացիան զարգացնելու հետաքրքրություն:

• Ստորագրելու և ներդնելու ենք «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և ԵՄ անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» նախաստորագրված համաձայնագիրը:

Արդյունքում կնպաստենք Եվրոպական Միության հետ առկա հարաբերությունների ամրապնդմանը, թույլ կտանք էլ ավելի տեղայնացնել և ներդնել Եվրոպական Միության ավիացիոն կանոնակարգերը և կդարձնենք ոլորտն ավելի ընկալելի և վստահելի եվրոպական գործընկերների շրջանում:

• Ստեղծելու ենք միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրված մրցունակ տարածաշրջանային ավիաուսումնական կենտրոն:

Արդյունքում Հայաստանի ավիացիոն ոլորտն իր մասնագետներով հանդերձ կդառնա ավելի անկախ՝ ի զորու լինելով նույնիսկ ֆորսմաժորային իրավիճակներում դիմակայել իր առջև ծառացած ցանկացած մարտահրավերի:

• Մրցունակ ավիաընկերությունների հետ վարելու ենք բանակցություններ և նպաստավոր միջավայր ու պայմաններ ենք ստեղծելու դրանց գործունեության համար:

Արդյունքում կունենանք մրցունակ ավիափոխադրողներ, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացմանը:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Արդյունաբերության ոլորտում իրականացվող շինարարության ծավալները 2019 թվականին ընդլայնվել են 2.3 անգամ: Արդյունքում 2019 թվականին իրականացված շինարարության ծավալներում զգալիորեն աճել է մշակող արդյունաբերության կշիռը մինչև 5,6 տոկոս՝ 2008 թվականի 3,1%-ի և 2017 թվականի 2,5%-ի համեմատ:

2019թ.-ին արդյունաբերական շինարարության ծավալներն ավելի քան կրկնակի գերազանցեցին 2008թ.-ի ծավալները՝ 2017 թվականի նկատմամբ աճելով 32%–ով: Իսկ 2019թ.-ին տրանսպորտի բնագավառում իրականացվող շինարարությունը 2017 թ.-ի նկատմամբ ընդլայնվել է 22%-ով:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Մեր քաղաքականության առանցքային ուղղություններից է հանրային և մասնավոր ֆիզիկական կապիտալի կուտակումը և հետևաբար շինարությունը՝ որպես այդպիսի կապիտալի պահանջարկը բավարարող միջոց:
Մեր նպատակն է իրականացնել այնպիսի քաղաքականություն և ծրագրեր, որոնց արդյունքում

- կընդլայնվեն քաղաքացիների տնտեսական կյանքին մասնակցելու և ավելացված արժեք ստեղծելու հնարավորությունները,

- կապահովվի մարդկանց, միջոցների և գաղափարների ներքին շարժունակության աճ,

- կապահովվի մասնավոր ներդրումների եկամտաբերության և միջազգային մրցունակության աճ:

Նպատակներին հասնելու համար պետական բյուջեից ենթակառուցվածքների բարելավմանը տարեկան տրամադրվելիք միջոցներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմելու է 5-6%:

Մինչև 2026 թվականը՝

- հիմնանորոգելու ենք 2500 կմ ճանապարհ,
- սկսելու ենք նախագծել և կառուցել 500 մլն խմ ընդհանուր տարողունակությամբ ջրամբարներ,
- վերանորոգելու ենք 50 բուժհաստատություն,
- վերանորոգելու և կառուցելու ենք 300 դպրոց,
- վերանորոգելու ենք 300 նախադպրոցական կրթական հաստատություն:

Շինարարության ծավալների ընդլանումը լինելու է մասնակցային, երկրի կապիտալի պահանջարկի բացը լրացնելու ենք մեր ներքին ուժերով: Յուրաքանչյուր անձ, յուրաքանչյուր գործարար հնարավորություն կստանա մասնակցելու իր համայնքի, բնակավայրի շենացման գործին:

• Ամբողջապես լուծելու ենք 4-րդ և 3-րդ կարգի վթարային շենքերի հարցը:

Արդյունքում 4-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու ենք, իսկ 3-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերում իրականացնելու ենք ամրացման աշխատանքներ:

• Զգալիորեն կրճատելու ենք և խստագույնս պահպանելու ենք քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման ժամկետները:

Արդյունքում բարելավվելու է ծրագրերի պլանավորումը, առավել արդյունավետ են օգտագործվելու ռեսուրսները, նվազելու են շինարարության ֆինասնավորման ծախսերը:

• Արդիականացնելու ենք քաղաքաշինական ստանդարտները:

Արդյունքում կխթանենք ժամանակակից տեխնոլոգիաների և կառուցակարգերի կիրարկումը: Կբարելավվի շինարարական արդյունքի գին/որակ հարաբերակցությունը:

• Յուրաքանչյուր խոշոր համայնքի համար հաստատելու ենք հստակ քաղաքաշինական պահանջներ սահմանող գոտիների քարտեզներ, որոնք հասանելի կլինեն առցանց: Ապահովելու ենք ոլորտի վերաբերյալ տեղեկությունների առավելագույն հասանելիություն՝ գներ, կարգավորումներ և կանխատեսումներ:

Արդյունքում բարձրանալու են ներդրումային ծրարգրերի գեներացման կարողությունները:

• Բարձրացնելու ենք համատիրությունների կառավարման արդյունավետությունը:

Արդյունքում բարելավելու ենք բնակելի տարածքների որակը և օգտակար կյանքի տևողությունը:

• Ապահովելու ենք բնակելի տարածքների առավելագույն հասանելիությունը երիտասարդ ընտանիքների համար՝ նվազեցնելով կանխավճարը, վճարը և տոկոսադրույքը, ինչպես նաև երկարաձգելով մարման ժամանակաշրջանը:

Արդյունքում կբարձրանան երիտասարդների՝ իրենց տնտեսական և սոցիալական կյանքը պլանավորելու և ըստ այդմ ստեղծարար ներուժը իրացնելու կարողությունները:

• Խթանելու ենք էներգաարդյունավետ և սեյսմակայուն շենքերի կառուցումը:

Արդյունքում կբարձրանա Հայաստանի էներգետիկ անկախությունը, կնվազեն քաղաքացիների կոմունալ ծախսերը, աղետների արդյունքում կնվազի կորստի հավանականությունը:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Նախորդ 3 տարիներին տարեկան միջին ճանապարհաշինական աշխատանքները ավելի քան 3.5 անգամ գերազանցել են դրան նախորդած 10 տարիների միջին ծավալները: Նորոգել և հիմնանորոգել ենք շուրջ 1300 կմ ճանապարհ: Նախորդ 10 տարիներին այդ թիվը եղել է 1681 կմ: Այս ճանապարհներից 1030 կմ-ը կառուցել ենք պետական բյուջեի միջոցներից, մինչդեռ 2008-2017 թվականներին պետական միջոցներից ֆինանսավորվել է ընդամենը 742 կմ: Ճանապարհային ցանցում մինչև 2017 թվականն արված ներդրումներն ու կատարված աշխատանքներն իրականացվել են մեծապես միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային միջոցներից:

Պետական բյուջեի միջոցներով սահմանամերձ 11 համայնքներում հիմնանորոգել ենք շուրջ 20 կմ ճանապարհ և 3 կամուրջ:

Մարդկանց կենսապահովման պայմանների բարելավումը և կենսամակարդակի բարձրացումը եղել է մեր ուշադրության կենտրոնում: Ճանապարհների կառուցման միջոցով ցանկացել ենք ապահովել մարզկենտրոնների հետ կապը և խթանել համայնքներում սոցիալական և տնտեսական կյանքը: Օրինակ՝ Վայոց ձորի մարզի Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերում ապրում է 650 մարդ: Այս գյուղեր տանող 14 կմ ճանապարհը կապիտալ վերանորոգել ենք՝ ծախսելով 2 մլն 300 հազար դոլար՝ ամեն մարդու հաշվով ծախսել ենք 3700 դոլար: 1980 թվականից հետո Խնձորուտ համայնքում ճանապարհ չէր կառուցվել: Սա է մեր որդեգրած քաղաքականությունը մեր քաղաքացիների նկատմամբ:

Ճանապարհների վիճակի բարելավմանը զուգընթաց մեծ կարևորություն ենք տվել նաև ճանապարհային անվտանգության բարելավման համալիր միջոցառումներին: Հայաստանի ընդհանուր օգտագործման ճանապարհներին 2 տարվա ընթացքում տեղադրվել են շուրջ 7900 ճանապարհային նշաններ, միջպետական նշանակության ճանապարհներին տեղադրվել են շուրջ 15 կմ արգելափակոցներ:

2019 թվականից իրականացնում ենք ճանապարհային անվտանգության բարելավման ծրագիրը, որի շրջանակում մեկնարկել են 40 ամենավթարավտանգ ճանապարհային հատվածների վերանորոգման և վտանգների չեզոքացման աշխատանքները:
2021 թվականի համար արդեն իսկ սկսել ենք 490 կմ ճանապարհի և 20 կամուրջների հիմնանորոգման և նորոգման աշխատանքները:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Արդիականացնելու ենք Հայաստանի ողջ ճանապարհային ցանցը:

Արդյունքում ունենալու ենք անվտանգ, արդյունավետ, էկոլոգիապես հնարավորինս անվնաս ճանապարհային ցանց, որը կբավարարի նաև միջազգային փոխադրողների պահանջներին: Տնտեսվարողների համար կկրճատվեն երթևեկության տևողությունը և տրանսպորտային ծախսերը: Իր հերթին սա կխթանի առևտուրը և տնտեսական զարգացումը: Համայնքային և մարզային բնակչության համար կապահովենք հաղորդակցություն կենսական նշանակության օբյեկտների և մարզկենտրոնների հետ:

• Շարունակելու ենք նորոգել, հիմնանորոգել միջպետական և համայնքային ճանապարհներ, կառուցելու ենք նոր թունելներ և կամուրջներ:

2021 թվականին սկսելու և 2026 թվականին ավարտին ենք հասցնելու «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի» Սիսիանից մինչև Ագարակ շուրջ 105 կմ ճանապարահատվածի, այդ թվում՝ տարածաշրջանում 2 խոշոր թունելների շինարարությունը: Կկառուցենք Բարգուշատի շուրջ 9 կմ երկարության, ինչպես նաև Քաջարանի 7 կմ երկարության թունելները: Մինչև 2024 թվականն ավարտին ենք հասցնելու Աշտարակից Գյումրի շուրջ 90 կմ ճանապարհահատվածի շինարարությունը: Սկսելու ենք նաև Հյուսիս-հարավ միջանցքի Արտաշատ-Սիսիան 175 կմ ճանապարհահատվածի և Գյումրի-Բավրա շուրջ 60 կմ ճանապարհահատվածի կառուցումը և մինչև 2026 թվականը վերակառուցելու ենք այս հատվածների զգալի մասը: Ավարտին ենք հասցնելու Մ6 Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն միջպետական 52 կմ ճանապարհի վերակառուցումը: Մինչև 2026 թվականը վերանորոգելու ենք 2500 կմ ճանապարհ:

Արդյունքում բարեկարգ ճանապարհային ենթակառուցվածքները կնպաստեն միջազգային բեռնափոխադրումների և առևտրի ծավալների աճին, ինչպես նաև Վրաստանի հետ տնտեսական հարաբերությունների բարելավմանը: Տեղական նշանակության ճանապարհային ցանցի ամբողջ վերականգնումը կբերի գյուղական համայնքների բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, տարածաշրջանային համաչափ զարգացմանը: Տարեկան կունենանք շուրջ 500 կմ վերանորոգված ճանապարհ:

• Բարձրացնելու ենք սպասարկման տեխնիկական պահանջները, ավելացնելու ենք ճանապարհների պահպանման ծախսերը և ձևավորելու ենք ճանապարհային ցանցի կառավարման ինստիտուցիոնալ կայուն համակարգ:

Արդյունքում կունենանք ավելի որակյալ, երկարակյաց ճանապարհներ և համակարգված ոլորտ: Կբարձրանա կապիտալ ծախսերի արդյունավետությունը:

• Շարունակելու ենք նյութերի և արտադրության որակի փորձարկումների լաբորատորիաների վերազինումը՝ ներդնելով և կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ և մեթոդներ:

Արդյունքում կունենանք անհրաժեշտ պայմաններ միջազգային ստանդարտներին համապատասխան ճանապարհներ կառուցելու և պահպանելու համար:

• Վերացնելու ենք անվտանգ երթևեկությանը սպառնացող խախտումները, ընդհուպ՝ ճանապարհային նշանների գողության դեպքերը կանխելու

նպատակով նախատեսում ենք խստացնել պատասխանատվությունը ճանապարհին վնաս հասցնելու համար:

Արդյունքում կունենանք պատշաճ կահավորված և անվտանգ ճանապարհներ:

• Առաջիկա ջանքերն ուղղվելու են ճանապարհատրանսպորտային պատահարների կրճատմանը: Ծարունակելու ենք գույքագրել և վերացնել հանրապետության բոլոր ճանապարհների «սև կետերը»: Ստեղծելու ենք վթարների վերաբերյալ միասնական բազա, որը կներառի ճանապարհային անվտանգության բոլոր շահագրգիռ կողմերից վթարների վերաբերյալ ներկայացված տվյալները:

Արդյունքում կունենանք փաստերի վրա հիմնված մշակվող քաղաքականություն, խնդիրների արագ արձագանքման համակարգ:

• Իրականացնելու ենք մասնագետների նախապատրաստման և ինժեներական գիտելիքների և կարողությունների ընդլայնմանը միտված կրթական և միջազգային փորձի փոխանակման ծրագրեր:

Արդյունքում կունենանք բարձր որակավորում ունեցող մասնագետներ և ավելի քիչ պատվիրակված նախագծեր:

• Իրականացնելու ենք կադաստրային քարտեզների ճշգրտում:

Արդյունքում կլուծենք ենթակառուցվածքային խոշոր ծրագրերի իրագործման հիմնական խոչընդոտներից մեկը՝ կադաստրային քարտեզների անհամապատասխանությունը, որը կերաշխավորի գույքային իրավունքների իրացումը և դրական ազդեցություն կունենա կառուցապատման գործընթացի վրա:

• Ներդնելու ենք մարզային ուղևորափոխադրումների կանոնավոր և արդիական համակարգ: Մշակելու և քարտեզավորելու ենք բոլոր երթուղիները, կազմելու ենք նոր չվացուցակներ և ուղեգծեր:

Արդյունքում հանրապետության բոլոր բնակավայրերը կանոնավոր երթուղիներով կապվելու են մարզկենտրոնների կամ մարզի այլ խոշոր բնակավայրերի հետ, այնուհետ մայրաքաղաքի և հարևան մարզկենտրոնների հետ: Ստեղծվելու է հարթակ, որտեղից հնարավորություն է լինելու ամբողջական տեղեկություններ ստանալ երթուղիների վերաբերյալ, այդ թվում մեկնման ժամերի, սկզբնակետերի/վերջնակետերի, ուղեգծերի և այլնի մասին:

ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2020 թվականին 22.8 մլն խմ քիչ ջրով իրականացվել է 4800 ավել հեկտարի ոռոգում, քան 2017 թվականին: Ոռոգման ջրի համար էլեկտրաէներգիայի խնայողությունը կազմել է 30 մլն կՎտ/ժ: Իսկ ոռոգման ջրի կորուստների մակարդակն իջել է 5%-ով: Ընդամենը մեկ տարվա ընթացքում կառուցել ենք 6 կմ ջրագիծ, շուրջ 3 կմ տնային միացումներ: Ավարտին ենք հասցնում Երևանում ոռոգման ցանցի կառուցումը: 2019 թվականին մեկնարկել է Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարի ոռոգման ջրթողից ինքնահոս ջրատարի կառուցման գործընթացը:

Սկսել ենք Հայաստանի 6 մարզերում 11 քաղաքի և 47 գյուղի 80,000 բնակչի 24-ժամյա ջրի մատակարարման և բարելավված ջրահեռացման համակարգերի կառուցման գործընթացը:
Իրականացրել ենք 13 Ջ/Կ հեռացնող ջրանցքների վերականգնում՝ մոտ 51 կմ երկարությամբ, և 4 ինքնահոս համակարգերի կառուցում:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Նախագծելու և կառուցելու ենք 500 մլն խմ ընդհանուր տարողունակությամբ ջրամբարներ:

• Իրականացնելու ենք «Արփա-Սևան» թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները:

Արդյունքում ապահովելու ենք թունելի հուսալի և անխափան շահագործումը, որի արդյունքում տեղի կունենա Սևանա լճի մակարդակի աստիճանական բարձրացում և կապահովվի Սևանա լճի էկոհամակարգի հավասարակշռումը:

• 2022 թվականին ավարտին ենք հասցնելու Վեդու ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցման աշխատանքները:

Արդյունքում կապահովենք Արարատի մարզի շուրջ 3200 հեկտար հողատարածքի անխափան ոռոգումը, որից 300 հեկտարը նոր ոռոգելի հողատարածքներ են: Ինքնահոս համակարգի ներդրման շնորհիվ զգալիորեն կտնտեսվեն էլեկտրաէներգիայի ծախսերը: Վեդու ջրամբարի շահագործման արդյունքում Սևանա լճից տարեկան շուրջ 18 մլն խմ պակաս ջրառ կիրականացվի:

• Սկսելու ենք Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցումը:

Նախատեսվում է կառուցել Կապսի ջրամբարը մինչև 60 մլն խմ ընդհանուր

ծավալով: Ջրամբարի կառուցմամբ ազդակիր գոտում անխափան կոռոգվի 7000 հեկտար հողատարածք: Ինքնահոս ոռոգման համակարգի կառուցմամբ, շուրջ 2280 հեկտար հողատարածքի մեխանիկական ոռոգումը կփոխարինվի ինքնահոս ոռոգմամբ, որի արդյունքում կտնտեսվի 1.3 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Ինչպես նաև կբարելավվի ներկայիս ջրապահովությունը, որի արդյունքում կավելանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

• Կառուցելու ենք Կապսի ջրամբարից մինչև Թալինի մայր ջրանցքի ոռոգման ջրատարը:

Արդյունքում կապահովենք Արագածոտնի և Արմավիրի մարզերում ջրանցքի տիրույթում գտնվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ջրամատակարարումը:

• Մինչև 2023 թվականը Գեղարքունիքի մարզում ավարտելու ենք Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմումը և սկսելու ենք ջրամբարի կառուցման աշխատանքները:

Ջրամբարի կառուցմամբ ազդակիր գոտում ոռոգվող հողատարածությունները կավելանան շուրջ 3122 հեկտարով: Ջրամբարից ինքնահոս ջրամատակարարման շնորհիվ տարեկան կտնտեսվի շուրջ 1.3 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա:

• Մինչև 2023 թվականը ավարտելու ենք Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմումը և սկսելու ենք ջրամբարի կառուցման աշխատանքները:

Ջրամբարի կառուցմամբ ազդակիր գոտում ոռոգվող հողատարածությունները կավելանան շուրջ 1080 հեկտարով: Ջրամբարից ինքնահոս ջրամատակարարման շնորհիվ տարեկան կտնտեսվի շուրջ 2.5 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա:

• Մինչև 2023 թվականի ավարտը կառուցելու ենք Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգը:

Արդյունքում Հեր-Հերի ջրամբարում տարեկան կուտակվող շուրջ 26 մլն խմ ջուրը, որը մինչ օրս չի օգտագործվել ոռոգման նպատակով, անարգել դուրս չի գա հանրապետության սահմաններից և կօգտագործվի ոռոգման նպատակներով: Ինչպես նաև հնարավոր կլինի ապահովել Վայոց ձորի մարզի շուրջ 12 համայնքների 1626 հեկտար հողերի ինքնահոս եղանակով ոռոգման ջրի մատակարարումը: Հնարավոր կլինի նաև Կեչուտի ջրամբարից ոռոգման նպատակով վերցվող ջրաքանակը «Արփա-Սևան» թունելով տեղափոխել Սևանա լիճ:

• Նախագծելու և սկսելու ենք Վայոց Ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցումը:

Արդյունքում Արենի համայնքում կիրականացնենք կայուն ջրամատակարարում և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 80 հեկտար հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով, կխնայենք 0.166 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա:

• Նախագծելու և սկսելու ենք Վայոց Ձորի Խնձորուտի ջրամբարի կառուցումը:

Ջրամբարի կառուցմամբ Վայքի շրջանում կիրականացնենք կայուն ջրամատակարարում և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 25

հեկտար հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով, և կխնայվի շուրջ 0.025 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Ջրամբարի կառուցմամբ կավելանան նաև շուրջ 1500 հեկտար հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 4.2 մլն խմ ջուր:

• Նախագծելու և սկսելու ենք Վայոց Ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցումը:

Ջրամբարի կառուցմամբ Եղեգնաձորի շրջանում կիրականացնենք կայուն ջրամատակարարում և կավելանա նաև շուրջ 800 հեկտար հողատարածք, որի տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 2.3 մլն խմ ջուր:

• Նախագծելու և սկսելու ենք Վայոց Ձորի Խաչիկի ջրամբարի կառուցումը:

Արդյունքում Արենիի շրջանում կիրականացնենք կայուն ջրամատակարարում և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 163 հեկտար հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով, և կխնայենք շուրջ 1.2 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա:

• Նախագծելու և սկսելու ենք Քասախի ջրամբարի կառուցումը:

Արդյունքում Էջմիածնի շրջանում կիրականացնենք կայուն ջրամատակարարում և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող Ակնալիճ համայնքի 380 հեկտար հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով, և կխնայենք շուրջ 4.3 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Միաժամանակ Սևան-Հրազդան համակարգից կիրականացնենք շուրջ 12 մլն խմ պակաս ջրառ:

• Նախագծելու և սկսելու ենք Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցումը:

Արդյունքում Բաղրամյանի շրջանի 5 համայնքների ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող շուրջ 750 հեկտար հողատարածքներ կոռոգվեն ինքնահոս եղանակով: Արդյունքում կիրականացնենք կայուն ջրամատակարարում և տարեկան կխնայենք շուրջ 1.9 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, ոռոգվող հողատարածքները կավելանան շուրջ 675 հեկտարով:

• Նախագծելու և սկսելու ենք Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցումը:

Արդյունքում Բերդի շրջանում կիրականացնենք կայուն ջրամատակարարում, և կավելանա շուրջ 300 հա հողատարածքների ոռոգումը, որոնց տարեկան ջրապահանջարկը կլինի շուրջ 1 մլն խմ ջուր:

• Նախագծելու և սկսելու ենք Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցումը:

Արդյունքում Նոյեմբերյանի շրջանում կիրականացնենք կայուն ջրամատակարարում, և կավելանա շուրջ 670 հեկտար հողատարածքների ոռոգումը, որոնց տարեկան ջրապահանջարկը կլինի շուրջ 2.9 մլն խմ ջուր:

• Նախագծելու և սկսելու ենք Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցումը:

Արդյունքում Արթիկի շրջանում ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 32 հեկտար հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով և կխնայենք շուրջ 0.1 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Արդյունքում կիրականացնենք կայուն ջրամատակարարում, և կավելանա նաև շուրջ 400 հեկտար հողատարածք, որոնց տարեկան ջրապահանջարկը կլինի շուրջ 1.2 մլն խմ ջուր:

• Նախագծելու և սկսելու ենք Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցումը:

Արդյունքում ազդակիր գոտում կիրականացնենք կայուն ջրամատակարարում, և կավելանա շուրջ 1300 հեկտար ոռոգելի հողատարածք: Ջրամբարի կառուցումը կնպաստի բարձրարժեք մշակաբույսերի մշակության աճին:

• Իրականացնելու ենք շուրջ 10 հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների ծրագրեր՝ մաքրելով գետերի և հեղեղատարների հուները, ինչպես նաև իրականացնելու ենք ափերի ամրացման աշխատանքներ:

Արդյունքում կունենանք գետերի և հեղեղատարների մաքուր հուներ, ինչպես նաև կխուսափենք վարարման հետևանքով առաջացող անցանկալի երևույթներից:

• Շարունակելու ենք իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման աշխատանքները:

Արդյունքում գրունտային ջրերի մակարդակի իջեցմամբ կբարելավվի աղակալած և գերխոնավ գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մելիորատիվ վիճակը, և կբացառվի տարափոխիկ հիվանդությունների առաջացումը և տարածումը:

• 2023 թվականը ավարտելու ենք միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման աշխատանքները:

«Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրով» ներկայումս իրականացնում ենք մեխանիկական ոռոգման փոխարինումն ինքնահոսի, որոշ մայր ջրանցքների և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում: Ոռոգման համակարգերի կառուցմամբ տարեկան կտնտեսենք 7.3 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, ոռոգելի հողատարածքները կավելանան 1373 հեկտարով: Կվերականգնենք 5 մարզերի 105 բնակավայրերում շուրջ 259.1 կմ երկարությամբ ներտնտեսային համակարգեր: Կվերականգնենք 8.2 կմ երկարությամբ 4 մայր և 54.1 կմ երկարությամբ 22 երկրորդ կարգի ջրանցքների ծայրահեղ քայքայված և վթարային հատվածները: Արդյունքում կընդլայնվի ոռոգման ջրի մատուցման հասանելիությունը, կորուստները կկրճատվեն շուրջ 7%-ով և կստեղծվեն ոռոգվող հողատարածքների ավելացման պայմաններ:

• Ավարտին ենք հասցնելու Գեղարդալճի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցումը:

Արդյունքում կայուն ոռոգման ջրով կապահովենք Կոտայքի մարզի Հացավան, Ողջաբերդ, Գեղադիր, Ջրվեժ և Ձորաղբյուր համայնքները:

• Ավարտին ենք հասցնելու Երևան քաղաքի Եղվարդի խճուղու միջնամասից մինչև Հալաբյան փողոցի վերջնամաս ոռոգման ցանցի կառուցումը:

Արդյունքում կապահովենք Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների շուրջ 77 հեկտար և Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի շուրջ 100 հեկտար կանաչ տարածքների ոռոգման համար անհրաժեշտ ջրաքանակը:

• Սևանա լճի ափամերձ տարածքներում ջրահեռացման համակարգերի կառուցմամբ ու վերակառուցմամբ, կեղտաջրերի մաքրման նոր

տեխնոլոգիաների ներդրմամբ բարելավելու ենք Սևանա լճի ջրի որակը:

Արդյունքում կվերականգնվի Սևանա լճի էկոհամակարգը, և կբարելավվեն ջրի որակական հատկանիշները, ինչպես նաև աստիճանաբար կլուծվի լճում տեղի ունեցող անցանկալի երևույթների խնդիրը:

• Շարունակելու ենք ջրային պաշարների մակերևութային հոսքի կառավարման նպատակով ջրամբարաշինության ծրագրերի իրականացումը:

Արդյունքում ունենալու ենք ջրային ռեսուրսների լրացուցիչ պաշար և ջրային հոսքերի կառավարման արդյունավետ համակարգ՝ հնարավորություններ ստեղծելով նաև ինքնահոս ոռոգման ջրի մատակարարման համար: Ծղթայական ազդեցությամբ կընդլայնվեն մշակվող տարածքները, գյուղատնտեսությունը կզարգանա, կնվազի գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքը, կաճեն գյուղմթերքի արտահանման ծավալները:

• Մշակելու և ներդնելու ենք ոռոգման ջրի հաշվառման հստակեցման և վարձավճարների հավաքագրման արդյունավետ մեխանիզմ:

Մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: Ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերի գույքագրման արդյունքում ձեռք ենք բերել նախագծանախահաշվային փաստաթղթերը և մինչև 2023 թվական կավարտենք SCADA համակարգով հագեցած շուրջ 2041 ջրաչափական սարքավորումներով կահավորումը: Արդյունքում կբարձրանա հաշվառելիությունը, կապահովվի ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ինչպես նաև ֆինանսական կայունությունը:

• Մեծացնելու ենք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը:

Ինստիտուցիոնալ զարգացման նպատակով պատրաստելու ենք մասնագետներ և զարգացնելու ենք մասնագետների կարողությունները:

• «Չսպասարկվող» բնակավայրերում ջրամատակարարման ծառայությունն իրականացնելու ենք բացառապես լիցենզավորված, մասնագիտացված կազմակերպությունների կողմից և այդ տարածքներում իրականացնելու ենք ներդրումային ծրագրեր:

Արդյունքում «չսպասարկվող» բնակավայրերում ջրամատակարարման ծառայությունները կիրականացվեն լիցենզավորված կազմակերպությունների կողմից՝ իրականացնելով կայուն, անվտանգ և ապահով ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ:

• Բարձրացնելու ենք ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մակարդակը:

Արդյունքում կապահովվի խմելու և կոմունալ կենցաղային կեղտաջրերի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին:

• Իրականացնում ենք խմելու ջրի ոլորտում ներդրումային ծրագրեր:

Մինչև 2023 թվականի տարեվերջ կիրականացնենք 6 մարզերի 11 քաղաքների և 41 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման

համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքներ, բաշխիչ ցանցերի վերականգնում, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի (Աթոյան, Ծիրակացի, Ղուկասյան փողոցների) կոյուղու համակարգի վերականգնում, Վանաձոր, Արմավիր քաղաքների ջրամատակարարման համակարգի նորացման, ինչպես նաև 3 օրվա կարգավորիչ ջրամբարների կառուցման աշխատանքներ:

• Երևան քաղաքում կավարտենք ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման նպատակով ներդրումային ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, 30 մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքներ:

• Ներդնելու ենք մաքրման կայաններից արտահոսող ջրերի որակական մոնիթորինգի համակարգ:

Արդյունքում կանոնակարգելու ենք մաքրված կենցաղային կեղտաջրերը տարբեր նպատակներով վերաօգտագործելու, ինչպես նաև մաքրելուց հետո առաջացած ենթահումքն օգտահանելու գործընթացները՝ եվրոպական չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև ապահովելու ենք պատշաճ վերահսկողություն:

• Ստեղծելու ենք պայմաններ կոյուղու ցանցին չմիացված տնտեսվարողներին կեղտաջրերը մաքրող անհատական կառուցվածքներ և սարքավորումներ ունենալու և մասնագիտացած կազմակերպությունների միջոցով այն իրականացնելու համար:

Արդյունքում հասնելու ենք նրան, որ հանրապետության ողջ տարածքում տնտեսվարողների կողմից բնություն արտանետվող կեղտաջրերի ծավալները նվազեն:

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետճգնաժամային արագ և համապարփակ վերականգնումը պահանջելու է մի շարք շրջանակային բարեփոխումներ՝ ուղղված տնտեսության ներուժի իրացմանը: Ներդրումների ծավալների և համատարած արտադրողականության աճը կարող է տեղի ունենալ միայն բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի առկայության պայմաններում: Ներդրումային և գործարար միջավայրի ձևավորման առանցքում լինելու են՝

- հարկային և մաքսային քաղաքականությունը,
- ֆինանսների հասանելիությունը,
- ձեռներեցության խթանումը՝ հատկապես մարզերում,
- աշխատանքային և գործարար հարաբերությունների ճկունությունը,
- ստվերային տնտեսության կրճատմանն ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանն ուղղված հարկային քաղաքականությունը:

Պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է ուղղվի տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: Այս նպատակների իրականացման տեսանկյունից մենք կարևորելու ենք ներդրողների համար արդար, ընկալելի և կանխատեսելի հարկային միջավայրի ձևավորումը:

Միևնույն ժամանակ, հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունն ու հասցեականությունը բարձրացնելու և այդ ռեսուրսները հանրօգուտ ու համապետական նշանակություն ունեցող ծրագրերի վրա ծախսելու, ինչպես նաև հարկաբյուջետային կայունությունն ապահովելու նպատակով քայլեր ենք իրականացնելու հարկային եկամուտների ընդլայնման ուղղությամբ:

Ֆինանսների հասանելիությունը տնտեսական զարգացման առանցքային հիմնաքարն է: Հայաստանում արդեն իսկ ձևավորվել է կայուն բանկային համակարգ, մեր հաջորդ թիրախը լինելու է կապիտալի շուկայի զարգացումը: Ձեռներեցության խրախուսումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ստեղծարար ներուժի իրացման բանալին է լինելու: Մեր նպատակն է խրախուսել նորարարական գաղափարների իրականացման միջոցով եկամտի այլընտրանքային աղբյուրների ստեղծումը և հետճգնաժամային շրջանում Հայաստանի մրցակցային առավելությունների բացահայտումը:

Աշխատանքային և գործարար հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը պետք է հանգեցնի հանրությանը հասանելի միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը և վերջիններիս հասանելիությանը առավել մրցունակ ծրագրերի իրականացման համար:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2020 թվականից ներդրել ենք միկրոձեռնարկատիրության հարկման համակարգը, որով մինչև 24 մլն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսները գրեթե ազատվել են բոլոր հարկերից:

2020 թվականից նվազեցրել ենք եկամտային հարկի դրույքաչափը՝ միասնական 23% դրույքաչափ սահմանելով: Մինչև 2023 թվականը եկամատային հարկը աստիճանաբար նվազելու է տարեկան 1%-ով՝ 2023 թվականի հունվարի 1-ից դառնալով 20%: Մինչև այս փոփոխությունը գործում էր եռաստիճան եկամտային հարկ համակարգը՝ 23%, 28% և 36% դրույքաչափերով: 2020 թվականից շահութահարկի դրույքաչափը 20%-ից նվազել է մինչև 18%:

Օտարերկրյա քաղաքացիների՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող շահաբաժնի մասով շահութահարկը սահմանվել է 5%՝ նախկինում սահմանված 10% դրույքաչափի փոխարեն:

Հարկային մարմնի կողմից կիրառվող արգելանքի շեմը 500,000 դրամից բարձրացրել ենք՝ դարձնելով 1.5 մլն դրամ, նվազեցրել ենք տույժերի տոկոսները: Բարելավել ենք շահութահարկի կանխավճարների մեխանիզմը՝ հօգուտ հարկ վճարողների: Վերջինս հնարավորություն է տվել շահութահարկի կանխավճարները նվազագույն չափով կատարելու արդյունքում ստեղծել լրացուցիչ շրջանառու միջոցներ տնտեսվարողների համար: Կորոնավիրուսի հետևանքները մեղմելու նպատակով օրենքով ազատել ենք տնտեսվարողներին 2020 թվականին մեկ եռամսյակ կանխավճար կատարելու պարտավորությունից:

Եթե 2018 թվականի դրությամբ ավելացված արժեքի հարկի վերադարձման ժամկետ էր սահմանված 6 ամիս, Հեղափոխությունից անմիջապես հետո այս ժամկետը դարձրել ենք 3 ամիս, ապա բոլորովին վերջերս՝ 1 ամիս: Այսինքն՝ այսօր օրենսդրությամբ արձանագրված է, որ ավելացված արժեքի հարկի գծով կառավարությունը 1 ամսից ավելի իրավունք չունի պարտք լինել տնտեսվարողին: Ինչպես նաև պարզեցված ընթացակարգով վերադարձման ենթակա առավելագույն գումարը եռամսյակային 40 մլն դրամի փոխարեն դարձրել ենք 120 մլն դրամ:

Հարկ է նշել, որ 2021 թվականի մայիսի 1-ի դրությամբ պետությունը բիզնեսին ժամկետանց պարտք չունի. այդ պարտքը զրոյացվել է: Բիզնեսից շուրջ 500 մլն դոլար օտարված գումարը 3 տարվա ընթացքում վերադարձրել ենք բիզնեսին:

Ներդրել ենք գույքահարկի նոր՝ առավել պրոգրեսիվ համակարգ:

Ներդրումները խթանելու համար սահմանել ենք հիմնական միջոցների և սարքավորումների ձեռքբերման գծով ծախսերի արագացված ամորտիզացիայի հնարավարություն: Տնտեսվարողները ծախսագրումը կարող են իրականացնել ոչ թե տվյալ հարկային տարում միանգամից, այլ որոշակի ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր միավորի համար: Օրինակ՝ շենքերի և շինությունների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը 20 տարի է, արտադրական սարքավորումներինը՝ 5 տարի և այլն: Այս գործընթացը կազմակերպելու համար սահմանել ենք ավելի կարճ ժամկետ՝ ընդհուպ մինչև 1 տարի:

Գյուղատնտեսական կոոպերատիվներին օրենքով հավասարեցրել ենք գյուղատնտեսական մթերք արտադրողներին՝ հնարավորություն տալով օգտվել հարկային արտոնություններից:

Օրենքով սահմանել ենք օրինապահ հարկ վճարող հասկացությունը և այն արտոնությունների շրջանակը, որից կարող են օգտվել օրինապահ հարկ վճարողները:

Ընդունել և իրականացնում ենք կապիտալի շուկայի զարգացման ծրագիրը, ՓՄՁ ռազմավարությունը և գործարար միջավայրի բարելավման ծրագիրը:

Կապիտալի շուկայի զարգացման համար բարելավել ենք հարկման պայմանները մասնավոր պարտատոմսեր և բաժնետոմսեր թողարկելու համար:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Ընդլայնելու ենք սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմը՝ մարզերում սկսնակ նորարար ձեռներեցների համար զգալիորեն բարձրացնելով ֆինանսների, ձեռնարկատիրական հմտությունների ու կապերի, ինչպես նաև գիտելիքի հասանելիությունը:

Արդյունքում մինչև 2026 թվականը մարզերում գործունեություն սկսող տարեկան 500 տնտեսվարողներ կլինեն նոր սերնդի ՓՄՁ՝ զինված ժամանակակից գիտելիքով և գործարար կապերով: Ցուցանիշի մակարդակի 10 տարվա պահպանման պարագայում սկսվելու է գործարար մշակույթի վերափոխման գործընթաց: Աճելու է բնակչության տնտեսական ակտիվությունը մարզերում, ստեղծվելու են եկամտի այլընտրանքային աղբյուրներ, ապահովվելու է աճի ներառականությունը:

• Կապիտալի շուկայի զարգացման նպատակով իրականացնելու ենք համապարփակ բարեփոխումների ծրագիր՝ ուղղված շուկայական ենթակառուցվածքների տեխնիկական և իրավական արդիականացմանը:

Արդյունքում բարձրանալու է տնտեսության մեջ առկա միջոցների տեղաբաշխման արդյունավետությունը, աճելու է ֆինանսների հասանելիությունը առավել թափանցիկ և վստահելի ընկերությունների համար:

• Աջակցելու ենք կորպորատիվ կառավարման կանոնների կիրարկմանը:

Արդյունքում կառավարման որակի և թափանցիկության բարձրացման հետևանքով աճելու է ընկերությունների գրավչությունը ներդրողների համար:

• Գործարկելու ենք ներդրողների հետ փոխհարաբերությունների և վերջիններիս սպասարկման հստակ ինստիտուցիոնալ համակարգ:

Արդյունքում ներդրողների մոտ նվազելու է անորոշության գործոնը, ինչը կբարձրացնի Հայաստանի Հանրապետության գրավչությունը: Համակարգի գործարկումը կարագացնի գաղափարից ներդրում գործընթացը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ օտարերկրյա ուղիղ ներդրումների և տեղական ներդրումների ներգրավման համար:

• Մշակելու և գործարկելու ենք տնտեսական կյանքին կանանց մասնակցությունը խրախուսող գործիքակազմ՝ աջակցելով կարողությունների և գործարար կապերի ձևավորմանն ու զարգացմանը:

Արդյունքում կանանց տնտեսական ակտիվությունը կաճի, ինչն իր հերթին առանցքային է ընդհանուր տնտեսական աճի և ներառականության ապահովման տեսանկյունից:

• Շարունակելու ենք սնանկության համակարգի բարեփոխումները: Մնանկությունից մինչև միջոցների վերադարձ միջին տևողությունը չի գերազանցելու 1 տարին: Զգալիորեն բարելավելու ենք սնանկության համակարգի վստահելիությունը՝ սնանկության համակարգի ամրության ցուցիչի արժեքը գերազանցելու է 11 միավորը:

Արդյունքում կբարձրանա միջոցների օգտագործման արդյունավետությունը և ֆինանսների հասանելիությունը:

• Պետական մասնակցության միջոցով խրախուսելու ենք ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի իրականացումը:

Արդյունքում խոշոր, լրացուցիչ գիտելիք ստեղծող ներդրումային ծրագրերի ռիսկերը զգալիորեն կնվազեն, ինչն իր հերթին կբարձրացնի Հայաստանի գրավչությունը տարածաշրջանային նշանակության ներդրումային ծրագրերի իրականացման համար:

• Հարկման տարբեր համակարգերի միջև սահմանելու ենք համադրելի և արդարացի հարկային բեռ:

Արդյուքնում դրանով իսկ ապահովելու ենք մրցակցային հարկային միջավայր, ինչպես նաև կրճատելու ենք անարդյունավետ, հասցեականություն չունեցող և պետական բյուջեի հարկային եկամուտների չհիմնավորված կորստի հանգեցնող հարկային արտոնությունները:

• Ներդնելու ենք ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման գործուն համակարգ:

Արդյունքում կնպաստենք հարկման ենթակա, սակայն գործնականում չհարկվող եկամուտների հարկման գործիքակազմի զարգացմանը, ինչպես նաև կնպաստենք միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող «սոցիալական կրեդիտների» համակարգի ներդրմանը: Դրանով իսկ ֆիզիկական անձանց հնարավորություն կընձեռենք պետական բյուջեից հետ ստանալ կոնկրետ սոցիալական, կրթական, առողջապահական և/կամ բնակարանային ապահովման խնդիրների լուծման նպատակով կատարված և սահմանված կարգով փաստաթղթավորված ծախսերին համապատասխանող եկամտային հարկի գումարները:

• Ընդլայնելու ենք կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունը:

Արդյունքում կբարձրացնենք Հայաստանի ներդրումային գրավչությունը և միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման դյուրինությունը:

• Ներդնելու ենք տրանսֆերային գնագոյացման կարգավորումներ և հարկման նպատակով տեղեկատվության փոխանակման համակարգեր:

Արդյունքում կբարձրանա երկրի ներսում ձևավորվող հարկման բազաների պաշտպանության մակարդակը:

• Հարկային օրենսգրքի պարբերաբար բարելավմամբ սահմանելու ենք ընկալելի և կանխատեսելի հարկային կանոններ, որոնք ներդրումային ծրագրերի, ծախսերի և եկամուտների տնօրինման գործընթացներում նպաստելու են արդյունավետ որոշումների կայացմանը:

Արդյունքում՝ հարկային համակարգի վարչարարության պարզեցման միջոցով նպաստելու ենք ստվերի կրճատմանը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների գեներացմանը՝ առանց հավելյալ խոչընդոտներ ստեղծելու տնտեսական գործունեության իրականացման համար:

• Շարունակելու ենք առանձնակի կարևորել տնտեսությունում բոլոր գործարքների լիարժեք փաստաթղթավորման ապահովումը:

Արդյունքում կրճատելու ենք ստվերային շրջանառությունը, ինչն իր հերթին նպաստելու է հավասար մրցակցային պայմանների ձևավորմանը:

• Պարզեցնելու ենք մաքսային վարչարարությունը՝ նվազեցնելով սահմանի անցման համար պահանջվող ժամանակը: Ամբողջապես ներդնելու ենք «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգը:

Արդյունքում բարձրացնելու ենք Հայաստանի ներդրումային գրավչությունը և արտաքին շուկաներում հայաստանյան տնտեսվարողների մրցունակությունը:

• Պետական գնումների համակարգի բարեփոխումների շրջանակում ապահովելու ենք, որ հատկապես հայաստանյան ընկերությունները ծառայությունների և ապրանքների դիմաց վճարները ստանան առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Արդյունքում պետությունը դառնալու է վստահելի գործընկեր և բարձրանալու է գնումների արդյունավետությունը: Բարձրանալու է հատկապես փոքր և միջին ընկերությունների մրցունակությունը՝ հաշվի առնելով վերջիններիս համար ֆինանսների հասանելիության և ֆինանսավորման ծախսերի մակարդակները:

• Պլանավորում ենք չեղարկել ԱԱՀ-ի գանձումը սահմանին:

Արդյունքում տնտեսվարողները հնարավորություն կստանան տնօրինել լրացուցիչ, ազատ ֆինանսական միջոցներ, որոնք կարող են ուղղել իրենց բիզնեսի ընթացիկ կարիքներին կամ իրականացնել նոր ներդրումներ:

• Ապահովելու ենք ներդրողների համար տնտեսական ենթակառուցվածքների առավելագույն հասանելիություն: Այս նպատակի համար 5 տարվա ընթացքում տրամադրելու ենք 50 մլրդ դրամ:

Արդյունքում կնվազեն նոր արդյունաբերական տարածքների ստեղծման ծախսերը, կբարձրանա Հայաստանում իրականացվող ներդրումային ծրագրերի մրցունակությունը և շահութաբերությունը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Ժողովրդագրական իրավիճակի բարելավումը եղել է մեր որդեգրած բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը: Մշակել և կյանքի ենք կոչել բազմաթիվ առողջապահական և սոցիալական ծրագրային փաթեթներ՝ միտված ծնելիության խրախուսմանը:

Ծնելիությունը խթանելու համար բնակչության որոշ խմբերի համար անվճար ենք դարձրել սկրինինգները՝ վերարտադրողական խանգարումների վաղ հայտնաբերման ու բուժման նպատակով: Անպտղության հաղթահարման ծրագրից օգտվող բնակավայրերի թիվը 38-ից հասցրել ենք 184: Ծրագրից օգտվող նպաստառուների համար միավորի շեմը իջեցրել ենք մինչև 28.01, ինչպես նաև ավելացրել ենք շահառուների նոր խումբ՝ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողներին: Ներկայումս ծրագրից օգտվում են 68 զոհված զինծառայողի ծնող:

Ծրագրի շրջանակում միայն 2021թվականի 4 ամիսների ընթացքում կատարվել է 2063 հետազոտություն՝ ուղղված վերարտադրողական խանգարումների բացահայտմանը: Բուժման կարիք ունեցողները ստացել են հիվանդանոցային բուժում: Նույն ժամանակահատվածում ծրագրի շրջանակում բուժում են ստացել 232 անպտուղ զույգ: 2019 թվականից մինչև այսօր բուժում են ստացել 797 անպտուղ զույգ: Ծրագրի իրականացման արդյունքում ծնվել է 80 երեխա, կան 46 ընթացող հղիություններ:

2020 թվականի հուլիսի 1-ից ավելացրել ենք երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ առաջին և երկրորդ երեխայի համար սահմանելով 300,000 դրամ՝ նախկինում սահմանված 50,000 և 150,000 դրամի փոխարեն: Ավելացրել ենք նաև մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստի չափը՝ սահմանելով 26,500 դրամ՝ նախկինում սահմանված 18,000 դրամի փոխարեն:

2020 թվականի հուլիսի 1-ից 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ծննդյան միանվագ նպաստի գումարն ամբողջությամբ վճարվում է շահառուին: Նախկինում շահառուին վճարվում էր 500,000 դրամը, իսկ մնացած 500,000 կամ 1 մլն դրամը տրվում էր որպես ընտանեկան դրամագլուխ:

Գյուղական բնակավայրում բնակվող մինչև 2 տարեկան երեխա ունեցող ծնողի համար ներդրվել է խնամքի հավելյալ նպաստ 26,500 դրամ: Մասնավորապես, գյուղական բնակավայրում բնակվող ծնողը, եթե չէր աշխատում, ապա մինչև 2020 թվականը առհասարակ չէր ստանում երեխայի խնամքի նպաստ: 2020 թվականից գյուղական բնակավայրերի չաշխատող ծնողները ստանում են ամսական 26,500 դրամ երեխայի խնամքի գումար, իսկ գյուղական բնակավայրերում աշխատող ծնողների համար այդ գումարը ամսական 18,000

դրամից դարձել է 53,000 դրամ: Ավելացել է նաև քաղաքային բնակավայրերում աշխատող ծնողներին տրամադրվող երեխայի խնամքի գումարը՝ 18,000 դրամից դառնալով 26,500 դրամ:

Երևան քաղաքում մանկապարտեզների աշխատանքային ժամը 17:00-ից սահմանել ենք 18:30՝ օժանդակելով աշխատող ծնողներին և պայմաններ ստեղծելով ծնելիության խթանման համար:

Օրենքով ստեղծել ենք հայրության արձակուրդի հնարավորություն: Այսուհետ երեխայի ծնունդից հետո երեսնօրյա ժամկետում նաև հայրերը կունենան հնգօրյա վճարովի արձակուրդի հնարավորություն:

2021 թվականի մայիսի 1-ի դրությամբ արդեն բարձրացված դրույքով խնամքի նպաստ է ստանում 23,708 ծնող, որից 9336-ը՝ գյուղական բնակավայրերում ապրող:

Ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող հաջորդ կարևոր գործոնը բնակարանային խնդիրն է, որը լուծելու համար 2020 թվականի հուլիսի 1-ին մեկնարկել են երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության հետևյալ ծրագրերը.

- միանվագ դրամական աջակցության ծրագիր (մարզային բնակավայրերում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու համար տրամադրվում է միանվագ դրամական աջակցություն),
- կանխավճարի ապահովագրության ծրագիր (հիփոթեքով բնակարան ձեռք բերող շահառուին տրամադրվում է դրամական աջակցություն՝ կանխավճարի ապահովագրության տարեկան ապահովագրական վճարը վճարելու համար),
- երեխայի ծննդյան աջակցության ծրագիր (հիփոթեքային վարկ մարող ընտանիքում երեխա ծնվելու դեպքում տրամադրվում է միանվագ դրամական աջակցություն):

2021 թվականի մայիսի 1-ի դրությամբ աջակցություն է ստացել 839 շահառու: Պետության կողմից իրականացվում է նաև «Դայակ պետության աջակցությամբ» ծրագիրը, որի շրջանակում 2020 թվականին նախորդ տարվա համեմատ շուրջ 36%-ով ավելի շատ քաղաքացու է հնարավորություն տրվել օգտվելու ծրագրից: Մեկնարկել է հանրակրթական հաստատություններում երկարօրյա ուսուցման ծրագիրը, որը հնարավորություն է տալիս կազմակերպել դպրոց հաճախող երեխաների դասապատրաստման, սննդի, հանգստի և այլ անհատական աշխատանքներ կրթական հաստատություններում մանկավարժների օգնությամբ:

Երկարօրյա խմբերում մանկավարժի համար սահմանվել է վճար՝ տվյալ խմբի համար նախատեսված դասաժամերի չափով:
Նշված ծրագրերը և միջոցառումները նպաստել են նրան, որ 2014 թվականից ի վեր շարունակվող նվազումից հետո առաջին անգամ 2020 թվականին ծնունդների թիվը Հայաստանում աճ է գրանցել՝ հասնելով մոտ 36,400-ի:
2020 թվականի մարտի 8-ից ծնունդների գրանցումը սկսել ենք իրականացնել քաղաքացիների համար ավելի հարմարավետ բժշկական հաստատություններում, որի արդյունքում քաղաքացիները այս և փոխկապակցված ծառայությունների համար ստիպված չեն լինում այցելել մի քանի պետական մարմիններ, այլ բոլոր ծառայությունները ստանում են տեղում:
Իրականացվել է 8206 ծննդի պետական գրանցում:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Հաջորդ 5 տարիներին շարունակելու և ընդլայնելու ենք արդեն մեկնարկած և արդյունքներ գրանցած բոլոր ծրագրերը: Հատուկ ուշադրություն ենք դարձնելու երեխաների խնամքի համար տրամադրվող նպաստներին, աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելուն աջակցող միջոցառումներին:

Արդյունքում կխթանենք երիտասարդ ընտանիքների ստեղծումը՝ միաժամանակ ներգրավելով երեխա ունեցող անձանց աշխատաշուկայում:

• Թիրախային ծրագրեր ենք մշակելու նաև հայրենադարձ ընտանիքների համար՝ առաջնահերթ դիտարկելով երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքներին:

Արդյունքում, խթանելով ժողովրդագրությունը, օժանդակելու ենք նաև հայրենադարձությանը:

• Մինչև 6 տարեկան 3-րդ և հաջորդ երեխաներին տրամադրելու ենք ամսական 50,000 դրամ ֆինանսական աջակցություն

Արդյունքում պետությունը կթեթևացնի երխայի խնամքի կազմակերպման ծախսերը և կխթանի ծնելիության աճը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Կրթության ոլորտում մեր բարեփոխումներն այս ընթացքում ամբողջացել են՝ նախադպրոցական կրթությունից մինչև դպրոց, բարձրագույն ուսումնական հաստատություններից մինչև գիտություն: Այդ բարեփոխումները ընթանում են 2 ուղղությամբ՝ բովանդակային և ենթակառուցվածքային: Առաջին անգամ կառավարության մակարդակով հաստատվել է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը: Ամբողջությամբ վերանայել ենք հանրակրթական պետական չափորոշիչը, ինչը վերջին անգամ վերանայվել էր 10 տարի առաջ: Կրթության ոլորտին ուղղված ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացրել ենք 2018 թվականին՝ 30%-ով, 2019-ին՝ 32%-ով, 2020-ին՝ 14%-ով՝ ընդհանուր առմամբ 161.1 մլրդ դրամ:

Կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել ենք 202 մանկապարտեզ և նախակրթարան ողջ հանրապետությունում: Արդյունքում միայն 2019 թվականին նախադպրոցական հաստատություններում 3-5 տարեկան երեխաների շրջանում ընդգրկվածությունը աճել է 6%-ով՝ հասնելով 64.4%-ի, 2020-ին այդ թիվը մոտեցել է 70%-ի:

Արդեն կառուցել և հիմնանորոգել ենք կամ ընթացքի մեջ են գտնվում աշխատանքները 52 դպրոցներում: Ընդ որում, դրանցից 20-ը մոդուլային գերժամանակակից փոքրաթիվ համակազմ ունեցող դպրոցներ են, որոնք գործելու են որպես համայնքային կենտրոններ գյուղերում՝ ապահովելով մշակութային, ժամանցային, սպորտային միջավայր:

Ինժեներական և ռոբոտաշինական լաբորատորիաներին 2014-2017 թվականներին հատկացվել է ընդամենը 188 մլն դրամ, իսկ 2018-2020 թվականներին՝ շուրջ 1.3 մլրդ դրամ կամ 7 անգամ ավել գումար: Բոլոր 107 ավագ դպրոցներում ստեղծել ենք ժամանակակից բնագիտական լաբորատորիաներ: Տարեկան շուրջ 250 մլն դրամ ենք հատկացրել հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների համար մարզագույք ձեռք բերելու նպատակով: 2012-2018 թվականների ողջ ընթացքում պետական բյուջեից այս նպատակով հատկացվել էր ընդամենը 420 միլիոն դրամ:

Ուսուցիչների աշխատավարձերը բարձրացրել ենք 10%-ով, սահմանել ենք ուսուցչի նվազագույն աշխատավարձի դրույքաչափ՝ 108,000 դրամ:

Ներդրել ենք ուսուցիչների մասնագիտական բարձրացման նոր մեխանիզմ՝ կամավոր ատեստավորումը, որը հնարավորություն կտա շարունակաբար բարձրացնել և՛ ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը,

և՛ աշխատավարձերը. ատեստավորված ուսուցիչների աշխատավարձը կբարձրանա 30-50%-ով:

Փոքրաթիվ համակազմ ունեցող դպրոցներում ուսուցիչների բացակայության խնդիրը լուծելու համար մշակել և ներդրել ենք մենթոր դպրոցների միջոցով էլեկտրոնային ուսուցման համակարգ և 101 նման դպրոցներում ստեղծել համակարգչային դասասենյակներ:

Հանրապետության բոլոր մարզերի դպրոցների այն ուսուցիչներին ու աշակերտներին, որոնք աշխատելու և սովորելու համար մի բնակավայրից մյուսն են երթևեկում, տրամադրվում է 3.5 անգամ ավելի շատ փոխհատուցում, ինչն էապես կնպաստի համայնքներում ուսուցիչների պակասի խնդրի լուծմանը:

Խոշորացրել ենք դպրոցական խորհուրդները. փոքր համայնքներում ստեղծվել են միացյալ խորհուրդներ: Ամբողջությամբ փոխել ենք դպրոցի տնօրենի ընտրության կարգը՝ մեծացնելով ծնողական և մանկավարժական համայնքների ներգրավվածությունը:

Հանրակրթության նոր պետական չափորոշիչը հաստատելիս կարևորել ենք, թե 12-րդ դասարանն ավարտող երեխան ինչ կարողունակություններ պետք է ունենա՝ շեշտադրելով գիտելիքը, հմտությունը, վերաբերմունքն ու արժեքները: Հաստատել ենք նաև առարկայական ծրագրերը, որոնք կփորձարկվեն 2021 թվականի սեպտեմբերից:

Էապես բարելավել ենք ռազմագիտական կրթությունը դպրոցում: Ամբողջությամբ վերանայել ենք չափորոշիչը: Ներդրել ենք մարզառազմական ճամբարը՝ որպես պարտադիր բաղադրիչ 11-րդ դասարանցիների համար: Այն 12 օր տևողությամբ գործնական դասընթաց է:

Առաջին անգամ կազմակերպել և իրականացրել ենք հայկական համադպրոցական գիտության փառատոնը, որին մասնակցել է Երևանի և 7 մարզերի 21 ուսումնական հաստատությունների շուրջ 110 աշակերտ՝ ներկայացնելով 46 անհատական և խմբային գիտահետազոտական նախագծեր: Առավելագույն միավոր ստացած 2 խմբեր հնարավորություն են ստացել մասնակցել ԱՄՆ-ում կայացած Միջազգային գիտատեխնիկական փառատոնին: Փառատոնը այսուհետ կկրի ամենամյա բնույթ:

Ամբողջ Հայաստանում ներդրել ենք 1-ին դասարանցիների հայտագրման նոր համակարգ, որի արդյունքում միայն Երևանում գերբեռնված՝ «մենաշնորհային» դպրոցների թիվը նվազել է շուրջ 50%-ով, նույնքանով նվազել է թերբեռնված դպրոցների թիվը, որոնք ստացել են ֆինանսական մեծ միջոցներ՝ զարգացնելու կրթական գործընթացը:

Աշակերտական պայուսակների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու և առողջության պահպանման նպատակով բեռնաթափել ենք շուրջ 49 դասագրքերի քաշը՝ դասագրքերը բաժանելով 1-ին և 2-րդ մասերի: 2018 թվականից սկիզբ ենք դրել կրթական-մշակութային «Դպրոցական աբոնեմենտային» ծրագրին, որը բաղկացած է 3 բաղադրիչներից՝ այցելություն պատկերասրահ (թանգարան), համերգասրահ, թատրոն: Ավելի քան 400,000 աշակերտ օգտվել է ծրագրից:

Քոլեջներում և ուսումնարաններում ներդրել ենք դուալ կրթության համակարգը՝ գործատուների ակտիվ մասնակցությամբ: 11 ուսումնական հաստատություններում իրականացվում են 13 երկարաժամկետ և 3 կարճաժամկետ ուսուցման ծրագրեր՝ 700 ուսանողների մասնակցությամբ:

Ներդրել ենք աշխատաշուկայի պահանջներից բխող նոր մասնագիտություններ քոլեջներում և ուսումնարաններում՝ գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների, արևային էներգիայի, զբոսաշրջության ոլորտներում: Խթանել ենք համագործակցությունը մասնավոր ոլորտի հետ, շուրջ 70 մասնավոր ընկերություններ ներգրավվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության մեջ:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Շարունակելու ենք բարձրացնել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը: Բոլոր ուսուցիչները հնարավորություն կունենան կամավոր ատեստավորում անցնելու միջոցով իրենց աշխատավարձերը բարձրացնել մինչև 50%-ով:

Արդյունքում ուսուցչի մասնագիտական ստանդարտների ներդրման միջոցով ապահովելու ենք ուսուցչի աշխատանքային առաջխաղացման և աշխատավարձի բարձրացման շարունակական մեխանիզմ՝ միաժամանակ ապահովելով մասնագիտական զարգացման պատշաճ մեխանիզմ և որակ: Համանման խթաններ ենք ներդնելու նաև կրթական մյուս մակարդակներում:

• Ամբողջությամբ փոխելու և ներդնելու ենք նոր դասագրքեր և ուսումնական նյութեր՝ նոր չափորոշիչների համաձայն: Հանրակրթության հիմնական նպատակներից է լինելու ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, առարկաների բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով կարողունակությունների ձևավորումը:

Արդյունքում դպրոցն ավարտելիս սովորողը կունենա համապատասխան գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք և արժեքներ:

• Շարունակելու ենք կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել նախակրթարաններ և մանկապարտեզներ: Մինչև 2026 թվականը ունենալու ենք 500 նորակառույց, վերակառուցված, հիմնանորոգված կամ վերանորոգված մանկապարտեզ և նախակրթարան:

Արդյունքում հնարավորություն կտանք նախադպրոցական հաստատություններում ընդգրկված 3-5 տարեկան երեխաների թիվը մեծացնել՝ հասցնելով առնվազն 85%-ի:

• Շարունակելու ենք դպրոցների կառուցումը, հիմնանորոգումը և վերազինումը: Մինչև 2026 թվականը ունենալու ենք կառուցված, հիմնանորոգված և նորոգված առնվազն 300 դպրոց: Մինչև 2026 թվականը հանրապետության բոլոր 1400 դպրոցներում ստեղծելու ենք ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաներ:

Արդյունքում ողջ հանրապետությունում սովորողները հնարավորություն կունենան ժամանակակից կահավորված և վերազինված միջավայրում ստանալ կրթություն, ինչպես նաև տեսական գիտելիքները ամրապնդել գործնական հմտություններով:

• 2021 թվականի սեպտեմբերից հանրապետության ողջ տարածքում հանրակրթության ոլորտում ապահովված կլինենք համընդանուր ներառականությունը, իսկ նախադպրոցական համակարգի համընդհանուր ներառման գործընթացը ավարտին կհասցնենք մինչև 2023 թվականը:

Խթանելու ենք նաև ներառման գործընթացը կրթական մյուս մակարդակներում:

Արդյունքում որակյալ կրթությունը հասանելի ենք դարձնելու բոլոր խմբերին՝ առաջնահերթություն տալով գյուղական, սահմանամերձ բնակավայրերին, սոցիալապես անապահով խմբերին՝ հատկապես մասնագիտական կրթության ոլորտում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, ազգային փոքրամասնությունների համայնքներին, խրախուսելու ենք նաև մեծահասակների շարունակական կրթությունը:

• Ստեղծելու ենք արդյունավետ, բաց, կատարողականի և վերջնարդյունքների վրա հիմնված կառավարման համակարգ կրթության բոլոր մակարդակների համար: 2023 թվականից անցում ենք կատարելու կատարողականի (KPI) և ծրագրային արդյունքների ֆինանսավորմանը:

Արդյունքում կունենանք ավելի նպատակային ֆինանսավորում և արդյունքահենք աշխատանք, կնպաստենք նաև կրթության որակի բարձրացմանը, ինչպես նաև կամրապնդենք փաստահենք կառավարման համակարգը:

• Մինչև 2026 թվականը ամբողջությամբ թվայնացնելու ենք կրթական հաստատությունների կողմից տրամադրվող ծառայությունները՝ կրճատելով վարչարարությունը և կոռուպցիոն ռիսկերը: Դիպլոմների և ատեստատների ստացումը, ընդունելության քննությունները և կրթական գործընթացներ կդառնան թվային:

Արդյունքում կրթական հաստատությունների բոլոր շահառուները՝ աշակերտները, ուսանողները, ծնողներները, ուսուցիչները, դասախոսները կարողանալու են կրթական գործընթացին մասնակցել առցանց: Այս ամենի արդյունքում կկրճատվեն նաև կոռուպցիոն ռիսկերը:

• Զարգացնելու ենք էլեկտրոնային ուսուցման գործիքները:

Արդյունքում ապահովելու ենք կրթության անընդհատությունը և հասանելիությունը կրթական բոլոր մակարդակներում: Կրթությունը հասանելի ենք դարձնելու սահմանամերձ գոտիներում՝ անկախ համապատասխան մասնագետների առկայությունից:

• Օրենսդրական մեխանիզմներով հնարավորություն ենք տալու քոլեջներին և ուսումնարաններին մասնավոր ընկերությունների հետ համատեղ ստեղծել կառավարման համակարգ/խորհուրդներ և մասնավորի կարիքների հիման վրա պատրաստել համապատասխան կադրեր:

Արդյունքում նպաստելու ենք աշխատաշուկայի կարիքներին բավարարող որակյալ կադրերի պատրաստմանը, ինչպես նաև գործազրկության կրճատմանը:

• Ներդնելու ենք մասնագիտական կրթության ոլորտում պետական պատվերի և վճարովի ուսուցման ճիշտ հարաբերակցության սահմանման, ընդունելության տեղերի բաշխման ամբողջական համակարգ՝ աշխատաշուկայի պահանջներից և նոր մասնագիտությունների հեռանկարներից ելնելով:

Արդյունքում պետությունը կկարողանա առաջնահերթություն տալ մեծ պահանջարկ ունեցող, ինչպես նաև պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մասնագիտություններին:

• Տարբեր միջոցառումներով, այդ թվում՝ պետական պատվերի միջոցով մշակելու և ներդնելու ենք տարածաշրջանային լեզուների մասնագիտացում բուհ-երում: Զարգացնելու ենք տարածաշրջանային լեզուների ուսուցումը և դրան զուգահեռ բարձրացնելու ենք մեդիագրագիտության մակարդակը հանրակրթական հաստատություններում:

Արդյունքում կունենանք տարածաշրջանային լեզուների իմացությամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներ, իսկ դպրոցական տարիքի աշակերտները կկարողանան տեղեկանալ ու վերլուծել հարևան երկրների առանձնահատկությունները, ինչպես նաև տարբերակել կեղծ տեղեկատվությունն իրականից

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Ընդունել ենք «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը, որն ամբողջությամբ բարեփոխելու է բարձրագույն կրթական ոլորտը:

2021 թվականի կառավարության որոշմամբ էականորեն վերանայել ենք գիտաշխատողների բազային աշխատավարձերը, ինչը վերջին տարիների կատարված հիմնարար փոփոխություններից էր: Ընդ որում, 2010 թվականից ի վեր գիտաշխատողների բազային աշխատավարձերի ֆոնդի վերանայում տեղի չէր ունեցել:

Այսպես, եթե 2021 թվականին բազային աշխատավարձի ֆոնդը կազմում է շուրջ 4 մլրդ դրամ, ապա 2022 թվականի հունվարից այն կլինի մոտ 7.7 մլրդ, իսկ հաջորդ տարիներին, շարունակաբար աճելով, 2025-ին կդառնա ավելի քան 14.4 մլրդ դրամ: Եթե այժմ գիտաշխատողի ամսական միջին աշխատավարձը 90,400 դրամ է, փոփոխությունից հետո՝ 2025 թվականին, կկազմի մոտ 276,000 դրամ: Գիտական ստորաբաժանման ղեկավարի աշխատավարձը ներկայիս 141,400 դրամի փոխարեն 2025 թվականին կկազմի 477,200 դրամ: Իրականացվող փոփոխությունները թույլ կտան գիտնականներին իրենց ջանքերը ամբողջությամբ ուղղել գիտությամբ զբաղվելուն ու նոր գիտելիք ստեղծելուն և հնարավորինս քիչ մտահոգվել իրենց ապրուստի համար:

2020 թվականին հավելյալ միջոցների ներգրավման շնորհիվ գիտության հաստատված բյուջեն ավելացրել ենք 1 մլրդ 491 մլն դրամով, լրացուցիչ միջոցների մի մասն հատկացվել է արհեստական բանականության ու տվյալագիտության, ռոբոտատեխնիկայի հեռանկարային ոլորտներին: 2021 թվականին գիտության ֆինանսավորումը կրկին ավելացել է, այս անգամ 2 մլրդ 784 մլն դրամով, որն հատկացվել է թեմատիկ գիտական հետազոտությունների իրականացմանը, գիտական ենթակառուցվածքների և լաբորատորիաների արդիականացմանը: Սա հնարավորություն է տալու առավել արդյունավետ օգտագործել գիտական ներուժը՝ միաժամանակ խթանելով երիտասարդների ներգրավումը գիտության ոլորտում:

2020-2021 ուսումնական տարվանից շուրջ 2.5 անգամ ավելացել են ասպիրանտների կրթաթոշակները՝ 20-25,000 դրամից դառնալով 60-65,000 դրամ:

Աշխատող ուսանողների ուսման վարձը եկամտահարկով փոխհատուցելու օրենսդրական կարգավորմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում մի շարք մասնագիտություններով սովորող և միաժամանակ աշխատող անձանց եկամտային հարկը վերադարձվում է՝ ուսման վարձի փոխհատուցման նպատակով:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Գիտական կենտրոնները վերազինելու ենք ժամանակակից հետազոտական սարքավորումներով՝ դրանց շուրջ ստեղծելով սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոններ։

Արդյունքում բոլոր գիտաշխատողները ապահովված կլինեն հետազոտական ժամանակակից սարքավորումներով՝ հնարավորություն ունենալով իրականացնել համաշխարհային գիտական ասպարեզում մրցունակ փորձարարական հետազոտություններ։

• Բազային աշխատավարձերի բարձրացմանը զուգընթաց հաստատելու ենք մասնագիտական գործունեության գնահատման նոր սանդղակ, որը կսահմանի գիտական արդյունքի որակի ավելի բարձր նշաձող, կուրվագծի մասնագիտական աճի ուղին։

Արդյունքում գիտության ոլորտում աշխատանքը կդառնա գրավիչ, կապահովենք երիտասարդների զգալի ներհոսք դեպի գիտության տարբեր ճյուղեր։ Գիտաշխատողների գրանցած գիտական արդյունքների հստակեցումը կնպաստի միջազգային հեղինակավոր պարբերականներում Հայաստանից հրապարակված գիտական հոդվածների քանակական աճին։

• Ներդնելու ենք նորարարության և գիտատար ձեռնարկատիրության խթանման և աջակցության մեխանիզմներ՝ էկոնոմիկայի նախարարության կազմում ստեղծելով գիտությունից նոր բիզնես ոլորտների ստեղծման և բիզնեսից դեպի գիտություն պատվերների իջեցմանն աջակցող կառույց, որը կուսումնասիրի գիտության մեջ առկա և առևտրայնացման պոտենցիալ ունեցող մշակումները և կուղեկցի դրանց առևտրայնացման գործընթացը՝ տրամադրելով խորհրդատվություն և իրավական աջակցություն։

Արդյունքում կունենանք տեխնոլոգիաների փոխանցման ազգային համակարգ, ինչպես նաև մտավոր սեփականության պաշտպանության հուսալի և հասկանալի ընթացակարգեր, որոնք միասին հնարավորություն կընձեռեն գիտությունից բիզնես ճանապարհի կայացման համար։

• Հիմնադրելու ենք ռիսկային նախաձեռնությունների գնահատման և դրանցում ներդրումների ազգային հիմնադրամ՝ դրան հատկացնելով մինչև 10 մլրդ դրամ դրամագլխային բյուջե։

Արդյունքում որոշակի ընթացակարգերով անցած գիտական մշակումների հիման վրա ներդրումների միջոցով կստեղծվեն նոր բարձր տեխնոլոգիական ընկերություններ, որոնց հաջողության պարագայում ոչ միայն կզարգանա տնտեսությունը, այլ նաև նոր աշխատակիցների ներգրավման նպատակով կառաջանա համապատասխան պատվեր բուհական և գիտահետազոտական համակարգերին։

• Հավելյալ ֆինանսական միջոցներ ենք տրամադրելու հետևյալ առաջատար ուղղություններին՝ տվյալագիտություն, արհեստական բանականություն, քվանտային տեխնոլոգիաներ, խելացի գյուղատնտեսություն, կենսատեխնոլոգիա, նյութագիտություն։ Ներգրավելու ենք բուհական-հետազոտական կենտրոններ, շահագրգիռ խմբեր և կազմակերպություններ։

Արդյունքում կունենանք ներքին ռեսուրս, որն ընդունակ կլինի ոչ միայն յուրացնել ապագայի տեխնոլոգիաները, այլև մասնակից լինել և էական դերակատարում ունենալ դրանց հետագա զարգացման գործում։

• Մինչև 2024 թվականը ներդնելու ենք գիտության ոլորտի կառավարման էլեկտրոնային հարթակ՝ ռեյտինգային համակարգերի ներմուծմամբ, որը հնարավորություն կընձեռի հետազոտողից մինչև կազմակերպություն բոլոր մակարդակներում իրականացնել կատարողականի գնահատում, ունենալ առաջացած խնդիրների վերհանման ու լուծման մեխանիզմներ:

Արդյունքում կունենանք խրախուսման, լաբորատորիաների կամ կազմակերպությունների ֆինանսավորման ընդլայնման արդյունավետ և արդար համակարգ, մտավոր սեփականության պաշտպանության հավելյալ գործիքակազմ:

• Ավելացնելու ենք պաշտպանական և քաղաքացիական նշանակության հետազոտությունների իրականացման համար հատկացվող միջոցների ծավալները և ծրագրերի տևողությունը՝ ներկայիս 2 տարվա փոխարեն հատկացնելով 3 տարի ժամանակահատված, որի մի մասը կհատկացվի հետազոտությունների արդյունքները արտադրանքի վերածելու աշխատանքներին:

Արդյունքում ունենալու ենք հստակ և գործուն մեխանիզմներ, որոնք ապահովելու են հետազոտությունից մինչև արտադրություն հասնելու ճանապարհը:

• Մինչև 2026 թվականը հետևողականորեն բարձրացնելու ենք հասարակական և հումանիտար գիտությունների, այդ թվում՝ հայագիտությանը հատկացվող ֆինանսավորումը ավելի քան 2 անգամ՝ 2.3 մլրդ-ից հասնելով շուրջ 5 մլրդ-ի:

Արդյունքում Հայաստանում կզարգանա հասարակական և հումանիտար գիտությունները՝ համահունչ ժամանակակից և համաշխարհային միտումներին: Էապես կավելանան միջազգային հարթակներում տպագրությունների և դրանց վրա հղումների քանակը:

• Գիտության ոլորտում երիտասարդների ներգրավման նպատակով շարունակելու ենք կազմակերպել ասպիրանտների հետազոտությունների աջակցության մրցույթներ, արտերկրի առաջատար կենտրոններում ասպիրանտների կամ գիտական աստիճան ունեցողների հետդոկտորական հետազոտությունների մրցութային ծրագրեր, ինչպես նաև իրականացնելու ենք առաջատար կենտրոններում աշխատանքային փորձ ունեցող հայազգի գիտնականների վերադարձի կամ իրենց ղեկավարությամբ հեռավար լաբորատորիաների ստեղծման ծրագրեր:

Արդյունքում մինչև 2020 թվականը պլանավորում ենք ունենալ ծրագրերի շահառու շուրջ 400 ասպիրանտ, 200 հետդոկտորական հետազոտող, Հայաստան վերադարձած 60 գիտնական և 60 հեռավար ղեկավարվող լաբորատորիա, որոնք կգործեն գիտության առաջատար ուղղություններում և բացի բարձրակարգ գիտական հետազոտություններից՝ կապահովեն նաև մրցունակ կադրերի ներհոսք դեպի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտ:

• Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում իրականացնելու ենք գիտաշխատողների վերապատրաստման 6-12 ամիս տևողությամբ ծրագրեր՝ հատկացնելով շուրջ 2 մլրդ դրամ բյուջե:

Արդյունքում մինչև 2026 թվականը կունենանք շուրջ 400 վերապատրաստված գիտնականներ, որոնք Հայաստան կբերեն ժամանակակից գիտելիքներ և մեթոդներ, կհաստատեն կայուն համագործակցություն իրենց արտասահմանյան գործընկերների հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Կառավարությունը 3 տարվա ընթացքում առողջապահական համակարգին հատկացվող բյուջետային միջոցներն ավելացրել է մոտ 80%-ով՝ 2017 թվականի 86 մլրդ դրամը 2020 թվականին հասցնելով 144 մլրդ դրամի:

Բարձրացրել ենք շուրջ 10,000 բուժաշխատողների աշխատավարձերը 30-40%-ով:

Նախկինում անվճար էր միայն մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բուժօգնությունը: Այժմ անվճար է մինչև 18 տարեկան բոլոր երեխաների հիվանդանոցային բուժօգնությունը:

Չարորակ նորագոյացությունների վիրահատական և ճառագայթային բուժումը դարձրել ենք ամբողջովին պետական պատվերի շրջանակում: Ծուրջ 12,000 քաղաքացի ստացել է ուռուցքաբանական հիվանդություններով պայմանավորված անվճար վիրահատություն: Ընդլայնել ենք գծային արագացուցիչով ճառագայթային անվճար բուժում ստացող բուժառուների ցանկը, և շուրջ 270 մարդ ստացել է անվճար բուժօգնություն: Կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ հիվանդներին արտասահմանյան նոր սերնդի դեղամիջոցի տրամադրումը դարձրել ենք անվճար, որի արդյունքում միայն 2020 թվականին 145 կին ստացել է այդ բուժօգնությունը՝ ընդհանուր 400 մլն դրամ արժողությամբ: 2021 թվականին նույն ախտորոշմամբ 190 կին ևս այդ դեղամիջոցները կստանան անվճար:

Անվճար ենք դարձրել նաև գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների բուժումը, ինչի արդյունքում 800 քաղաքացի, անկախ սոցիալական վիճակից, ստացել է անհետաձգելի բուժօգնություն:

Ընդլայնել ենք նաև 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց համար նորագույն տեխնոլոգիաներով բժշկական օգնության անվճար տրամադրումը: Ընդլայնել ենք ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված անապահովության միավոր ունեցող նպաստառուների շրջանակը, և շուրջ 200,000 նպաստառու ստանում է դեղորայքի հատկացման արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

Ընդլայնել ենք սրտի (Stent for Life) անհետաձգելի վիրահատական ծառայությունների պետպատվերը՝ 2 տարվա ընթացքում կատարելով շուրջ 4600 վիրահատություն: Ինչպես նաև սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ավելի քան 13,000 քաղաքացի ստացել է սրտի անվճար վիրահատական ծառայություն:

Եթե նախկինում անհետաձգելի բուժօգնություն ստանալու պարագայում քաղաքացին պետք է ստացիոնար բուժում ստանար՝ հիվանդանոցում անցկացնելով 1-2 օր, ապա այժմ բուժօգնությունը ստանում է մի քանի ժամվա ընթացքում ամբողջությամբ անվճար: Փոփոխությունից հետո շուրջ 68,000 քաղաքացի ստացել է իր անհետաձգելի անվճար բուժօգնությունը:

Թարմացրել ենք հանրապետության շտապ բժշկական օգնության ծառայության ավտոպարկը՝ համալրելով 276 շտապօգնության մեքենաներով և ռեանիմոբիլներով: Ներդրել ենք սանիտարական ավիացիայի ծառայությունը, որի շնորհիվ 2 տարիների ընթացքում փրկվել է շուրջ 220 քաղաքացու կյանք, քանի որ հնարավոր է եղել նրանց մարզերից անհապաղ տեղափոխելով Երևանի բժշկական կենտրոններ: Արդիականացրել, շահագործման ենք հանձնել կամ սկսել ենք 10 մարզային բժշկական կենտրոնների շինարարական աշխատանքները:

Կորոնավիրուսի համավարակի համար պետբյուջեից հատկացրել ենք 32 մլրդ դրամ՝ ապահովելով շուրջ 56,000 քաղաքացու ստացիոնար բուժօգնությունը (ներառյալ անհրաժեշտ սնունդ): Շուրջ 17,000 քաղաքացի ստացել է արտահիվանդանոցային անվճար ծառայություններ: Հանրապետության 29 հիվանդանոցներ վերապրոֆիլավորվել են Կովիդ-19 կենտրոնների՝ վերազինվելով 16 թթվածնային կայաններով, ռենտգեն սարքերով, թթվածնային հոսքաչափերով, շտապ օգնության և ամենագնաց մեքենաներով և անհրաժեշտ այլ սարքավորումներով:

Մենք պարտավորություն ենք ստանձնել նաև Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների և Հայաստանում ապրող օտարերկրացիների համար անվճար ապահովել պատվաստումները:

100%-ով անվճար դեղեր են տրամադրվել հոգեկան առողջության խնդիրների, չարորակ նորագոյացությունների, շաքարային և ոչ շաքարային դիաբետի, էպիլեպսիայի, պարբերական հիվանդության, քրոնիկ երիկամային անբավարարության (երիկամային փոխպատվաստման և/կամ ծրագրային հեմոդիալիզի դեպքերում), անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշի, վիրուսային հեպատիտ Ց հիվանդության և «հիպոֆիզային գաճաճություն» ախտանիշի դեպքերում:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Մինչև 2023 թվականը ներդնելու ենք առողջության համապարփակ ապահովագրության համակարգը և ապահովելու ենք հիմնական ծառայությունների հասանելիությունը Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար: Հասանելի ենք դարձնելու արտահիվանդանոցային դեղորայքի, ինչպես նաև հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների փաթեթ: Ընդգրկելու ենք պարտադիր բժշկական զննումների փաթեթներ ռիսկային տարբեր խմբերի համար: Ներդնելու ենք բժշկական օգնության որակի վերահսկման գործուն մեխանիզմներ ապահովագրական համակարգի արդյունավետ կիրարկման համար:

Արդյունքում առողջապահական ծառայություններ ստանալու պահին քաղաքացին գրպանից այնպիսի ծախսեր չի իրականացնելու, որոնք աղետալի են և հանգեցնում են աղքատացման: Յուրաքանչյուր քաղաքացու համար երաշխավորելու ենք բարձորակ առողջապահության հասանելիություն:

• Իրականացնելու ենք անվճար կանխարգելիչ բժշկական հետազոտություններ մայրական և մանկական առողջությունը պահպանելու համար: Ներառելու ենք նաև դեռահասների համար անվճար սկրինինգիների հետազոտությունները՝ վերարտադրողական առողջության խնդիրների հայտնաբերման և բուժման նպատակով: Անպտղության վաղ հայտնաբերման և հաղթահարման, ինչպես նաև հղիության վաղ շրջանում լրացուցիչ հետազոտությունների իրականացումը՝ միտված մոր և մանկան մոտ առկա խնդիրների բացահայտմանը, դարձնելու ենք անվճար և ընդլայնելու ենք ծառայությունների ցանկը: Ընդլայնելու ենք նաև ոչ վարակիչ հիվանդությունների անվճար սկրինինգային հետազոտությունները և ռիսկային խմբերի մեջ գտնվող յուրաքանչյուր քաղաքացի կարողանալու է անցնել անվճար հետազոտություն քաղցկեղային, սիրտ-անոթային, շաքարային դիաբետով պայմանավորված հիվանդությունների վաղ հայտնաբերման և բուժման նպատակով:

Արդյունքում կունենանք հիվանդությունների վաղ հայտնաբերում և դրանց ավելի արդյունավետ բուժում, ավելի քիչ վաղաժամ մահացություն, ավելի բարձր ծնելիություն:

• Մինչև 2023 թվականը ներդնելու ենք էլեկտրոնային առողջապահության ամբողջական համակարգը: Քաղաքացիներին էլեկտրոնային հարթակում հասանելի կլինեն իրենց բժշկական տվյալները: Էլեկտրոնային համակարգի միջոցով հնարավոր կլինի առցանց հերթագրվել բժշկական հաստատությունում ծառայություն ստանալու նպատակով, էլեկտրոնային դեղատոմսով դեղատներից ստանալ նշանակված դեղորայքը, անաշխատունակության թերթիկի փոխանցման գործընթացը գործատուին կազմակերպել ինքնաշխատ, ստանալ ստանդարտ բժշկական տեղեկանքները: Բժշկական հետազոտությունների էլեկտրոնային տվյալները հնարավոր կլինի օգտագործել տարբեր բժշկական հաստատություններ հաճախելիս:

Արդյունքում առողջապահության համակարգում ծառայություններն առավել արդյունավետ և որակյալ կտրամադրվեն, ինչը կնպաստի կրկնակի հետազոտությունների նվազեցմանը և հետևաբար դրանց համար կատարվող ծախսերի կրճատմանը թե՛ պետության, թե՛ քաղաքացիների համար: Կապահովենք նաև առողջական տվյալների ամբողջական հավաքագրումը և դրանց հիման վրա վերլուծությունների իրականացումը, որն էլ իր հերթին կբերի ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և թափանցիկ բաշխմանը:

• Ստեղծելու ենք ռեզերվային նյութատեխնիկական ռեսուրսներ, մասնագիտական ներուժ, անհրաժեշտ կարողություններ և դրանց ծավալման ու մոբիլիզացիայի գործուն համակարգեր՝ արտակարգ իրավիճակներում առողջապահական համակարգի անխափան գործառնելու համար:

Արդյունքում համաճարակային, արտակարգ ցանկացած այլ իրավիճակի պայմաններում կունենանք արագ արձագանքման մշակված մեխանիզմներ, որոնք կներառեն հասանելի բժշկական ծառայություններ, դեղերի պահուստային միջոցներ և կադրային ապահովվածություն:

• Շարունակելու ենք առողջության առաջնային պահպանման ծառայությունների զարգացումը: Իրականացնելու ենք կապիտալ ծախսեր շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման համար, բարձրացնելու ենք այս օղակի աշխատողների աշխատավարձերը մինչև 50%՝ ըստ ցուցաբերած արդյունքների: Յուրաքանչյուր տարի իրականացնելու ենք բուժաշխատողների շարունակական մասնագիտական առցանց ու անցանց վերապատրաստման դասընթացներ:

Արդյունքում առողջության առաջնային պահպանման օղակում կունենանք ավելի պրոֆեսիոնալ և բարձր վարձատրվող բուժանձնակազմ:

• Ապահովելու ենք առողջապահական համակարգի համաչափ տարածքային զարգացում: Բոլոր մարզերի 50 բուժհաստատություններում բարելավելու ենք շենքային պայմանները և վերազինելու ենք անհրաժեշտ սարքավորումներով:

Արդյունքում մարզերում կզարգանա առողջապահական համակարգը, և բուժօգնությունը կդառնա առավել հասանելի և որակյալ: Կունենանք առավել հագեցած, արդիական և բարեկարգ բժշկական հաստատություններ: Կվերանա մարզերում մատուցվող բժշկական ծառայությունների անհամաչափությունը մայրաքաղաքի նկատմամբ:

• Մինչև 2025 թվականը ներդնելու ենք բժշկական կազմակերպությունների ակրեդիտացման և բուժաշխատողների լիցենզավորման համակարգեր:

Արդյունքում կունենանք բժշկական օգնության որակի վերահսկման մեխանիզմներ:

• Նախադպրոցական տարիքից սկսած խրախուսելու ենք ֆիզիկական զարգացման և առողջ ապրելակերպի ծրագրերը՝ ստեղծելով քաղաքացիների կողմից իրազեկված վարքաբանական որոշումների ընդունման միջավայր:

Արդյունքում կունենանք առողջ սննդակարգ ունեցող, ֆիզիկական ակտիվ ու վնասակար սովորություններից զերծ կենսակերպ վարող, ավելի առողջ քաղաքացիներ:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2019 թվականի հունվարից 40%-ով ավելացրել ենք նվազագույն կենսաթոշակը: Սահմանել ենք «Նվազագույն կենսաթոշակի» չափը, այսուհետ ցանկացած կենսաթոշակ կամ նպաստ չի կարող լինել ավելի ցածր, քան պարենային աղքատության գիծը: Միաժամանակ, դրան հավասարեցրել ենք ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը՝ դարձնելով 26,500 դրամ, իսկ 18 տարին չլրացած երեխայի կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը դարձել է 90,000 դրամ:

Արդյունքում ավելացել են ավելի քան 90,000 քաղաքացիների ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, զինվորական և աշխատանքային կենսաթոշակների չափերը:

2020 թվականին կենսաթոշակի միջին չափը բարձրացրել ենք ավելի քան 7%-ով: Մինչ այդ կենսաթոշակները չէին բարձրացել 5 տարի շարունակ: 2018 թվականի համեմատ կենսաթոշակները բարձրացրել ենք 9%-ով, իսկ 2008 թվականի համեմատ՝ 2 անգամ:

Բարձրացրել ենք աշխատանքային և զինվորական կենսաթոշակի չափը (18,000 դրամ), աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը (950 դրամ), զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը (1-ին խումբ՝ 40,000 դրամ, 2-րդ խումբ՝ 30,000 դրամ, 3-րդ խումբ՝ 27,000 դրամ):

Արդյունքում բարձրացրել ենք շուրջ 34,000 զինկենսաթոշակառուների, շուրջ 470,000 աշխատանքային կենսաթոշակառուների կենսաթոշակների չափերը և մոտ 71,000 նպաստառուների նպաստների չափերը:

Ոլորտի բարեփոխումների արդյունքում 2020 թվականին կենսաթոշակի միջին չափը եղել է 43,590.4 դրամ:

2021 թվականի հունվարից աստիճանական անցում ենք կատարել կենսաթոշակների և նպաստների առանձին տեսակների վճարման անկանխիկ համակարգին, ինչը կապահովի վճարումների հասցեականությունը և հնարավորություն կտա կրճատել պետական բյուջեից կենսաթոշակների վճարման ծառայությունների համար հատկացվող միջոցները:

Ստեղծել ենք միասնական սոցիալական ծառայությունը, որը մեկ պատուհանի սկզբունքով միավորում է նախկինում գործող սոցիալական աջակցության, զբաղվածության, սոցիալական ապահովության ծառայության տարածքային կենտրոնները և բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների գործառույթները:

Զբաղվածությունը խթանելու նպատակով կատարել ենք օրենսդրական փոփոխություն, որի համաձայն ընտանեկան և սոցիալական նպաստ ստացողների շրջանում սեզոնային ժամանակավոր աշխատանքն այլևս չի հաշվարկվի որպես եկամուտ՝ չզրկելով նրանց պետական ֆինանսական աջակցությունից և մյուս արտոնություններից:

Շարունակաբար լուծում ենք ստվերային աշխատատեղերի խնդիրը: Ավելացել է գրանցված աշխատողների թիվը՝ 510,000-ից դառնալով 610,000, իսկ 2021 թվականի ապրիլ ամսին հասել է ռեկորդային 626,000-ի:

Առաջին անգամ իրականացրել ենք աղքատության փուլային հաղթահարման ծրագիրը: 1001 ընտանիք ընդգրկվել է անասնապահությամբ զբաղվելու ծրագրում՝ նպաստից բացի ստանալով սեփական աշխատանքով կայուն եկամուտ ունենալու և աղքատությունից աստիճանաբար դուրս գալու հնարավորություն:

2003 թվականից կառավարությունն ունեցել է պարտավորություն, որ մանկատան սաների համար պետք է բնակարան ձեռք բերի: 2003 թվականից մինչև 2019 թվականը այդ պարտավորությունը կատարված չեն եղել: Մենք սկսել ենք մանկատան շրջանավարտների համար բնակարանի գնման վկայագրերի տրամադրման գործընթացը, որի արդյունքում իրականացրել ենք դեռևս 2003 թվականին կառավարության կողմից տրված, բայց այդպես էլ չկատարված խոստումը: 206 շահառուի տրամադրել ենք բնակարանի ձեռքբերման վկայագրեր: 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված, բնակարանի առաջնահերթ կարիք ունեցող 180 ընտանիքների տրամադրել ենք բնակարան ձեռք բերելու վկայականներ՝ ընդհանուր 2,481,312,500 դրամի չափով:

Ընդլայնել ենք տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ծառայությունների աշխարհագրությունը: Նախկին 6 մարզի փոխարեն այն այժմ հասանելի է ողջ հանրապետությունում:

Երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելելուն ուղղված ծրագրերի ծավալը մեծացրել ենք ավելի քան 4 անգամ: 120 երեխայի փոխարեն ծառայություն տրամադրում ենք 565 երեխայի:

Երեխաներին տրամադրվող ցերեկային ծառայությունները նախկին 1160-ի փոխարեն հասանելի են դարձել շուրջ 3500 երեխաների (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող):

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված քաղաքականության արդյունքում 255 երեխա գիշերօթիկ հաստատություններից և մանկատներից վերադարձել է կենսաբանական ընտանիք: Շարունակել ենք նրանց պետական աջակցությունը բնաիրային ապահովման, կոմունալ ծախսերի փոխհատուցման և նյութատեխնիկական այլ միջոցներով:

Սահմանել ենք քրեական պատասխանատվություն ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելու կամ հարկադրելու համար: Ավելի խիստ պատիժ է սահմանվել, եթե այդ արարքը կատարվել է բուժաշխատողի կամ կազմակերպված խմբի կողմից:

Ուժի մեջ է մտել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» առաջին օրենքը, որը համապատասխանում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին և Հայաստանի վավերացրած միջազգային պայմանագրերին: Արդյունքում փոխվել է հաշմանդամության

սահմանումը, օրենքով արգելվել է հաշմանդամության հիմքով խտրականությունը, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին հնարավորություն է տրվել դիմել դատարան՝ պաշտպանելու իրենց շահառուների շահերը և այլն:

2020 թվականից պետական համաֆինասավորմամբ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործում են ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ, որտեղ ընտանիքում բռնության ենթարկված անձինք ստանում են սոցիալական, հոգեբանական, իրավաբանական ծառայություններ՝ այդ թվում «ԹԵԺ-գիծ» ծառայության միջոցով: 2020 թվականից պետական համաֆինսավորմամբ գործում է նաև 2 ապաստարան, որտեղ ընտանիքում բռնության ենթարկված անձինք ստանում են օրենքով նախատեսված աջակցության բոլոր տեսակները:

Կատարել ենք օրենսդրական փոփոխություն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը արդյունավետ դարձնելու նպատակով: 2021 թվականի հուլիսի 1-ից Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը վերահսկողություն կիրականացնի նաև աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմերի պահպանման, պահանջների, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ՝ կիրառելով պատասխանատվության միջոցներ օրենքով նախատեսված դեպքերից շեղումների հայտնաբերման դեպքերում: Այս հնարավորությունից քաղաքացիները զրկված էին 2003 թվականից՝ Աշխատանքի պետական տեսչության լուծարումից ի վեր:

2020 թվականի հունվարի 1-ից շուրջ 23.6%-ով ավելացրել ենք ամսական նվազագույն աշխատավարձը՝ 55,000 դրամից հասցնելով 68,000 դրամի:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Մինչև 2026 թվականը բարձրացնելու ենք՝

- նվազագույն կենսաթոշակի չափը 26,500 դրամից դարձնելու ենք առնվազն 37,000 դրամ,
- կենսաթոշակի միջին չափը 43,500 դրամից՝ առնվազն 61,000 դրամ,
- նվազագույն աշխատավարձը՝ 68,000 դրամից՝ 85,000 դրամ,
- միջին աշխատավարձը 190,000 դրամից՝ 300,000 դրամ,
- գործազրկությունը իջեցնելու ենք 10%-ից ցածր,
- աղքատության մակարդակը կրկնակի նվազեցնելու ենք,
- հաշմանդամություն ունեցող անձանց նպաստները 26,500 դրամից դարձնելու ենք 33,000-52,000 դրամ՝ ըստ ծանրության աստիճանի,
- զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը 1-ին խմբի համար՝ 55,000 դրամ, 2-րդ խմբինը՝ 42,000 դրամ, 3-րդ խմբինը՝ 37,000 դրամ:

• Տեսչական մարմնի կարողությունների զարգացման և գործառույթների վերանայման միջոցով բարելավելու ենք աշխատողների իրավունքների պաշտպանության համակարգը և նոր իրավական գործիքակազմով ու լիազորություններով օժտված արհմիությունների միջոցով ապահովելու ենք աշխատանքային վեճերի լուծման արտադատական մեխանիզմները:

Արդյունքում կապահովենք աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական և արդյունավետ պետական վերահսկողություն և կբարձրացնենք հաշտեցման հանձնաժողովների և հաշտարարների գործունեության արդյունավետությունը:

• Շարունակաբար զարգացնելու ենք սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների անձնակազմի մասնագիտական կարողությունները: Մինչև 2023 թվականը Միասնական սոցիալական ծառայության սոցիալական աշխատողների 100%-ը անցնելու են մասնագիտական վերապատրաստումներ:

Արդյունքում յուրաքանչյուր քաղաքացի կստանա որակյալ և հասցեական ծառայություններ: Կբարձրանա մատուցվող սոցիալական ծառայությունների որակը, քանի որ կարիքի գնահատումն ու խնդրի ուղղորդումը կկատարվի անհատապես և պրոֆեսիոնալ սոցիալական աշխատողների կողմից:

• Ամբողջապես կայացնելու ենք նոր ներդրված միասնական սոցիալական ծառայությունների համակարգը հանրապետության ողջ տարածքում:

Արդյունքում յուրաքանչյուր անձ և ընտանիք իր սոցիալական կարիքներին համապատասխան սոցիալական ծառայությունների ամբողջական փաթեթը կստանա մեկ պատուհանից:

• Մշակելու և իրականացնելու ենք ցածր եկամուտներ ունեցող և անապահով ընտանիքների, ինչպես նաև այլ խոցելի խմբերի համար սոցիալական բնակարանային ապահովման քաղաքականություն:

Արդյունքում նպաստելու ենք աղքատության կանխարգելմանը և ապահովելու ենք սոցիալական նվազագույն պայմաններ դրա կարիքն ունեցող քաղաքացիների համար:

• Արցախից տեղահանված անձանց համար շարունակելու ենք իրականացնել սոցիալական աջակցության ծրագրեր:

Արդյունքում արցախցի մեր հայրենակիցները կընդգրկվեն ինչպես հումանիտար, այնպես էլ ծառայությունների մատուցման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում այնքան ժամանակ, որքան դրա կարիքը կունենան:

• Հանրապետության բոլոր մարզերում ընդլայնելու ենք ընտանիքում բռնության ենթարկված անձանց՝ սոցիալական, հոգեբանական, իրավաբանական աջակցության տրամադրման, վերապատրաստման կամ մասնագիտացման ծրագրերը:

Արդյունքում ընտանիքում բռնության ենթարկված անձինք կկարողանան ինքնուրույն կազմակերպել իրենց կյանքը և հոգալ սեփական կարիքները:

• Ընդլայնելու ենք բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակները և մատուցվող ծառայությունները՝ նպատակ ունենալով ներդնել կանանց տնտեսական զարգացմանն ու հզորացմանն ուղղված աջակցության նոր տեսակներ: Միջոցառման իրականացման շրջանակում յուրաքանչյուր աջակցության մեկ կենտրոնի (11 կենտոն) համար պահանջվող գումարի չափը կազմելու է շուրջ 15 մլն դրամ, որը տրամադրվելու է սոցիալական ձեռներեցություն հիմնելու, հումքի և աշխատավարձի համար:

Արդյունքում կապահովենք ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավական, սոցիալական, հոգեբանական, ապաստարանի տրամադրման ծառայությունները, ինչպես նաև կաջակցենք խոցելիություն ունեցող այս խմբի սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանը:

• Շարունակելու ենք երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագրի իրականացումը՝ այդ թվում բարեփոխելով օրենսդրական դաշտը:

Արդյունքում ապահովելու ենք երեխայի իրավունքների պաշտպանության համակարգը, այլընտրանքային խնամքի համաչափ և ըստ կարիքի ծառայությունների ցանցի ընդլայնումը, շուրջօրյա խնամքի ապաինստիտուցիոնալացումը, համալիր աջակցության տրամադրումը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին: Ունենալու ենք երեխայի իրավունքների իրացման համար բարենպաստ իրավական դաշտ, ապահովելու ենք թիրախային և կարիքահենք աջակցություն երեխային, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և ծնողների համար ապահովելու ենք ընտանեկան խորհրդատվություն, ծնողավարման, կենցաղավարման թեմաներով դասընթացներ, երեխայի կենսաբանական ընտանիքի բնակարանային պայմանների բարելավմանը և բնակարանի ձեռքբերմանն ուղղված ծրագրեր՝ ապահովելով երեխայի՝ ծնողների հետ վերամիավորումը, ինչպես նաև կանխարգելելով ընտանիքից երկարաժամկետ բաժանման ռիսկը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընտանեկան տիպի այլընտրանքային խնամքի կազմակերպումը:

• «Ընտանեկան օրենսգրքի», «Երեխայի իրավունքների մասին» օրենքի և այլ հարակից օրենքների փոփոխությամբ ստեղծելու ենք նոր մեխանիզմներ մանկալքությունը կանխելու, երեխայի որդեգրման և խնամատար ընտանիքում ապրելու գործընթացը վերահսկելու և բարելավելու համար:

Արդյունքում պաշտպանելու ենք ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը, ապահովելու ենք երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը, ինչպես նաև կանխարգելելու ենք հատուկ հաստատություններում երեխայի հայտնվելը: Կանխարգելելու ենք երեխաների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը և խրախուսելու ենք երեխաների խնամքի կազմակերպումն ընտանիքում:

• Մանկատներում ներդնելու ենք կիրառական մասնագիտացումների դասընթացներ՝ զարգացնելով սաների կարողություններն ու հմտությունները:

Արդյունքում կնպաստենք մանկատներից դուրս եկող երիտասարդների անկախ և արժանապատիվ կյանքի կազմակերպմանը:

• Բացառելու ենք հաշմանդամության հիմքով խտրականությունը կյանքի բոլոր ոլորտներում, ապահովելու ենք հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ հաստատություններից դուրս անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունքի իրացումը:

Արդյունքում ստեղծելու ենք նոր ծառայություններ և բարելավելու ենք արդեն գործող աջակցման միջոցների տրամադրման, զբաղվածության և այլ ծրագրերը՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ և արժանապատիվ կյանքն ապահովելու համար, ապահովելու ենք հաշմանդամությամբ պայմանավորված ծախսերի առավելագույն փոխհատուցումը: Սա նշանակում է աշխատատեղերի հարմարեցում հաշմանդամություն ունեցող նոր աշխատողի համար, հաշմանդամություն ունեցող անձի աշխատավարձի մասնակի փոխհատուցում և, անհրաժեշտության դեպքում, ուղեկցողի դրամական օգնության տրամադրում, ինչպես նաև 13 զբաղվածության պետական ծրագրերում առաջնահերթության կարգով ընդգրկվելու իրավունք:

• Շարունակելու ենք զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ստացած անձանց սոցիալական երաշխիքների տրամադրումը: 2021 թվականի մայիսի 1-ից մեկնարկած՝ ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման միջոցառման օրինակով շարունակելու ենք իրականացնել նոր ծրագրեր: Արդեն իսկ աշխատանքի տեղավորած յուրաքանչյուր անձի համար առավելագույնը մեկ տարի ժամկետով գործատուին տալիս ենք աջակցություն՝ նշված անձանց աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկի չափով, եռամսյակային կտրվածքով՝ մինչև 100,000 դրամ, ինչպես նաև աշխատատեղի հարմարեցման անհրաժեշտության դեպքում, այդ նպատակով գործատուին տալիս ենք միանվագ փոխհատուցում մինչև 500,000 դրամ:

Արդյունքում բարելավելու ենք զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ստացած անձանց սոցիալ-վերականգնողական ծրագրերը և ծառայությունները, աջակցելու ենք նրանց սոցիալական վերաինտեգրմանը, զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմանն ու կարիերայի ուղորդմանը:

• Մինչև 2022 թվականը գնահատելու ենք սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող և դրանցից դուրս գտնվող շուրջ 1000 տարեցների սոցիալական կարիքները, մինչև 2023 թվականը հանրապետության 10 մարզում ստեղծելու ենք ցերեկային կենտրոններ՝ յուրաքանչյուրին առնվազն 50 այցելուի հաշվարկով, ճգնաժամային 3 կենտրոններ՝ 60 տարեցի համար, բոլոր մարզերում ներդնելու ենք տնային խնամքի ծառայությունը:

Արդյունքում իրականացնելու ենք տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահենք ծառայությունների ներդրման ու զարգացման 2021-2023 թվականների ծրագիրը՝ վերանայելով ողջ օրենսդրական դաշտը, ապահովելու ենք տարեց մարդկանց համար արժանապատիվ, առողջ և ակտիվ կենսակերպ, ինչպես նաև բարձրացնելու ենք խնամքի որակը:

• Որդեգրելու ենք սոցիալական աջակցության այնպիսի քաղաքականություն, որը հիմնված կլինի կարիքի գնահատման և բավարարման սկզբունքի վրա այնպես, որ բացառվի անձի կախյալությունը և խրախուսվի քաղաքացու սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Ներդնելու ենք անապահովության գնահատման նոր համակարգ:

Արդյունքում սոցիալական աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական: Առաջարկվող ոչ ֆինանսական ծառայությունների փաթեթները ուղղված կլինեն մարդկանց առաջնային կարիքների բավարարմանը՝ կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում: Կունենանք սոցիալական խնդիրների լուծման հստակ ճևաչափ՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծում:

• Շարունակելու ենք զարգացնել դժվարին իրավիճակում հայտնված և անապահով ընտանիքների կարողությունները՝ հիմնվելով 2019-2020 թվականներին իրականացրած աղքատության փուլային հաղթահարման փորձնական ծրագրի արդյունքների վրա:

Արդյունքում ավելի շատ ընտանիքների ենք տրամադրելու մասնագիտական հմտություններ, ինքազբաղվածության գործիքներ կամ գյուղատնտեսական արտադրության միջոցներ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից:

• Շարունակաբար վերանայելու և զարգացնելու ենք արդեն մեկնարկած ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված ծրագրերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխաներ ունեցող ընտանքների բնակապահովման միջոցառումներին, երեխաների խնամքի համար տրամադրվող նպաստներին, աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելուն աջակցող միջոցառումներին:

Արդյունքում կխթանենք երիտասարդ ընտանիքների ստեղծումը, երեխա ունեցող անձանց ներգրավումը աշխատաշուկայում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Մարզերում երիտասարդների զարգացումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը, քաղաքացիական հասարակության զարգացումը, մարզի բնակիչների մշակութային ժամանցը, մշակութային նախաձեռնությունների ապակենտրոնացումն ապահովելու համար հաստատվել է 6 նախագիծ:

Աջակցություն երիտասարդ ընտանիքներին ծրագրի շրջանակներում 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ սուբսիդավորվել է 5842 վարկ, որից՝ 2790-ը Երևան քաղաքում՝ ընդհանուր 33.3 մլրդ դրամ ծավալով, իսկ 3052-ը՝ մարզերում՝ ընդհանուր 22.5 մլրդ դրամ ծավալով:

«Կուսակցությունների մասին» օրենքում ներդրել ենք նպատակային ֆինանսավորման համակարգը, ըստ որի պետական ֆինանսավորման 20%-ը կուսակցությունները պարտավոր են ուղղել թիրախային ծրագրերի իրականացմանը, այդ թվում երիտասարդներին կուսակցության գործունեության մեջ ներգրավելու միջոցառումներին: Այդպիսով ինստիտուցիոնալ կերպով նպաստում ենք երիտասարդների ներգրավվածությանը քաղաքական գործընթացներին:

Մշակել և շրջանառության մեջ ենք դրել Երիտասրդական պետական քաղաքականության 2021-2025 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Զարգացնելու ենք երիտասարդների հանրային մասնակցության իրավական միջավայրն ու մեխանիզմները, մշակելու և ընդունելու ենք երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքը, քաղաքացիական նախաձեռնությունների իրականացումը խրախուսող և կամավորության մշակույթը զարգացնող օրենսդրական կարգավորումներ, ինչպես նաև ներդնելու ենք սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների հանրային մասնակցությունը խթանող աջակցության մեխանիզմներ:

Արդյունքում բարձրանալու է հանրային կյանքին երիտասարդների մասնակցության մակարդակը և երիտասարդներն ավելի արդյունավետ են մասնակցելու տեղական և ազգային մակարդակներում որոշումների ընդունման գործընթացներին:

• Նպաստելու ենք իրենց բնակության վայրերում երիտասարդների ներուժի բացահայտման և զարգացման, իրենց հետաքրքրությունների իրացման նպատակով ժամանցի կազմակերպման հնարավորությունների ստեղծմանը:

Արդյունքում երիտասարդները հնարավորություն են ունենալու իրենց համայնքներում աշխատել, ստեղծագործել և միաժամանակ իրենց գործունեությամբ նպաստել ապակենտրոնացման և տարածքային համաչափ զարգացման խնդիրների լուծմանը:

• Խրախուսելու ենք երիտասարդների քննադատական մտածողությունը, հետազոտական հմտությունների զարգացումը, նախաձեռնողականությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը և համացանցային գրագիտությունը: Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի աջակցման և ներդրման միջոցով, խթանելու ենք երիտասարդների ակտիվ քաղաքացիությունը՝ ժողովրդավարական կառավարման, մասնակցության ձևերի, որոշումների կայացման, սեփական իրավունքների իրացման, մեդիագրագիտության, կիբերանվտանգության, մարդու իրավունքների և այլ առանցքային թեմաների վերաբերյալ գիտելիքների և արժեքների ամրապնդմամբ, ինչպես նաև իրազեկվածության բարձրացմամբ:

Արդյունքում զարգանալու և բարելավվելու են երիտասարդների գիտելիքներն ու կարողությունները՝ որպես իրավագիտակից, պահանջատեր, ներգրավված և մեդիագրագետ քաղաքացիներ:

• Զարգացնելու ենք աշակերտական և ուսանողական խորհուրդների, երիտասարդական կենտրոնների և երիտասարդական կազմակերպությունների մասնակցային կարողությունները և հմտությունները, ինչպես նաև աջակցելու ենք տեղական և ազգային մակարդակներում գործող երիտասարդական կազմակերպություններին՝ շեշտադրելով մարզային երիտասարդության քաղաքացիական, միջանձնային, տեխնոլոգիական, ստեղծագործական և այլ ունակությունների զարգացումը:

Արդյունքում բարձրանալու է մարզերում և Երևանում գործող աշակերտական և ուսանողական խորհուրդների, երիտասարդական կենտրոնների և երիտասարդական կազմակերպությունների՝ որպես երիտասարդների հանրային մասնակցության առաջնային օղակների դերը:

• Աջակցելու ենք երիտասարդներին մրցունակ լինել 21-րդ դարի աշխատաշուկայում: Երիտասարդության մեր քաղաքականությունը երիտասարդների զբաղվածության խնդրին մոտենում է երիտասարդության՝ որպես տնտեսական առումով հանրության առավել ներուժային խմբի թիրախավորման տրամաբանությամբ:

Արդյունքում երիտասարդների շրջանում նվազելու է գործազրկությունը և լիովին իրացվելու է նրանց տնտեսական և ստեղծագործական ներուժը:

• Սոցիալական ձեռնարկատիրության իրավական դաշտի բարեփոխման և բիզնեսի աջակցման պետական նոր ծրագրերի ներդրման միջոցով աջակցելու ենք երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը և երիտասարդների կողմից ձեռնարկությունների հիմնադրմանը:

Արդյունքում ավելի շատ երիտասարդներ են հիմնելու իրենց սեփական բիզնեսը և ստեղծվելու են առավել բարենպաստ պայմաններ, որ երիտասարդները ծավալեն սոցիալական և հանրային կարևորություն ունեցող խնդիրների լուծմանն ուղղված ձեռնարկատիրական գործունեություն:

• Ընդլայնելու ենք մասնագիտական կողմնորոշման նախագծերի շրջանակը և ներդնելու ենք ապագա մասնագիտությանն առնչվող փորձառության ձեռք բերման նոր մոդելներ:

Արդյունքում բարձրանալու է մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետությունը, և սովորողները ոչ միայն կատարելու են ապագա մասնագիտության գիտակցված ընտրություն, այլև սովորելու են գնահատել սեփական կարողություններն ու հնարավորությունները՝ աշխատաշուկայի ընթացիկ և հեռանկարային պահանջների համատեքստում:

• Իրականացնելու ենք աշխատաշուկայի պահանջների և իրավիճակի ազգային հետազոտություն, ինչպես նաև երիտասարդների զբաղվածությունը և տնտեսական մասնակցությունը խթանելու նպատակով շեշտադրելու ենք կրթության բոլոր մակարդակներում երիտասարդների՝ 21-րդ դարի հմտությունների զարգացումը, այդ թվում՝ տնտեսական և ֆինանսական գրագիտությունը, ձեռնարկատիրական կարողությունները և աշխատանքային իրավունքների իմացությունը:

Արդյունքում բուհերում և միջին մասնագիտական հաստատություններում ներդրվելու են աշխատաշուկայի նոր պահանջներին համապատասխան մասնագիտություններ, երիտասարդներին տրվելու են սեփական զբաղվածությունը ապահովելու նոր հմտություններ, և ձևավորվելու է երիտասարդների տնտեսական մասնակցության համար առավել նպաստավոր միջավայր:

• Խթանելու ենք մշակութային, ստեղծարար, տեխնոլոգիական և գիտական ոլորտներում երիտասարդների զբաղվածությունը և ներգրավվածությունը:

Արդյունքում բարձրանալու է երիտասարդների մասնակցության մակարդակը մշակութային և գիտական ոլորտներում:

• Երիտասարդների շրջանում բարձրացնելու ենք քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելու գիտելիքների և հմտությունների մակարդակը:

Արդյունքում ունենալու ենք ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվող և հմուտ արձագանքող հանրություն, ինչը կբարձրացնի նաև պետության դիմակայունությունը:

• Բարձրացնելու ենք երիտասարդների իրազեկվածությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության, առողջ ապրելակերպի և հոգեկան առողջության վերաբերյալ:

Արդյունքում բարելավվելու է երիտասարդների և առհասարակ հանրության առողջությունը:

• Երիտասարդական ծրագրերի մշակման և իրականացման համատեքստում հավասարությունն ու ներառականությունը սահմանելու ենք որպես կարևոր՝ սկզբունքներ լրացուցիչ աջակցություն տրամադրելով սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների տարբեր խմբերին: Ներառականության ծրագրերում առանձնակի ուշադրություն ենք դարձնելու պատերազմի ֆիզիկական և հոգեբանական հետևանքները կրող երիտասարդների ներառմանը հանրային կյանքին:

Արդյունքում բարելավելու ենք երիտասարդների սոցիալական ներառումը՝ շեշտադրելով ներառման դժվարություններ ունեցող երիտասարդների կարիքները: Այս համատեքստում հատուկ ուշադրություն ենք դարձնելու պատերազմին մասնակցած և պատերազմի հետևանքներն անմիջականորեն իրենց վրա կրող երիտասարդների, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող, փախստական կամ տեխահանված, զինվորական ծառայությունից նախորդ 1

տարում զորացրված, սահմանամերձ կամ սահմանապահ բնակավայրերում ապրող երիտասարդների, ինչպես նաև այլ խոցելիություն ունեցող երիտասարդների, ինչպիսիք են ազգային փոքրամասնություն ներկայացնող, աղքատ կամ ծայրահեղ աղքատ, ներգաղթյալ կամ հայրենադարձված, չսովորող կամ չաշխատող, քրեական պատիժը կրող կամ պատժից նախորդ 1 տարում ազատված և վերահսկողության տակ գտնվող, աշխարհագրական և ենթակառուցվածքային դժվարություններ ունեցող բնակավայրերի, բնապահպանական, տեխնոլոգիական և այլ աղետների ազդակիր համայնքների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, սոցիալական բացառման ենթարկված այլ խմբերի երիտասարդների կարիքներին:

• Ստեղծելու ենք երիտասարդական ոլորտում պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցող պետական փորձագիտական կառույց, որը պատասխանատու կլինի երիտասարդական ծրագրերի որակի, շարունակականության, կայունության ապահովման, ինչպես նաև երիտասարդական պետական ծրագրերի փորձագիտական աջակցության տրամադրման համար:

Արդյունքում բարձրացնելու ենք երիտասարդական ոլորտում իրականացվող ծրագրերի վերահսկողության մակարդակը, իրականացնելու ենք առավել մասնակցային, փաստերի վրա հիմնված, համակողմանի և արդյունավետ երիտասարդական քաղաքականություն:

• Խրախուսելու և ֆինանսավորելու ենք մարզային համայնքներում երիտասարդական կենտրոնների հիմնադրումը և զարգացումը, քաջալերելու ենք ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական աշխատանքի և կամավորության առավել լայն ճանաչումն ու տարածումը:

Արդյունքում պետական աջակցությամբ հիմնելու ենք նոր համայնքային երիտասարդական կենտրոններ, որոնք ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական աշխատանքի և կամավորական ծրագրերի միջոցով նպաստելու են երիտասարդների սոցիալական, տնտեսական, մշակութային և կրթական կարիքների բավարարմանը, անձնային զարգացմանը, ինչպես նաև ժամանցի կազմակերպմանը:

• Ապահովելու ենք երիտասարդության ոլորտում փորձի փոխանակում Հայաստանի և ԵՄ-ի, ԵԱՏՄ-ի, ԱՊՀ-ի և այլ տարածաշրջանային գործընկերների միջև, ինչպես նաև խթանելու ենք գործընկերությունը և համատեղ ծրագրերի իրականացումը Հայաստանի և Սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների և կառույցների միջև:

Արդյունքում տեղական և միջազգային լավագույն փորձի և համագործակցության հիման վրա զարգանալու է երիտասարդական ոլորտը՝ որպես երիտասարդների մասնակցության և ներգրավման ամբողջական համակարգ:

ՄՇԱԿՈՒՅԹ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2018 թվականից սկիզբ ենք դրել կրթական-մշակութային «Դպրոցական աբոնեմենտային» ծրագրին, որը բաղկացած է 3 բաղադրիչներից՝ այցելություն պատկերասրահ (թանգարան), համերգասրահ, թատրոն: Ավելի քան 400,000 աշակերտ օգտվել է ծրագրից: Մշակութային հաստատություններին հատկացվող գումարը տարվա կտրվածքով աճել է շուրջ 400 միլիոն դրամով: Սկսել ենք նաև «Քո արվեստը» դպրոցում նախագիծը, որին մասնակցել են 47 արվեստագետ և շահառու են եղել հանրակրթական դպրոցների շուրջ1400 աշակերտներ, ինչպես նաև «ԴասԱ» նախագիծը՝ 13,000 աշակերտների մասնակցությամբ:

Մշակել ենք մշակութային միջոցառումներին մասնակցելու, թանգարաններ այցելելու համար տարիքային, աշխատանքային կենսաթոշակառուներին և հաշմանդամություն ունեցող անձանց անվճար տոմսեր տրամադրելու նոր կարգը:

2019 թվականին թանգարաններ է այցելել 1 մլն 230 հազար այցելու, ինչը 33%-ով ավելի է, քան 2017 թվականին թանգարաններ այցելած մարդկանց թիվը: Առաջին անգամ ֆիլմարտադրությանը հատկացվող պետական բյուջեի շուրջ կեսը տրվել է դեբյուտային ծրագրերին:

7 կառույց ստացել է նորահայտ հուշարձանի կարգավիճակ:

Ներդրվել է մշակութային դրամաշնորհային ծրագրերի իրականացման մրցութային համակարգը, ինչի արդյունքում ընդլայնվել է պետական միջոցների բաշխման թափանցիկության աստիճանը, ստեղծվել են մշակութային գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար հավասար մրցակցային պայմաններ:

2018-2020 թվականներին պետական ֆինանսավորմամբ կամ աջակցությամբ լույս է տեսել 65 անուն գիրք, տարբեր ծրագրերով պետական ֆինանսավորում կամ աջակցություն են ստացել 113 մամուլ կամ լրատվամիջոց, ընդ որում, 2020 թվականին ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում պետական աջակցությամբ լույս տեսնող մամուլի թիվը հասցրել ենք 9-ի: Հայաստանը մասնակցել է շուրջ 10 միջազգային գրքի ցուցահանդեսի կամ փառատոնի, 47 գրող մրցութային կարգով ստացել է անվանական դրամաշնորհ՝ ստեղծագործական աշխատանքով զբաղվելու համար: Հրատարակիչներից ձեռք ենք բերել ավելի քան 6000 գիրք՝ մարզային, համայնքային և դպրոցական գրադարանների համալրման նպատակով: Տեսողական խնդիրներով անձանց համար հրատարակել ենք Բրայլյան տառատեսակով 10 անուն գիրք և 320 տետր, ինչպես նաև 160 ժամ ընդհանուր տևողությամբ աուդիոգրքեր: 2019-2021 թվականներին 34 հայ դասական և ժամանակակից հեղինակների

ստեղծագործություններ պետական աջակցությամբ թարգմանվել են 17 լեզուներով:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Իրականացնելու ենք ժամանակակից ստեղծագործողների սոցիալական խնդիրների ու կարիքների ուսումնասիրություն և վերլուծության հիման վրա մշակելու ենք այդ խնդիրների համալիր լուծման մեխանիզմներ:

Արդյունքում ստեղծագործողներին տրամադրելու ենք թիրախային աջակցություն և սոցիալական բեռի թեթևացմամբ կարողանալու ենք ապահովել ստեղծագործական ակտիվություն:

• Հստակեցնելու ենք ինքնազբաղ ստեղծագործողների, ժողովրդական արհեստներով զբաղվող վարպետների սոցիալ-տնտեսական կարգավիճակը և իրավահարաբերությունները:

Արդյունքում կկարողանանք ոլորտի ստեղծագործողներին և վարպետներին ուղղել նպատակային դրամաշնորհներ և տրամադրել նաև ոչ ֆինանսական աջակցության այլ ձևեր:

• Օրենսդրորեն կարգավորելու ենք մեկենասության ոլորտը: Տեղեկատվական արշավների միջոցով աջակցելու ենք հովանավորների վարկանիշի բարձրացմանը:

Արդյունքում ձևավորելու ենք մեկենասության մշակույթ և կարգավորելու ենք իրավական դաշտը, ինչը կօգնի հեղինակներին իրենց ստեղծագործությունների կյանքի կոչման համար ներգրավել դրանցով հետաքրքրված մեկենասների:

• Բարելավելու ենք օրենսդրական դաշտը, այդ թվում՝ ներդաշնակեցնելով միջազգային օրենսդրության հետ: Մշակելու ենք ոլորտային ՊՈԱԿ-ների արդյունավետության գնահատման անհատական չափորոշիչներ: Խթանելու ենք ՊՈԱԿ-ների ֆինանսական ինքնավարությունը՝ եկամուտների տարբերակման միջոցով ավելացնելով արտաբյուջետային միջոցները:

Արդյունքում կառավարման մոդելների արդիականացման շնորհիվ կբարձրանա մշակութային գործունեություն ծավալող պետական հաստատությունների ծախսերի արդյունավետությունը, բյուջեների թափանցիկությունը և հանրային վերահսկողությունը, միաժամանակ կմեծանան արտաբյուջետային ֆինանսավորման հնարավորությունները:

• Տեխնիկապես վերազինելու ենք թատրոններն ու համերգասրահները, թանգարանները և գրադարանները: Լուսաձայնային սարքավորումների ձեքբերման և անվտանգության համակարգի ներդրման կապիտալ հատկացումները ավելացնելու ենք 75%-ով, երաժշտական գործիքների ձեռքբերման ու համալրման նպատակով հատկացումները՝ մինչև 80%-ով, գիտահետազոտական լաբորատորիաների և ներդրված սարքավորումների նպատակով հատկացումները՝ 50%-ով:

Արդյունքում կբարելավենք ոլորտային կառույցների գույքի և նյութատեխնիկական բազան, կարդիականացնենք մշակութային ոլորտում վերականգնողական, գիտահետազոտական սարքավորումներն ու լաբորատորիաները:

• Իրականացնելու ենք երիտասարդական կենտրոնների և արվեստի կացարանների առնվազն 10 պիլոտային նախագիծ:

Արդյունքում նախագծերի արդյունավետության և լավագույն փորձի վրա հիմնվելով՝ կմշակենք գործիքակազմ և ինստիտուցիոնալ հիմքերի վրա կդնենք ստեղծարար ոլորտների խթանումը:

• Գեղագիտական կրթության կենտրոնների թիվը 3-ից հասցնելու ենք 12-ի, համայնքներում իրականացվող մշակութային նախագծերն ավելացնելու ենք առնվազն 50%-ով: Խթանելու ենք միջհամայնքային համագործակցությունը՝ առանձին աջակցություն տրամադրելով թատերահամերգային համատեղ նախագծերին:

Արդյունքում ապահովելու ենք մշակութային կյանքին համայնքային ներգրավվածությունը, մշակույթը դարձնելու ենք ավելի հասանելի և ներառական՝ նպաստելով մշակույթի ապակենտրոնացմանը:

• Քարտեզագրելու ենք ժողովրդական արհեստանոցները և արվեստանոցները հանրապետության ողջ տարածքում՝ ըստ համայնքների և գործունեության տեսակների: Գույքագրելու ենք անկախության շրջանի մշակութային ժառանգությունն ըստ արխիվացված հավաքածուների և ակադեմիական հրապարակումների: Գույքագրելու ենք նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայ ժողովրդի պատմամշակութային անշարժ, շարժական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը:

Արդյունքում ունենալու ենք մշակութային ժառանության ամբողջական գույքագրում և քարտեզագրում, ինստիտուցիոնալ հիմքերի վրա ենք դնելու մշակութային ժառանգության պահպանումն ու փոխանցումը՝ համապատասխան բազաների մշակման և պարբերական թարմացման միջոցով:

• Ստեղծելու ենք մշակութային ժառանգության համապարփակ ներկայացման էլեկտրոնային հարթակ: Ամբողջացնելու ենք Հայաստանի Հանրապետության թանգարանային առարկաների շտեմարանը: Համալրելու ենք ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանը: Կատարելագործելու ենք հուշարձանների էլեկտրոնային շտեմարանը: Ապահովելու ենք գրավոր ժառանգության թվայնացման շարունակականությունը՝ համալրելով մինչև 1960 թվականը հրատարակված գրավոր ժառանգության թվայնացված միավորները:

Արդյունքում թվայնացման գործիքների ներդրմամբ ապահովելու ենք մշակութային ժառանգության հասանելիությունը, դյուրացնելու ենք մշակութային ժառանության պապանման և փոխանցման գործընթացը:

• Թանգարանային, գրադարանային, մշակութային ժառանգության պահպանության ոլորտի մասնագետներին վերապատրաստելու ենք միջազգային փորձին համապատասխան: Խթանելու ենք արվեստի պատմաբանների և քննադատների ինստիտուտի զարգացումը:

Արդյունքում ոլորտային մասնագետների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման շնորհիվ արդիականացնելու ենք մշակութային ժառանության պապանման և փոխանցման գործընթացը: Մասնագիտական կարողությունների կատարելագործումը նպաստելու է նաև մշակութային զբոսաշրջությանը:

• Դպրոցներում ներդնելու ենք մշակութային ժառանության պահպանության վերաբերյալ ուսումնական ձեռնարկ: Մանկավարժական համալսարանի ուսումնական ծրագրերում ներդնելու ենք թանգարանային մանկավարժության պարտադիր կուրս: Նոր հրատարակությունների և միջազգային լավագույն գրականության թարգմանությունների միջոցով արդիականացնելու ենք մշակութային ժառանգության ոլորտի մասնագիտական գրականությունը:

Արդյունքում կրթության տարբեր մակարդակներում ունենալու ենք մշակութային ժառանության ընդհանուր և մասնագիտացված դասընթացներ, թարմացված գրականություն, ինչի շնորհիվ էլ արդիականացնելու ենք մշակութային ժառանգության պահպանման ոլորտի բովանդակությունը, ապահովելու ենք ոլորտի զարգացման շարունակականությունը:

• Կատարելագործելու ենք պատմամշակութային անշարժ հուշարձանների ենթակառուցվածքները:

Արդյունքում պատմամշակութային հուշարձանների պահպանությունը և կառավարումը կիրականցվի բնության, պատմական միջավայրի, հնագիտական ժառանգության, զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման խնդիրների նկատմամբ համալիր մոտեցմամբ:

• Ներդնելու ենք գրադարաններում և թանգարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրեր:

Արդյունքում ապահովելու կրթամշակութային կյանքում գրադարանների ներգրավվածության շարունակական աճ՝ ներդնելով կառավարման արդիականացված մոդելներ:

• Թանգարաններում և գրադարաններում ընդլայնելու ենք կրթական բաղադրիչը՝ ավելացնելով կրթական ծրագրերի և գիտական հրապարակումների թիվը: Նախորդ ծրագրերի լավագույն փորձի վրա հիմնվելով՝ շարունակելու ենք իրականացնել ժամանակակից արվեստագետների և կրթական հաստատությունների համագործակցության ծրագրեր:

Արդյունքում համադրելու ենք կրթական և մշակութային քաղաքականությունները: Մշակութային ոլորտում շարունակելու ենք մեծացնել կրթական, իսկ կրթական ոլորտում՝ մշակութային բաղադրիչը:

• Ընդլայնելու ենք միջազգային կառույցների հետ համագործակցությունը (Բրիտանական խորհուրդ, ԵՄ պատվիրակություն, Ստեղծարար Եվրոպա, ՀՀՄՀ, Եվրոպայի Խորհուրդ, ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ և այլն): Մշակելու ենք համատեղ գործողությունների ծրագիր դիվանագիտական ներկայացուցչությունների և ոլորտի լիազոր մարմնի հետ: Տրամադրելու ենք միջազգային մշակութային-մասնագիտական հարթակներում մասնակցության հատուկ դրամաշնորհներ:

Արդյունքում կբարձրացնենք միջազգային համագործակցության մակարդակը, կկարողանանք որոշարկել մշակութային առաջնահերթ շուկաները, մեծացնել միջազգային տեղեկատվական դաշտում հայկական մշակույթի ներկայացվածությունը, կընդլայնենք միջազգային գիտաժողովներում, փառատոներում, համաժողովներում, ցուցահանդեսներում, կինոշուկաներում Հայաստանի Հանրապետության ներկայացվածությունը, կշարունակենք հայ գրականության հանրահռչակումը արտերկրում՝ մեծացնելով գրքի միջազգային ցուցահանդեսների մասնակցության շրջանակը և ընդլայնելով օտար լեզուներով հայ գրականության հրատարակության դրամաշնորհային ծրագիրը:

ՍՓՅՈՒՌՔ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Մեկնարկել ենք ենք «iԳործ» ծրագիրը: Աշխարհի լավագույն համալսարաններում մագիստրոսի աստիճան ունեցող 48 մասնագետներ մեկ տարի ժամկետով աշխատանքի են անցել Հայաստանի Հանրապետության 19 պետական կառավարման համակարգի մարմիններում: Կառավարության որոշման համաձայն ծրագրի մասնակիցները կարող են նաև ներգրավվել Արցախի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

Սկսել ենք Սփյուռքի մարդկային ներուժի վերհանման, դրա քարտեզագրման և տեղեկատվական բազայի ստեղծումը, որի նպատակն է վերհանել Սփյուռքի մասնագիտական, գիտական, կրթամշակութային և այլ ոլորտներում առկա մարդկային ներուժը:

2018-2019 թվականներին իրականացրել ենք «Քայլ դեպի տուն» Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության ծրագիրը, որին մասնակցել են 13-18 տարեկան շուրջ 900 սփյուռքահայ պատանիներ աշխարհի ավելի քան 30 երկրներից, իսկ 2020 թվականին կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ծրագիրն իրականացվել է առցանց ձևաչափով, որին մասնակցել են ավելի քան 250 սփյուռքահայ երիտասարդներ աշխարհի 30 երկրներից:

2018-2020 թվականներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ստացել ավելի քան 32,000 հայրենակիցներ, Հայաստանում մշտական և հատուկ կացության կարգավիճակ են ստացել շուրջ 5400 հայրենակիցներ: Կատարել ենք հայրենադարձությանը նպաստող օրենսդրական փոփոխություն, որի արդյունքում հայրենադարձ ընտանիքներն իրենց պատկանող գույքը Հայաստան տեղափոխելիս ազատվում են մաքսային բոլոր վճարներից: Շուրջ 330 հայրենադարձ ընտանիքներ օգտվել են այս փոփոխոխությունից՝ ազատվելով նախկինում գործող պետական տուրքից՝ ընդհանուր շուրջ 1.3 մլրդ դրամ:

Աշխատանքներ են տարվել «Հայրենադարձների ինտեգրման կենտրոնի» ստեղծման ուղղությամբ, մշակվել են կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները, որն աշխատելու է «Մեկ պատուհանի» սկզբունքով: Պատերազմով պայմանավորված՝ ինտեգրման կենտրոնի մեկնարկը տեղի կունենա 2021 թվականին:

Բեյրութի աղետից հետո Լիբանանի հայ համայնքին օգնելու նպատակով՝ Հայաստանից Բեյրութ են մեկնել օգնության 3 օդանավեր: Հայաստան է ժամանել շուրջ 2000 լիբանանահայ, տրամադրել ենք բնակարանի, կրթական և առողջապահական հարցերով աջակցություն: 1700 սիրիահայեր աշխատանքի

տեղավորման, բժշկական սպասարկման, բնակվարձի աջակցության, կրթական, իրավական և այլ խնդիրներով աջակցություն են ստացել: Փոխհատուցել ենք հայաստանյան բուհերում սովորող շուրջ 120 սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարների 40-50%-ը:

Ձեռք ենք բերել շուրջ 50,000 օրինակ ուսումնական գրականություն սփյուռքի համայնքների համար:

Խորացրել ենք մասնագիտական տարբեր ցանցերի հետ համագործակցությունը: Երևանում տեղի է ունեցել 5-րդ Հայ բժշկական համաշխարհային համագումարը, Հայկական առևտրային ցանցի Հայաստան-Սփյուռք գործարար կապերի զարգացման 4-րդ խորհրդաժողովը, «Ակցիա-առողջություն. Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության սրտաբանության եվրակովկասյան 7-րդ համաժողովը՝ ներգրավելով շուրջ 50 երկրի ավելի քան 1000 սփյուռքահայ մասնագետների:

Համագործակցությամբ մեկնարկել է բժշկական վեբինարների շարք: Այս ընթացքում իրականացվել է շուրջ 40 վեբինարների շարք ամբողջ աշխարհից հայ մասնագետների ներգրավմամբ:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Շարունակելու ենք ակտիվ փոխգործակցությունը Սփյուռքի համայնքների, կառույցների, անհատների հետ: Մենք Սփյուռքի համայնքները չենք դիտարկում որպես հայաստանյան և համահայկական խնդիրները լուծելու գործիք, այլ որպես այդ խնդիրների և դրանց լուծմանն ուղղված օրակարգերի ձևավորման գործուն մասնակից: Մենք նաև տեսնում ենք դեռևս չօգտագործված հնարավորություններ Հայաստանի և հայկական համայնքներ ունեցող երկրների միջև բարեկամական, տնտեսական, գիտական, մշակութային կապերի և համագործակցության ամրապնդման առումով:

• Շարունակելու ենք իրականացնել թիրախային ուսումնասիրություններ՝ գնահատելու Սփյուռքի համայնքների յուրահատկությունները, առկա ներուժը և կարիքները, ակնկալիքները Հայաստան-Սփյուռք փոխգործակցության վերաբերյալ:

Արդյունքում կունենանք Սփյուռքի ներուժն ու յուրահատկությունները նկարագրող քանակական և որակական տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի մշակել հասցեական քաղաքականություն:

• Շարունակելու ենք մշակել ծրագրեր, ստեղծել նոր ձևաչափեր Սփյուռքի մարդկային, գիտական, ստեղծագործական և տնտեսական ներուժը Հայաստանում քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, կրթական, գիտական կյանքում ներգրավելու ուղղությամբ:

Արդյունքում կունենանք Հայաստանի ներքին կյանքին առավել հաղորդակից, ներգրավված և կապված Սփյուռք, ավելի շատ հայրենադարձ երիտասարդություն:

• Մշակելու և իրագործելու ենք գիտական, մասնագիտական, կրթական, մշակութային, տնտեսական, առողջապահական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտներում համահայկական ցանցերի ստեղծման և զարգացման քաղաքականություններ և ծրագրեր:

Արդյունքում մեր հայրենակիցների ներգրավմամբ ունենալու ենք առաջատար երկրների մի շարք ոլորտների նորարարություններին հասանելի գիտելիք և փորձ, համատեղ ջանքերով հզորացող հայրենիք:

• Օրենսդրական և ինստիտուցիոնալ գործիքների միջոցով շարունակելու ենք սփյուռքահայերի՝ Հայաստանում ապրելու, հայրենադարձվելու, աշխատելու և ստեղծագործելու համար բարենպաստ միջավայրի կայացման, ինչպես նաև ներդրումներ կատարելու դյուրացման գործընթացը:

Արդյունքում կունենանք հայրենադարձների համար անխոչընտոդ, կեցության և աշխատանքի համար նպաստավոր պայմաններով Հայաստան, որտեղ Սփյուռքի մեր հայրենակիցների կողմից կատարվող ներդրումները կլինեն պաշտպանված և դյուրին:

• Դիտարկելու ենք Հայաստանում արևմտահայերենին հատուկ կարգավիճակ տալու օրենսդրական հնարավորությունները:

Արդյունքում դյուրացնելու ենք Հին սփյուռքից Հայաստան տեղափոխված մեր հազարավոր հայրենակիցների հաղորդակցությունը Հայաստանում ինչպես կրթական, մշակութային, այնպես էլ իրավական, վարչական շփումների ժամանակ:

• Հնարավորություններ ենք ստեղծելու Սփյուռքի մեր հայրենակիցների համար հայաստանյան հանրային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների և Սփյուռքի համայնքներում կատարվողի մասին հայաստանյան հանրության պատշաճ տեղեկացվածության համար:

Արդյունքում կբարձրանա Հայաստան-Սփյուռք փոխադարձ իրազեկվածության ու ճանաչելիության մակարդակը:

• Սփյուռքահայերի կողմից ստեղծվող մշակույթի և հատկապես հայալեզու մշակույթի հանրահռչակման հատուկ քաղաքականություն ենք վարելու՝ համագործակցելով Հայաստանում սփյուռքագիտության և Սփյուռքում հայագիտության կենտրոնների հետ:

Արդյունքում կբարձրանա Հայաստան-Սփյուռք փոխադարձ մշակութային իրազեկվածության ու ճանաչելիության մակարդակը:

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՈՆԱԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին և 2018 թվականից ի վեր ժողովուրդը վերըստին և անշրջելիորեն այն իրացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների և անմիջական ժողովրդավարության այլ միջոցներով: Ժողովրդաիշխանության արդյունավետ իրականացման համար կարևորագույն երաշխիքն է ժողովրդավարացման ինստիտուցիոնալիզացումը: 2018 թվականին ստանձնած մեր քաղաքական պարտավորություններն իրագործելու նպատակով նախորդ 2 տարիներին էականորեն բարեփոխել ենք ընտրական համակարգը, հանրաքվեի ինստիտուտը, քաղաքացիական նախաձեռնությամբ օրենքի նախագիծ ներկայացնելու ընթացակարգը և կուսակցությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը:

Ընտրական համակարգի բարեփոխումներ

Փոխել ենք ընտրակարգը՝ դարձնելով այն պարզ համամասնական և հրաժարվելով ռեյտինգային (ըստ էության քողարկված մեծամասնական) ընտրակարգից, որը դարձել էր տեղական բիզնես ներկայացուցիչների ու ապաքաղաքական այլ տարրերի օրենսդիր մարմնում հայտնվելու մեխանիզմ, որը ծառայում էր բիզնես և այլ խմբային շահերի առաջ մղմանը: Ընտրակարգի փոփոխությունը 25 տարվա բոլոր քաղաքական ընդդիմությունների ու ժողովրդական լայն պահանջ էր:

Առավել թափանցիկ ենք դարձրել նախընտրական քարոզարշավը՝ հայտարարագրման դաշտ բերելով մինչ այս ստվերում եղած գույքի վարձակալության և մատուցված ծառայությունների ծախսերը, քրեականացնելով Ազգային ժողովի ընտրություններում նախընտրական հիմնադրամից դուրս քարոզչության ծախսերի կատարումը, պարտադիր դարձնելով Հանրային հեռուստատեսությամբ նախընտրական բանավեճի ինստիտուտը, ինչի բացակայությամբ տարիներ ի վեր ընտրողը չուներ հնարավորություն տեսնելու առողջ քաղաքական բանավեճ՝ իր ձայնի համար մրցակցող կուսակցությունների և թեկնածուների միջև:

Առավել լավ հնարավորություն ենք ստեղծել նորաստեղծ և կայացող կուսակցությունների՝ քաղաքական կյանքին մասնակցության համար, մասնավորապես, Ազգային ժողովի անցողիկ շեմը հաջորդ ընտրություններին կուսակցությունների համար կիջնի՝ դառնալով 4%, իսկ դաշինքների համար կբարձրացվի՝ դառնալով 8-10%՝ պայմանավորված այդ դաշինքներում ընդգրկված կուսակցությունների քանակով, ինչը նախադրյալներ կստեղծի Ազգային ժողովում ընդդիմության առավել արդյունավետ ներկայացվածության համար: Բացի այս, փոխել ենք մանդատների բաշխման կարգը՝ երաշխավորելով քաղաքական փոքրամասնության արդարացի ներկայացվածությունը

Ազգային ժողովում: Միաժամանակ, նվազեցրել ենք կուսակցությունների՝ ընտրություններին մասնակցության համար նախատեսված ընտրագրավը՝ 10 մլն դրամից իջեցնելով 7.5 մլն դրամի:

Մեր երկրում քաղաքական կյանքին բոլորի հավասար մասնակցությունը խթանելու համար ավելացվել է սեռերի բաշխվածության համամասնությունը ընտրացուցակներում մինչև 30%:

Ընտրությունների նկատմամբ վստահության ապահովման ավելի մեծ երաշխիքներ ենք ստեղծել՝ լուծելով ընտրողների ցուցակների կազմման կարգի հետ կապված երկրարամյա խնդիրը: Ըստ այդմ, Հայաստանից դուրս գտնվելու տարիներին մահացած կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած անձանց տվյալները կհանվեն ցուցակներից: Բացի այս, արգելել ենք ընտրական հանձնաժողովներում ընդգրկել ընտրական հանցագործությունների համար դատապարտված անձանց և խստացրել ենք ընտրական հանցագործությունների պատիժները: Ընտրակաշառք տալը կամ խոստանալը, քարոզչություն կատարելուն հարկադրելը, խոչընդոտելը, հավաք անցկացնելուն կամ մասնակցելուն խոչընդոտելը, հարկադրելը, նյութապես շահագրգռելը այսուհետ լինելու են ծանր և միջին ծանրության հանցագործություններ:

Կուսակցական համակարգի բարեփոխումներ

Մեր երկրում քաղաքական կուսակցությունների կայացման և քաղաքական կյանքի առողջացման նպատակով բարելավել ենք կուսակցություններ հիմնադրելու համար նախատեսված պայմանները, ավելացրել ենք կուսակցությունների պետական ֆինանսավորումը, որն առավել արդարացի կբաշխվի ընտրություններին մասնակցած կուսակցությունների միջև՝ ըստ նրանց ստացած քվեների:

Կուսակցական գործունեության թափանցիկության ապահովման նպատակով ներդրել ենք գործուն մեխանիզմներ կուսակցությունների ֆինանսական մուտքերը և ելքերը վերահսկելու համար: Բացի այս, նախատեսել ենք կուսակցության ղեկավար մարմինների անդամների հայտարարագրման ինստիտուտը, ինչը թույլ կտա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հետևել կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների գույքի և եկամուտների փոփոխություններին:

Ներկուսակցական ժողովրդավարության զարգացման համար նախատեսել ենք հերթական ընտրություններին կուսակցության ընտրական ցուցակի գաղտնի քվեարկությամբ ձևավորելու ընթացակարգ: Ապահովելու ենք «Ընտրական օրենսգրքում» և «Կուսակցությունների մասին» օրենքում կատարված բարեփոխումների ամբողջական իրագործումը:

ԴԱՏԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Դատահիրավական համակարգում բարեփոխումների ջանքերը միտված են եղել նախ դատավորների բարեվարքության ամրապնդմանը և առավել երկարաժամկետ կտրվածքով բարեվարքության տեսանկյունից անբիծ և պրոֆեսիոնալ կադրերին դատավորի պատվաբեր պաշտոնում ներառմանը: Երկրորդիվ, մեր ջանքերը միտված են եղել ապահովելու դատարանների բեռնաթափում և հետևաբար գործերի քննության ժամկետների կրճատում, որպեսզի մեր քաղաքացիները չսպասեն դատարանի որոշմանը երկար տարիներ: Երրորդիվ, մեր կարևոր նպատակը եղել է արդարադատության ոլորտում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավումը, քաղաքացիների կյանքի հեշտացումը:

Գաղտնիք չէ, որ դատական համակարգում բարեվարքության խնդիրը եղել և առայժմ էլ մնում է հիմնական խնդիրներից մեկը: Ուստի, մենք ներդրել ենք դատավորների բարեվարքության ստուգման և իրավական հետևանքների հանգեցնող արդյունավետ մեխանիզմ: Այսպես, նախ ձևավորել ենք անկախության բարձր աստիճան ունեցող բարեվարքության ստուգման մասնագիտացված մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որին օժտել ենք անհրաժեշտ ամբողջական գործիքակազմով:

2020 թվականից աշխատող այս մեխանիզմի արդյունքում կատարվել է՝

- Բարձրագույն դատական խորհրդի բոլոր անդամների և նրանց ընտանիքների անդամների 130 հայտարարագրերի ուսումնասիրություն, որի արդյունքներով առավել լուրջ խախտումների մասով ընթանում են գործընթացներ քրեական վարույթի կարգով, իսկ ավելի նվազ խախտումների դեպքում կարգապահական և վարչական վարույթներ,

- Սահմանադրական դատարանի դատավորների և նրանց ընտանիքների անդամների 110 հայտարարագրերի ուսումնասիրություն, և այս գործընթացը դեռ շարունակվում է,

- 47 անձի (թեկնածուի) բարեվարքության ստուգում, որից 26-ի առնչությամբ ներկայացվել է դրական եզրակացություն, 16-ի վերաբերյալ՝ դրական վերապահումով, 4-ի վերաբերյալ՝ բացասական, 1-ի առնչությամբ եզրակացություն չի ներկայացվել, 1-ի դեպքում խախտման փաստերով հարուցվել է քրեական գործ:

Դատավորների բարեվարքության ստուգման այս մեխանիզմից բացի, 2018 թվականից ի վեր արդարադատության նախարարը Բարձրագույն դատական խորհրդին 36 վարույթով ներկայացրել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններ, որոնց արդյունքներով

3 դատավորի լիազորություն դադարեցվել է, իսկ 15 վարույթներով դատավորների նկատմամբ կիրառվել են կարգապահական միջոցներ:

Տասնամյակներ ի վեր լուրջ խնդիր է գործերի քննության ժամկետները: Այս ընթացքում մենք իրականացրել ենք այդ ժամկետների կրճատման կոնկրետ քայլեր: Այսպես՝

• 2019 թվականին իրականացված օրենսդրական փոփոխություններով ՃԵԿ խախտումներով վարչական գործերի մասով ՃՈ դեմ Վարչական դատարան ներկայացված դիմումների թիվը 2018 թվականի համեմատ 2020 թվականին կրճատվել է 3 անգամ՝ 7450-ից իջնելով 2042-ի, և սա այնպիսի պայմաններում, որ ՃԵԿ խախտումներով կայացված որոշումների թիվը 2018 թվականի համեմատ 2020 թվականին աճել էր 73,000:

• Արդեն կատարված և նախատեսվող փոփոխություններով դատավորների թվաքանակն ավելացվել է 42-ով, ինչն էական նշանակություն կունենա դատավորների ծանրաբեռնվածության թեթևացման, հետևաբար՝ քաղաքացիների կողմից դատարան ներկայացվող գործերի քննության ժամկետների կրճատման համար:

• 2021 թվականից ներդրել ենք վճարման կարգադրությունների էլեկտրոնային քննության համակարգ, որի գործարկումից հետո՝ միայն 2021 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում ստացվել է 6156 էլեկտրոնային կարգադրություն, ինչը այդ ժամանակահատվածում գրավոր կարգով ստացվածների 23%-ն է և նույն ժամանակահատվածում մուտքագրված քաղաքացիական հայցերի՝ 11.5%-ը, ինչը նշանակում է անհամեմատ ավելի կարճ ժամկետներում վճարման կարգադրությունների քննություն, ինչպես նաև մյուս գործերի համար խնայված ժամանակ:

Ծուրջ 10 տարվա քննարկումներից հետո ընդունվել է քրեական օրենսգիրքը, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքի նախագիծն ընդունվել է առաջին ընթերցմամբ: Ի թիվս այլ կարևոր փոփոխությունների նախատեսվել են նաև դատավարական սուբյեկտների իրավունքների պաշտպանության առավել բարենպաստ կարգավորումներ, ընդլայնվել են պատժատեսակները, որոնք այլընտրանքն են ազատազրկմանը:

Խոշտանգումների կանխարգելման նպատակով Ոստիկանության 21 ստորաբաժանումների՝ հարցաքննության համար նախատեսված սենյակներում տեղադրվել են տեսաձայնագրման համակարգեր, 20 տարածքային ստորաբաժանումների ելքերում և մուտքերում տեղադրվել են 70 տեսահսկման համակարգեր: Սրանով կնվազեցվեն ոստիկանություն բերման ենթարկվող կամ ոստիկանությունում գտնվող անձանց խոշտանգման ենթարկվելու ռիսկերը: Մենք քրեականացրել ենք բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ։

• Ապահովելու ենք անկախ և բարեվարք դատավորների մուտքը դատական համակարգ, ինչը անկախ դատական համակարգի կայացման գլխավոր գրավականներից է։

Արդյունքում կբարձրանա քաղաքացիների վստահությունը դատական համակարգի նկատմամբ, դատական համակարգի բարեվարք դատավորներով համալրումը կազդի հանրային կյանքի բոլոր ոլորտների՝ ներառյալ գործարար միջավայրի վրա։ Ոչ բարեվարք դատավորները աստիճանաբար կզտվեն դատական համակարգից։

• Սահմանադրության փոփոխությունների հայեցակարգով և նախագծով առաջարկելու ենք ստեղծել Գերագույն դատարան, բարելավելու ենք դատավորների բարեվարքության ստուգման սահմանադրական հիմքերը։

Արդյունքում վերջ կդրվի բարձրագույն դատական ատյանների կողմից հակասական դիրքորոշումների արտահայտմանը, նոր ընթացակարգով ընտրված Գերագույն դատարանի գործունեության շնորհիվ կբարձրանա հանրային վստահությունը դատական իշխանության նկատմամբ, ինչպես նաև կկրճատվեն գործերի քննության ժամկետները։

• Ներդնելու ենք էլեկտրոնային արդարադատության ամբողջական համակարգ։

Արդյունքում բոլոր տեսակի գործերի (քրեական, քաղաքացիական, վարչական, սնանկության) քննությունը, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման վարույթը իրականացվելու է ավելի սեղմ ժամկետներում, խնայվելու են դատավարության մասնակիցների ռեսուրսները և քաղաքացիները ստիպված չեն լինելու գործերի քննության արդյունքներին սպասել տարիներով։ Բացի այս, նշվածի արդյունքում կբարելավվի ներդրումային միջավայրը։

• Զարգացնելու ենք մասնագիտացված դատարանների և առանձին գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտները, այդ թվում՝ Հակակոռուպցիոն դատարանի և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների ենթամասնագիտացման միջոցով։

Արդյունքում կբարձրանա ընդունված դատական ակտերի որակը և հասարակության վստահության մակարդակը դատական իշխանության նկատմամբ, քանի որ այդ գործերը կքննեն հանրության վստահությունը վայելող դատավորները, որոնք կընտրվեն անաչառ ու թափանցիկ ընթացակարգերով և կունենան նեղ մասնագիտացում։ Այս ջանքի արդյունքում վստահաբար կանխատեսելի կդառնան և կկրճատվեն կոռուպցիոն բնույթի գործերով դատական քննության ժամկետները։

• Արդեն արվածի արդյունքների հիման վրա կատարելագործելու ենք կարճ ժամկետում իր արդյունավետությունն ապացուցած գույքային դրության ստուգման մեխանիզմները և նպաստելու ենք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների զարգացմանը։

Արդյունքում մեծանալու է կոռուպցիայի կանխարգելման պետական պոտենցիալը, աճելու են կոռուպցիոն երևույթների բացահայտման դեպքերը՝ հանգեցնելով կոռուպցիայի դեմ արդյունավետ ինստիտուցիոնալ

գործելակերպերի արմատավորմանը:

• Մենք շարունակելու ենք կատարելագործել մեր օրենսդրությունը բռնության, ատելության, թշնամանքի, խտրականության դեմ պայքարում՝ ժողովրդավարությունը պաշտպանելու և իրավունքի չարաշահման դեպքերը կանխելու նպատակով:

Տարաձայնությունները և բազմակարծությունը պետք է լինեն հանրային լայն երկխոսության առիթ՝ հանգելով համերաշխության և հանրային փոխվստահության:

• Մենք ուշադիր ենք լինելու մարդու իրավունքների պաշտպանվածության նկատմամբ հատկապես խոցելի խմբերի պարագայում:

Ոչ մի սոցիալական խումբ մեկ այլ խմբի նկատմամբ չհիմնավորված կամ օրենքով չնախատեսված արտոնություններ չի կարող ունենալ: Մեր ուշադրությունը սևեռված է լինելու նաև մարդկանց և իրավապահ համակարգի միջև հարաբերություններին՝ բացառելու համար բռնության, խոշտանգման, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վարվելակերպերի կանխարգելմանն ու հետապնդմանը, ինչպես նաև ապահովելու համար մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքը բոլոր պարագաներում: Մենք երաշխավորելու ենք նաև իրավապաշտպանների համար իրապես ազատ և անխոչընդոտ գործունեության իրավական և գործնական պայմաններ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Մենք մշակել և ինտենսիվ իրականացնում ենք ոստիկանության ոլորտի բարեփոխումներ, քանի որ համոզված ենք, որ «պետության հարկադրանք կիրառող», «օրվա իշխանությանը ծառայող» մարմնի իմիջն ու ընկալումն անհրաժեշտ է փոխել հանրության անվտանգությունն ապահովող, հանրությանը ծառայող ու օգնության հասնող վստահելի և հարգանքի արժանի հանրային ծառայության տեսակի:

Ոստիկանության բարեփոխումները մենք սկսել ենք քաղաքացիների հետ ամենաշատը շփվող արտաքին ծառայության փոփոխությունից: Ստեղծում ենք անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով և ժամանակակից տեխնիկական միջոցներով զինված ու բարեվարք պարեկային ծառայություն: Արդեն ապահովել ենք պարեկային ծառայության ներդրման օրենսդրական հիմքերը, նախատեսել ենք արժանապատիվ վարձատրության չափ, որը 30-50%-ով ավել է համակարգում գործող վարձատրության չափերից: Երևան քաղաքում պարեկային ծառայության ներդրման նպատակով ավելի քան 2500 դիմորդից բաց ու թափանցիկ ընտրության միջոցով իրականացվել է շուրջ 700 սովորողների ընտրություն:

Կենտրոնական ուշադրություն ենք դարձրել ծառայողների կրթության բովանդակությանն ու կրթական միջավայրին, քանի որ վստահ ենք, որ հանրությանն իրապես ծառայող, հանցագործություններն ու իրավախախտումները կանխարգելող ու խափանող ոստիկանի կենտրոնական ռեսուրսը ժամանակակից մասնագիտական կրթությունն է: Ուստի, Ոստիկանության կրթահամալիրում ապահովել ենք ժամանակակից կրթական միջավայր, բաց մրցույթով ընտրել ենք բոլոր դասախոսներին, և 2021 թվականի հունվարից մեկնարկել է սովորողների հնգամսյա կրթական ծրագիրը: Այս ընթացքում ձեռք ենք բերել նոր ծառայության տրանսպորտային միջոցներ, ներդրել ենք ժամանակակից ռադիոկապի համակարգ, ձեռք ենք բերել պրոֆեսիոնալ համազգեստ, նոր զենք, ժամանակակից տեխնիկական ու հատուկ միջոցներ:

Պարեկային ծառայությունը Երևանում կգործարկվի 2021 թվականի հուլիսից, և պարեկային ծառայողը կլինի բնակչության անվտանգությունն ու հասարակական կարգն ապահովող բարեվարք ծառայող, որն իր ստացած կրթությամբ, ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ ու վստահ ծառայությամբ բարելավելու է հանրային ընկալումն ու վստահությունը ոստիկանության նկատմամբ: Այս տեսակի փոփոխությունները շարունակվելու են Ոստիկանության մյուս ծառայություններում:

Բնակչության ահազանգերը լավագույնս և արագ սպասարկելու համար ստեղծում ենք Օպերատիվ կառավարման կենտրոն՝ ոստիկանական ուժերի կառավարման ժամանակակից տեխնիկական հնարավորությամբ, որպեսզի դժվարին իրավիճակում հայտնված անձինք մեկ զանգով ժամանակին ստանան որակյալ աջակցություն: Այս ընթացքում ապահովել ենք Օպերատիվ կառավարման կենտրոնի աշխատակազմի մասնագիտական կրթությունը, տեխնիկական հագեցվածությունն ու ծրագրային ապահովումը: Կենտրոնը կգործարկվի 2021 թվականի հուլիսից:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Մինչև 2023 թվականը բոլոր մարզերում ներդնելու ենք ժամանակակից պարեկային ծառայությունը:

Արդյունքում ունենալու ենք ժողովրդավարական պետությանն ու հանրությանը բնորոշ ոստիկանություն: Կփոխվի ոստիկանության հանրային ընկալումը «պետության հարկադրանք կիրառող» և «օրվա իշխանությանը ծառայող» մարմնից դեպի հանրության անվտանգությունն ապահովող, վստահելի և առավել մեծ հարգանքի արժանի հանրային ծառայության:

• Ստեղծելու ենք Ներքին գործերի նախարարություն:

Արդյունքում ունենալու ենք ոլորտի քաղաքականությունը մշակող և իրականացնող, հաշվետվողականության ու քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներ ունեցող գործադիր իշխանության պատասխանատու մարմին, որը շարունակաբար զբաղվելու է ոստիկանության համակարգի բարեփոխումներով: Քաղաքացիների համար նախարարությունը կդառնա ոստիկանության գործողությունների քաղաքական պատասխանատուն, իսկ Ոստիկանության ծառայողի համար՝ ծառայության խնդիրների լուծման, համակարգի առավել լավ ֆինանսավորման պատասխանատուն:

• Նորացնելու ենք հանցավորության դեմ պայքարում ոստիկանության ինստիտուցիոնալ կարողությունն ու մասնագիտական պատրաստվածությունը:

Արդյունքում ունենալու ենք հանցագործության դեպքերի բացահայտման առավել բարելավված ցուցանիշներ և կատարված հանցագործությունների համար պաստախանատվության անխուսափելիության սկզբունքի ամրապնդում:

• Շարունակելու ենք բարեփոխել Ոստիկանության ծառայողների մասնագիտական կրթությունը, ինչպես նաև բարելավել արժանի վարձատրության ու սոցիալական երաշխիքների համակարգը:

Արդյունքում կունենանք արդարացի և արժանապատիվ վարձատրություն և երաշխիքներ Ոստիկանության բոլոր ծառայությունների համար և իհարկե ժամանակակից մարտահրավերներին պատրաստ ու անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ունեցող հմուտ ոստիկաններ ծառայության բոլոր մակարդակներում, ինչը կնպաստի քաղաքացիների իրավունքների արդյունավետ պաշտպանությանն ու հասարակական կարգի ապահովմանը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2018-2020 թվականներին Հայաստանում ձևավորվել է անկաշկանդ և բարենպաստ միջավայր կոռուպցիան արմատախիլ անելու համար՝ կոռուպցիայի կանխարգելման, կոռուպցիոն գործերի քննության ու դատապարտման համար, ինչի արդյունքում 2018-2020 թվականների ընթացքում քրեական գործերով, որոնց ճնշող մեծամասնությունը՝ կոռուպցիոն բնույթի, վերականգնվել է Հայաստանի Հանրապետությանը պատճառված 54.4 մլրդ դրամի վնաս: Համեմատության համար 2009-2017 թվականներին, այսինքն՝ 9 տարիների ընթացքում վերականգնվել է մոտ 21 մլրդ դրամ: Այսինքն, 3 տարիների ընթացքում վերականգնվել է 2.6 անգամ ավելի շատ վնաս, քան դրան նախորդած 9 տարիների ընթացքում միասին վերցրած:

2018-2020 թվականներին քննված քրեական գործերով բացահայտված Հայաստանի Հանրապետությանը պատճառված ընդհանուր վնասի չափը կազմել է 417.7 մլրդ դրամ, ինչն ավելի քան 11 անգամ գերազանում է 2009-2017 թվականներին հայտնաբերված վնասի չափը միասին վերցրած: Կոռուպցիայի դեմ համակարգային պայքարի շրջանակներում ձևավորել ենք կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, և զգալիորեն ընդլայնել դրա լիազորությունների շրջանակը: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանման նպատակով ամբողջությամբ ընդունել ենք «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը և հարակից փոփոխությունները: Ներկայումս Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում ավելի քան 220 գործով որոշում է կայացվել նախաձեռնելու ուսումնասիրության վարույթ, որոնք ընթացքի մեջ են, և առաջիկայում առաջին գործերը կուղարկվեն դատարան:

Մենք հետևողական ենք կոռուպցիայի դեմ պայքարը ինստիտուցիոնալ դարձնելու հարցում, ուստի, հայտարարագիր ներկայացնող անձանց գործունեության առավել թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով ներդրել ենք նոր՝ ծախսերի հայտարարագրման և իրավիճակային հայտարարագրի ինստիտուտները: Ներդրել ենք մեխանիզմ, համաձայն որի հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնավարման դադարեցումից հետո 2 տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրավասու կլինի պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:

Ընդլայնել ենք հայտարարատուների շրջանակը: Արդյունքում նախկին 3000-ի փոխարեն ներկայումս հայտարարագիր են ներկայացնելու 9000 անձ, իսկ ընդհանուր հայտարարատուների թիվը շուրջ 32,000 է:

Կոռուպցիայի դեմ պայքարի առաջին արդյունքներն արդեն արձանագրվել են: «Թրանսփարենսի ինթերնեշնլի՝ կոռուպցիայի ընկալման համաթվի վերջին 2 տարիների արդյունքներով Հայաստանը զգալի աճ է գրանցել՝ 14 միավորով բարելավելով դիրքերը: Մինչդեռ դրան նախորդող 7 տարիների ընթացքում Հայաստանը դիրքերը բարելավել է ընդամենը 2 միավորով:

Քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավման համար վերանայել ենք այս գծով տուրքի արտոնությունները: Արդյունքում այլևս պետական տուրք չի պահանջվի՝ ամուսնության գրանցման, ՔԿԱԳ տեղեկանքներ տրամադրելու, առցանց եղանակով անհատ ձեռնարկատեր հաշվառվելու, առանձին տառերի կամ թվերի կամ ուղղագրական սխալների փոփոխության համար:

Կատարված փոփոխություններով պետական տուրքից ընդհանրապես կազատվեն՝

- կենսաթոշակառուները,
- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամություն ունեցող երեխաները,
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձինք,
- ռազմական գործողությունների մասնակիցները, ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամություն ստացած, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձի ամուսինը, զավակը և ծնողը:

Մենք կրճատել ենք նաև այնպիսի ծառայությունների մատուցման ժամկետները, որոնք վերաբերում են ՔԿԱԳ տեղեկանքների տրամադրմանը (7 օրվա փոխարեն հենց տեղում), ապոստիլով վավերցման (նախկին 3 օրվա փոխարեն 1 օրում), ՔԿԱԳ ակտերի վերականգնմանը (4 ամսվա փոխարեն 15 օրում) և այլն:

2020 թվականի մարտի 8-ից ծնունդների գրանցումը սկսել ենք իրականացնել քաղաքացիների համար անհամեմատ ավելի հարմարավետ բժշկական հաստատություններում, որի արդյունքում քաղաքացիները այս և փոխկապակցված ծառայությունների համար ստիպված չեն լինում այցելելու մի քանի պետական մարմիններ, այլ բոլոր ծառայությունները ստանում են տեղում: Արդեն իրականացվել է 8206 ծնունդի պետական գրանցում:

Ծառայությունները սկսել են մատուցվել ժամանակակից սպասարկման կենտրոններում, այս պահին 3 միասնական գրասենյակներում՝ Երևանում, Իջևանում և Գյումրիում: Այս գործընթացը շարունակելու ենք դեպի այլ մարզեր:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Շարունակելու ենք ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի զարգացումը և գործնականում արդյունավետ կիրառումը:

Արդյունքում ապահովելու ենք անօրինական ձեռք բերված, գողացված գույքի վերադարձը պետությանը:

• Զարգացնելու ենք հակակոռուպցիոն ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմները:

Արդյունքում ունենալու ենք ապացուցահենք հակակոռուպցիոն քաղաքականություն:

• Պարզեցնելու ենք վարչարարությունը: Ներդնելու ենք էլեկտրոնային գործիքներ, ծառայությունների մատուցման միասնական և դյուրին համակարգ:

Արդյունքում կհաղթահարենք վարչական կոռուպցիան, քաղաքացիները կստանան հարմարավետ ու առավել մատչելի ծառայություններ:

• Հակակոռուպցիոն մարմինները՝ Հակակոռուպցիոն կոմիտեն և Հակակոռուպցիոն դատարանը, համալրելու ենք պրոֆեսիոնալ և բարեվարք կադրերով և ապահովելու ենք այս մարմինների գործունեությունը ամբողջական ծավալով:

Արդյունքում նոր կադրերով համալրված Հակակոռուպցիոն կոմիտեի և Հակակոռուպցիոն դատարանի գործունեության արդյունքում բարձրացնելու ենք կոռուպցիոն գործերի քննության արդյունավետությունը, զուգահեռաբար առավել մեծ թափով կընթանա ապօրինի գույքի բռնագանձման գործերի ընթացքը՝ ապահովելով պետական բյուջե վերադարձվող գումարները:

• Իրականացնելու ենք կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատում և դրա հիման վրա միջոցառումների ծրագրերի մշակում:

Արդյունքում նվազագույնի կհասցվեն կոռուպցիոն ռիսկերը հանրային ծառայության ոլորտում:

• Կրթության բոլոր օղակներում ներառելու ենք հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ առարկայական ծրագրեր:

Արդյունքում դեռևս վաղ տարիքից ձևավորելու ենք կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթ:

• Թվայնացնելու ենք հանրային ծառայությունները՝ դրանց մատուցումը իրականացնելով մեկ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով: Շարունակելու ենք հանրային ծառայության միասնական գրասենյակների ծավալումը մարզերում:

Արդյունքում կապահովվեն ծառայությունների մատուցման թափանցիկությունը, սպասարկման արագությունը, սպասարկման որակի բարձրացումը, կնվազեցվեն ավելորդ վարչարարությունը, բյուրոկրատիան, կբացառվեն հանրային ծառայությունների մատուցման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի բարեփոխման արդյունքում 2018 թվականից առ այսօր վաղաժամկետ ազատվել է շուրջ 1050 անձ: Դրան նպաստել է նաև մեր կողմից իրականացվող կրթությանը, զբաղվածությանը և այլ հմտությունների ձեռք բերմանը նպաստող վերասոցիալականացման միջոցառումների ինտենսիվացումը և ծավալների ընդլայնումը՝ կրճատելով կրկնահանցագործությունների ռիսկը:

Համալիր միջոցառումների արդյունքում Եվրոպայի խորհուրդը 2020 թվականի տարեկան քրեական վիճակագրությամբ Հայաստանը 100,000 բնակչի հաշվով անազատության մեջ գտնվողների թվով դասել է ամենացածր ցուցանիշն ունեցող երկրների շարքին, ինչը համեմատելի է Գերմանիայի, Դանիայի, Սլովենիայի, Շվեդիայի հետ: 2010 թվականի համեմատությամբ Հայաստանը արձանագրել է բանտային բնակչության թվի 50.4% կրճատում, որը համեմատական աղյուսակում երկրորդ լավագույն արդյունքն է:

Ինչպես նաև 100 տեղի հաշվով բանտային բնակչության խտությամբ Հայաստանը դասվում է ամենացածր ցուցանիշն ունեցող երկրների շարքին՝ 41.5%: Սա գրեթե 2 անգամ ցածր է եվրոպական միջինից (86.6%):

Էականորեն բարձրացրել ենք քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության և սպասարկման որակը: 2019 թվականի համեմատությամբ 2020 թվականին՝ անգամ համավարակի պայմաններում, 4 անգամ ավելի քիչ մահ է գրանցվել:

Բոլոր քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց սննդի տրամադրման գործընթացն սկսել ենք իրականացնել մասնավոր ընկերության կողմից: Պատրաստի սննդից օգտված շահառուների թվաքանակը կազմել է 100%, որն ինքնին հանգեցրել է փոխանցվող հանձնուքների թվի նվազմանը և անազատության մեջ պահվող անձանց հարազատների հոգսի թեթևացմանը:

Միջինը 30%-ով բարձրացրել ենք 2000-ից ավելի քրեակատարողական ծառայողների աշխատավարձը՝ հիմքում ունենալով քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ պայքար մղելու քաղաքականությունը, ինչպես նաև քրեակատարողական ծառայության գրավչության ապահովումը:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Շարունակելու ենք բարելավել քրեակատարողական հիմնարկների պայմանները։

Արդյունքում երաշխավորելու ենք արժանապատիվ պահման պայմաններ ազատությունից զրկված անձանց և աշխատանքային կենսապայմաններ քրեակատարողական ծառայողների համար։

• Քրեակատարողական համակարգում ներդնելու ենք էլեկտրոնային կառավարման, տեսահսկման և օպերատիվ կառավարման նոր գործիքակազմեր։

Արդյունքում ապահովելու ենք կադրերի հաշվետու և թափանցիկ գործելաոճը և բարձրացնելու ենք նրանց գործունեության արդյունավետությունը՝ նվազագույնի հասցնելով կոռուպցիոն ռիսկերը քրեակատարողական համակարգում։

• Ներդնելու ենք էլեկտրոնային և ժամանակակից այլ հսկման տեխնիկական համակարգեր։

Արդյունքում ունենալու ենք ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող այնպիսի պատժատեսակներ և խափանման միջոցներ, որոնց կիրառման արդյունավետությունը գործնականում կերաշխավորվի։

• Ազատությունից զրկված անձանց համար շարունակելու ենք ապահովել որակյալ բժշկական օգնություն և սպասարկում։

Արդյունքում ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի հասանելի կլինի նույն ծավալի բուժօգնություն, որը հասանելի է հանրության յուրաքանչյուր անդամի։

• Ամրապնդելու ենք ազատությունից զրկված անձանց՝ կրթության բնագավառում արդեն իսկ ունեցած նվաճումները և ստեղծելու ենք կրթական նոր հնարավորություններ, այդ թվում՝ հեռավար։

Արդյունքում գրանցելու ենք վերասոցիալականացման նոր նշաձող, ունենալու ենք մասնագիտական հմտություններ ունեցող դատապարտյալներ, որոնք աշխատելու և սոցիալական հաջող ինտեգրման արդյունքում կունենան հանցավոր գործունեությանը չվերադառնալու հնարավորություն։

• Շարունակելու ենք հետևողականորեն պայքար տանել և զրո հանդուրժողականություն ցուցաբերել քրեական ենթամշակույթի նկատմամբ։

Արդյունքում քրեակատարողական հիմնարկներում երաշխավորելու ենք արտոնյալների բացակայությունը և ապահովելու ենք ազատությունից զրկված անձանց իրավահավասարությունը։

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հանրային կառավարման համակարգի խորքային բարեփոխումներն արդյունավետ պետություն կայացնելու երաշխիք են: Հայաստանը շարունակում է անցնել ժողովրդավարական կայացման չափազանց կարևոր փուլ: Արդյունավետ պետության և ժողովրդավարության կայացումը առաջնորդելու գործում հանրային իշխանության բոլոր մարմինները կարևոր անելիքներ ունեն: 2020 թվականին մեր երկրի առջև ծառացած ճգնաժամերը՝ կորոնավիրուսային համավարակը և Արցախի դեմ սանձազերծված պատերազմը, առավել մեծ սրությամբ ի ցույց դրեցին մեր պետական ինստիտուտների խնդիրներն ու անկատարությունները:

Մենք 2019 թվականից արդեն ձեռնամուխ ենք եղել հանրային կառավարման համակարգում համընդգրկուն բարեփոխումների օրակարգ ձևավորելու ու իրագործելու գործին: Մի շարք կարևոր ռազմավարություններ ու գործողությունների ծրագրեր են ընդունվել և սկսել իրագործվել, որոնցից՝ հակակոռուպցիոն, պետական ֆինանսների կառավարման, թվայնացման, դատաիրավական բարեփոխումների և այլն: Մեր կառավարությունն արդեն ընդունել է նաև հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականը ռազմավարությունը, դրա շրջանակներում՝ 1-ին փուլի բարեփոխումների օրակարգը:

Մենք հանձնառու ենք իրագործել այդ ռազմավարությամբ ծրագրավորված բարեփոխումները հետևողականորեն և անշեղորեն: Երկարաժամկետ հատվածում դա մեզ կհասցնի մարդակենտրոն, կայուն, պատասխանատու և դինամիկ գործող պետական համակարգ ունենալու նպատակներին:

Ռազմավարական պլանավորման և քաղաքականությունների մշակման ուղղությամբ նախաձեռնելու ենք հետևյալ քայլերը:

- Ներդրնելու ենք ռազմավարությունների և քաղաքականությունների պլանավորման ու իրականացման առաջադեմ պրակտիկաներ և արդիականացելու ենք դրանց համար անհրաժեշտ մեթոդաբանական հիմքերը:

- Քաղաքականությունների մշակումը լինելու է փաստահենք, բավարար վերլուծական հիմնավորվածությամբ, կարգավորման ազդեցության գնահատման գործուն համակարգերով ու պրոֆեսիոնալ կարողություններով:

- Ներդնելու ենք քաղաքականությունների արդյունքների գնահատման ու հանրային հաշվետվողականության առաջադեմ պրակտիկա, այդ թվում՝ ուժեղացնելու ենք ինստիտուցիոնալ ու անհատական պատասխանատվության ինստիտուտը:

• Մշակելու և իրականացնելու ենք միասնական տվյալների քաղաքականություն, դրա ներքո արդիականացնելու ենք վարչական տեղեկատվական համակարգերն ու պաշտոնական վիճակագրության կարողությունները:

• Նշանակալիորեն ուժեղացնելու ենք ռազմավարությունների ու քաղաքականությունների համակարգման ու ներդաշնակեցման կարողությունները, այդ թվում՝ պատշաճ մարդկային կարողությունների ներգրավման և տեղեկատվական կառավարման համակարգերի ներդրման միջոցով:

Արդյունքում վերափոխելու ենք պետական համակարգում ռազմավարությունների և քաղաքականությունների մշակման գործող պրակտիկան, այն դարձնելու ենք առավել պրոֆեսիոնալ, փաստահենք, մասնակցային ու հաշվետու:

Պետության կողմից հանրությանը ծառայությունների մատուցման ուղղությամբ նախաձեռնելու ենք հետևյալ քայլերը:

• Մինչ օրս գույքագրել ենք արդեն թվով 400 պետական ծառայություններ, և սկսել ենք մոտ 100 ծառայությունների գծով բիզնես գործընթացների վերլուծության ու քարտեզագրման աշխատանքները:

• Մշակելու և իրագործելու ենք պետության և համայնքների կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների միասնական քաղաքականության:
• Ձևավորելու ենք ծառայությունների գնագոյացման խելամիտ և հիմնավորված համակարգ:

• Իրականացնելու ենք պետության և համայնքների կողմից մատուցվող ծառայությունների թվայնացում:
Արդիականացնելու ենք ծառայությունների համար տվյալների ռեգիստրները, այդ թվում՝ ապահովելու առկա թվային ռեգիստրների փոխգործելիությունը, իսկ ոչ թվային ռեգիստրների՝ թվայնացումն ու համակցելիությունը:

• Ներդնելու ենք թվայնացված հանրային ծառայությունների մատուցման միասնական էլեկտրոնային հարթակ, որից օգտվելը լինելու է առավելագույնս պարզ, մատչելի և արագ, հանրությունը ստանալու է ծանուցումները պետական մարմիններից:

• Պետական ծառայությունների համընդհանուր հասանելիությունն ապահովելու նպատակով մշակելու և ներդրելու ենք ծառայությունների միասնական գրասենյակների արդիական մոդել:

• Սահմանելու ենք պետական ծառայությունների՝ պատվիրակման կամ մասնավորի միջոցով մատուցման հայեցակարգային կառուցակարգերը, ձևավորելու ենք անհրաժեշտ իրավական հիմքերը:

• Ներդնելու ենք հանրային ծառայությունների որակի վերահսկողության գործուն համակարգ:

• Ներդնելու ենք հանրությանը ծառայությունների մատուցման աշխատանքային ու էթիկայի կանոններ:

Արդյունքում արմատապես բարեփոխելու ենք պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք դարձնելով քաղաքացիակենտրոն և արդիական, առաջադեմ տեխնոլոգիական հիմքով՝ նպատակ ունենալով թեթևացնել քաղաքացիների և գործարար հատվածի անհարկի բեռն ու քաշքշուքները պետության հետ հարաբերություններում:

Հանրային ծառայության և մարդկային ռեսուրսների կառավարման բնագավառում նախաձեռնելու ենք հետևյալ քայլերը՝

• Վերանայելու և արդիականացնելու ենք հանրային ծառայության համակարգը՝ ապահովելով միասնական հորիզոնական համակարգ, մասնավորապես՝ պետական համակարգում աշխատողների կարգավիճակը սահմանող, պաշտոնների դասակարգման, աշխատանքի ընդունման ու ազատման, կատարողականի գնահատման, վերապատրաստումների, աշխատանքի կազմակերպման և այլ հարաբերությունները կարգավորող միասնական օրենսդրություն:

• Հանրային ծառայության համակարգում ձևավորվելու ենք ավագ գործադիր կորպուսը՝ որպես հանրային ծառայության բարձրագույն մակարդակի կառավարման պաշտոններ զբաղեցնող արհեստավարժ ծառայողների խումբ, որի կազմում ընդգրկված քաղաքացիական ծառայողները մրցակցային հիմունքներով նշանակվում են այնպիսի պաշտոնների, որոնց գործառույթները ներառում են քաղաքականությունների մշակումը և իրականացումը, խորհրդատվությունը, օպերատիվ կառավարումը, հավաքական ծառայությունների մատուցումը և այլն:

• Առանցքային բարեփոխումներ ենք իրականացելու հանրային ծառայության գրավչությունը բարձրացնելու ուղղությամբ, ներառյալ՝ վարձատրության ու պարգևատրման համակարգերի վերանայումը, հորիզոնական շարժունության ապահովումը, գրավչությունը մեծացնող աշխատանքային միջավայրի ձևավորումն ու պայմանների ներդրումը և այլն:

• Լիարժեք ներդնելու ենք պետական ծառայության համակարգում վարձատրության արժանապատիվ համակարգ, միաժամանակ, հենվելով պատասխանատվության ծավալի ու կոմպետենցիաների հետ համարժեքության, ինչպես նաև՝ ոչ պետական հատվածի հետ մրցունակության ապահովման կանխադրույթների վրա: Վարձատրության բարեփոխումը, այնուամենայնիվ, պետք է նաև զուգորդվի կամ հաջորդի պետական համակարգում ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ դաշտի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին, և առնվազն բարեփոխումների առաջին փուլում պետության համար չառաջացնի լրացուցիչ ֆինանսական բեռ:

• Արդիականացնելու ենք կատարողականի գնահատման համակարգը, և պարգևատրման ու խրախուսման ինստիտուտը կհենվի արժանիքահենք սկզբունքների վրա, պարգևատրումները պետք է զատվեն վարձատրությունից:

• Արմատապես վերանայելու ենք պետական ծառայողների կրթության, ուսուցման ու վերապատրաստման գործող համակարգը, ներդնելու ենք տեխնոլոգիական առաջադեմ լուծումներով ուսուցման հնարավորություններ, վերանայելու ենք կարողությունների ու գիտելիքի զարգացման քաղաքականությունը՝ մարդկային կապիտալի զարգացման, պետական հատվածում տաղանդների ներգրավման ու պահպանման նպատակով:

• Ապահովելու ենք ճկուն պետական հատվածում անձնակազմի հավաքագրման համակարգեր բարձր պրոֆեսիոնալ ներուժի և տաղանդներ ներգրավելու համար, այդ թվում՝ ակտիվացնելով ջանքերը Սփյուռքի ներուժի ներգրավման ուղղությամբ:

Արդյունքում խորապես վերարժևորելու ենք հանրային ծառայության և հանրային ծառայողների ինստիտուտը՝ մեծացնելով պետական հատվածի գրավչությունը որպես մրցունակ գործատու:

Ինստիտուտների արդիականացման ուղղությամբ նախաձեռնելու ենք հետևյալ քայլերը՝

• Ձևավորելու ենք հանրային կառավարման բարեփոխումների համակարգման գրասենյակը՝ բարեփոխումների իրականացումը և շարունակականությունն ապահովելու համար։

• Իրականացնելու ենք խորքային ֆունկցիոնալ ու ինստիտուցիոնալ վերլուծություն՝ պետական հատվածում բոլոր անարդյունավետությունները վեր հանելու և համարժեք վերանայման աշխատանքներ իրականացնելու համար։

• Ապահովելու ենք գործադիր իշխանության մարմինների գործառույթների միասնական ու օպտիմալ կառուցակարգեր։

• Փորձարկելու ենք մի քանի օժանդակ գործառույթների մասով ինտեգրված ծառայությունների մատուցման մոդելը և, հաջողության դեպքում, դրա համապարփակ կիրառման համար ապահովելու ենք իրավական ու տեխնիկական հիմքեր։

• Աշխատանքներ ենք իրականացնելու պետական ենթակառուցվածքների արդիականացման հայեցակարգի մշակման ու դրանից բխող գործողությունների փուլային իրագործման ուղղությամբ՝ ապահովելով ռեսուրսարդյունավետ և արդիական աշխատանքային միջավայր ապահովող պետական ինստիտուտներ։

Արդյունքում արդիականացելու ենք հանրային հատվածի ֆունկցիոնալ համակարգն ու ինստիտուտները՝ ապահովելով ներդաշնակ համագործակցող պետական կառավարում՝ զերծ կրկնություններից, այլևս անպիտան ֆունկցիաներից, վարչարարական քաոսից, պատասխանատվության և իրավասությունների անհամարժեքությունից, անարդյունավետ և ռեսուրսատար գործելաոճերից։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

2021 թվականի մայիսի 9-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է 16 սմ-ով, իսկ 2021 թվականի հունվարի 1-ի համեմատ բարձր է 28 սմ-ով: Կանխատեսվում է, որ 2021 թվականի դեկտեմբերի 31-ին կգրանցվի վերջին 60 տարիների ամենաբարձր մակարդակը՝ 6-11սմ-ով ավելի, քան գրանցվել է 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

2020 թվականի ընթացքում Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակը կազմել է 210.196 մլն խմ, որն ամենամեծ ծավալն է առնվազն վերջին տասնամյակի ընթացքում: Սևանա լճից բաց թողնված ջրի քանակի տարեկան ամենափոքր քանակը եղել է 2019 թվականին՝ 143.857 մլն խմ, որը լճից բաց թողնված ջրի ամենափոքր ծավալն է առնվազն վերջին տասնամյակի ընթացքում:

Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների կայուն օգտագործման նպատակով 2020 թվականի ընթացքում Սևանա լճում սահմանել ենք 300 տոննա սիգի արդյունագործական որսի չափաքանակ և ձկան որսի վերահսկողության նոր գործիքներ՝ նպատակ ունենալով արդյունավետ պայքարել ապօրինի ձկնորսության դեմ և գործուն քայլեր ձեռնարկել Սևանի ձկնապաշարների վերականգնման ուղղությամբ: Այս ծրագրի շրջանակում արգելել ենք Սևանա լճում բոլոր ձկնատեսակների արդյունագործական որսը՝ բացի սիգից, իսկ սիգ ձկնատեսակի որսն այսուհետ իրականացվում է Սևանա լճի ափից առնվազն 500 մետր հեռավորության վրա:

Պետության և ձկնորսների միջև հաստատված համագործակցության և փոխվստահության տրամաբանությամբ Սևանա լճում արդյունագործական նպատակներով սիգի որս իրականացնելու համար 2020 թվականի օգոստոսի 10-ից շրջակա միջավայրի նախարարության և ձկնորսների միջև կնքվել է 255 պայմանագիր, որի արդյունքում 205 տոննա սիգի որս է իրականացվել:

2021 թվականին նախաձեռնել ենք սիգի արդյունագործական որսի 2-րդ փուլը և սահմանել ենք Սևանա լճում 250 տոննա արդյունագործական նպատակներով սիգի որսի չափաքանակ: Հսկողության գործիքակազմը ուժեղացնելու նպատակով 2020 թվականի օգոստոս ամսից ստեղծել ենք շուրջօրյա առափնյա և վերջրյա պահպանության բաժին՝ 25 աշխատակցով:

Իրականացրել ենք մինչև 1905.0 բացարձակ նիշն ընկած հատվածում ինքնակամ և ապօրինի կառուցված տարբեր տնտեսվարողներին պատկանող շուրջ 3 տասնյակ շենք-շինության, կցակառույցների, պարիսպների և տաղավարների ապամոնտաժման աշխատանքներ:

Իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության նպատակով Սևանա լիճ է բաց թողնվել շուրջ 640,000 գեղարքունի և 41,000 ամառային իշխան ձկնատեսակներ:

2020 թվականին հանրապետության բարձրադիր գոտիներում, ուռենու տեղական տեսակների կտրոնների միջոցով, իրականացրել ենք գետերի ափապաշտպան շերտի ստեղծման աշխատանքներ: Ծրագիրն ընդգրկել է 7 մարզ՝ 1063 տեղի բնակիչների ներգրավմամբ, տնկվել է 1,999,357 կտրոն: 10 մլն ծառատունկի նախաձեռնության շրջանակում մարզերում առանձնացվել են անտառապատման համար նպաստավոր շուրջ 3,000 հեկտար տարածք: 2020 թվականին կատարվել են 2172 հեկտար անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ:

Միայն 2020 թվականին անտառամերձ բնակչությանն անվճար տրամադրվել է 71,830 պահեստային խմ թափուկ վառելափայտ:

Արարատի և Արմավիրի մարզերում իրականացրել ենք 10 խորքային հորի լուծարման և 47-ի կոնսերվացման աշխատանքներ: Ջրօգտագործողների միջոցների հաշվին կոնսերվացվել է ևս 28 խորքային հոր: Փականային ռեժիմի է բերվել շուրջ 50 խորքային հոր: Խնայվել է 4500 լ/վրկ ջրաքանակ: Ձևակերպվել է նոր 190 ջրօգտագործման թույլտվության հայտ՝ ձկնաբուծության, ոռոգման, խմելու ջրի և արդյունաբերական նպատակով: Մինչ օրս 152 փոքր ՀԷԿ-երից 111-ում արդեն իսկ տեղադրվել և կնքվել է 145 առցանց ջրաչափ:

Ջրային օրենսգրքի փոփոխությամբ սահմանվել են այն գետերի ցանկը հաստատելու իրավական հիմքերը, որոնց վրա կարգելվի ՀԷԿ-երի կառուցումը:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2022 թվականից արգելվելու է մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակների վաճառքը և իրացումը:

2017 թվականի համեմատությամբ՝ Հայաստան փայտածուխի ներկրումն աճել է 500 և ավելի տոկոսով: 128% աճել է շինափայտի ներկրումը: Այս թվերը նշանակում են, որ Հայաստանի անտառների պահպանությանն ուղղված մեր քաղաքականությունը արդյունավետ է:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

• Կատարելագործելու ենք ռադիոակտիվ, քիմիական և կենսաբանական վտանգավոր թափոնների կառավարման համակարգը, ստեղծելու ենք քիմիական նյութերի անվտանգ կառավարման համակարգ:

Արդյունքում կունենանք առավել անվտանգ շրջակա միջավայր, հողի, ջրի և օդի աղտոտվածության ցածր մակարդակ, կենսաբազմազանության համար առողջ, վերարտադրման համար բարենպաստ պայմաններ:

• Ներդնելու ենք ջրային ռեսուրսների կառավարման գերարդյունավետ համակարգ: Ջրային ռեսուրսների պահպանումը, արդյունավետ օգտագործումը և որակի բարձրացումը լինելու են այս ոլորտի առաջնահերթությունները:

Արդյունքում կունենանք մեծ քանակությամբ խնայված և քաղցրահամ խմելու և ոռոգման ջուր: Ջրային ռեսուրսների մեծ պաշարը թույլ կտա ավելի շատ բնակավայրեր ապահովել շուրջօրյա ջրամատակարմամբ, իսկ արդյունավետ կառավարվող ոռոգելի ջուրը՝ առավել կխթանի գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև հնարավոր նվազագույնին կհասցնի ջրային

կորուստները: Կունենանք ջրային ռեսուրսների, այդ թվում՝ Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի արդյունավետ կառավարում, կենսական նշանակության ջրհավաք ավազանների ու գերխոնավ պահպանված տարածքներ: Ջրային ռեսուրսների կառավարման համակարգը բարեփոխելու ենք աշխարհի լավագույն փորձին և ընդունված բարձր չափանիշներին համահունչ:

• Շարունակելու ենք Սևանա լճի էկոհամակարգի և կենսաբազմազանության պահպանմանը, վերականգնմանը, վերարտադրմանը, բնականոն զարգացմանը և խելամիտ օգտագործմանը, աղտոտվածության նվազեցմանը և ապա՝ լճի մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Արդյունքում կունենանք ռազմավարական նշանակության և ազգային հարստություն համարվող Սևանա լճի արդյունավետ և արդիական կառավարման համակարգ, լճի վերականգնված և առողջացած էկոհամակարգ, քաղցրահամ ջրի մեծ պաշար, որն այսօրվա աշխարհում ամենաթանկ ռեսուրսներից է:

• Կատարելու ենք օրենսդրական և ինստիտուցիոնալ մի շարք փոփոխություններ, որոնք հասցված վնասի պատշաճ փոխհատուցումից բացի ուղղված կլինեն այդ վնասի հնարավորինս կանխարգելմանը, մեղմմանը և ի վերջո, չեզոքացմանը:

Արդյունքում ունենալու ենք մաքուր և առողջ շրջակա միջավայր, բնական ռեսուրսների, անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն և արդյունավետ կառավարում՝ բացառելով կամ նվազագույնի հասցնելով տնտեսական գործունեության հետևանքով հողին, ջրին, օդին և կենսաբազմազանությանը հասցվող բնապահպանական վնասները, բնական պաշարների գերշահագործումը: Առաջնահերթությունների թվում են ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքները և պոչամբարների անվտանգությունը, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ու կենսանվտանգության ապահովումը:

• Ընդունելու և գործարկելու ենք կանաչ տնտեսության ներդրման, էկոլոգիական և բնական ռեսուրսների, այդ թվում նաև հանքարդյունաբերության ոլորտի կառավարման ռազմավարություն:

Արդյունքում կունենանք լավագույն հասանելի տեխնոլոգիաներով էկոլոգիապես մաքուր արտադրություններ, գիտահենք և ռիսկերի գնահատման վրա հիմնված մշտադիտարկման համակարգեր: Բնական ռեսուրսների կառավարման հիմքում ընկած կլինի գերշահագործման բացառումը, շահագործման արդյունքում շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցության նվազեցումը և չեզոքացումը, տնտեսական եկամուտների արդարացի բաշխումը:

• Վերանայելու ենք բնապահպանական հարկի դրույքաչափերը, որի հաշվարկման հիմքում ընկած է լինելու շրջակա միջավայրին և դրա առանձին բաղադրիչներին հասցված վնասի համարժեք փոխհատուցման սկզբունքը:

Արդյունքում, ի տարբերություն գործող օրենսդրության, որտեղ հնարավոր է հաշվարկել միայն հողին, ջրին, օդին հասցված տնտեսական վնասը, ունենալու ենք վնասի փոխհատուցման էկոհամակարգային մոտեցում, ինչը ենթադրում է, որ շրջակա միջավայրի առանձին բաղադրիչներին հասցված վնասը հաշվարկվելու է էկոհամակարգային համալիր արժեքի գնահատման համատեքստում:

• Վերանայելու ենք մետաղական օգտակար հանածոների հարկման շեմը, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվարկման մեխանիզմը։

Արդյունքում կունենանք տնտեսական գործունեության ազդեցությանը համարժեք բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների դրույքաչափեր, մետաղական օգտակար հանածոների ոլորտից ստացվող եկամուտների և հասցված վնասի միջև հավասարակշռություն։

• Խթանելու ենք վերամշակող հանքարդյունաբերության զարգացումը, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը։

Արդյունքում հանքարդյունաբերության ոլորտում նվազեցնելու ենք խտանյութի և չվերամշակված հումքի արտահանումը՝ այն փոխարինելով վերամշակված հանքանյութի արտադրությամբ և արտահանմամբ։

• Ներդնելու ենք շրջակա միջավայրի միասնական մշտադիտարկման և վերահսկողության, թույլտվությունների, լիցենզիաների միասնական համակարգեր։ Բարձրացնելու ենք հանրային իրազեկվածությունը։

Արդյունքում բարձրացնելու ենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, բնապահպանական թույլտվությունների տրամադրման գործընթացների արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը։ Ապահովելու ենք բնապահպանական որոշումների կայացման գործընթացներին հանրային լայն մասնակցություն։

• Ապահովելու ենք սերտ համագործակցություն ակադեմիական, գիտական և նորարարական տեխնոլոգիաների ոլորտների և Շրջակա միջավայրի նախարարության միջև։

Արդյունքում գիտական ներուժն ու պոտենցիալը կծառայեն ոլորտի կառավարման մարտահրավերներին, կնպաստեն կարողություններ ու գիտելիք ձևավորելուն։ Հանրակրթական ծրագրերում զարգացնելու ենք բնապահպանական թեմատիկ ուղղվածությունը, էկոլոգիական գիտակցության արմատավորումը՝ շեշտադրելով յուրաքանչյուր անհատի, ինչպես նաև կոլեկտիվ պատասխանատվության կարևորությունը։

ՀԱՎԵԼՎԱԾ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ

1. «Ազատությունն աշխարհում» զեկույց / "Freedom in the World" report – 2021

«Freedom House» կազմակերպության «Ազատությունն աշխարհում 2021» զեկույցում Հայաստանին տրվել է 55 միավոր: Հայաստանը շարունակում է մնալ «մասամբ ազատ» երկրների շարքում: 2018 թվականից ի վեր Հայաստանը դիրքերը բարելավել է 10 հորիզոնականով:

«Ազատությունն աշխարհում» ցուցիչ

Տարի	2018	2019	2020	2021
Միավոր	**45**	**51**	**53**	**55**

2. «Տնտեսական ազատության ցուցիչ» / "Index of Economic Freedom" – 2021

«The Heritage Foundation»-ի «Տնտեսական ազատության» 2021 թվականի ցուցիչով 178 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը: Հայաստանը դասակարգվում է «հիմնականում ազատ» տնտեսություն ունեցող երկրների ցանկին: 2018 թվականից ի վեր վերոնշյալ ցուցիչում Հայաստանի դիրքերը բարելավվել են 12 հորիզոնականով: Ըստ զեկույցի՝ Հայաստանի տնտեսական ազատության ընդհանուր ցուցանիշն աճել է 1.3 կետով հիմնականում ֆինանսական վիճակի բարելավման շնորհիվ:

«Տնտեսական ազատության ցուցիչ»

Տարի	2018	2019	2020	2021
Հորիզոնական	**44**	**47**	**34**	**32**
Միավոր	**68.7**	**67.7**	**70.6**	**71.9**

3. «Ժողովրդավարության ցուցիչ» / " Democracy index" – 2020

«The Economist Intelligence Unit» հետազոտական կենտրոնի 2020 թվականի «Ժողովրդավարության ցուցիչով» Հայաստանը գրանցել է հետընթաց 3 հորիզոնականով՝ 167 երկրների շարքում 5.35 միավորով զբաղեցնելով 89-րդ հորիզոնականը: Հայաստանը դասակարգվել է որպես «հիբրիդային վարչակարգ» ունեցող երկիր: 2019 թվականի բարելավումից հետո գրանցված վատթարացումը հիմնականում պայմանավորված է եղել 44-օրյա պատերազմի պատճառով ռազմական դրության ներքո քաղաքացիների ազատությունների սահմանափակումներով:

«Ժողովրդավարության ցուցիչ»

Տարի	2018	2019	2020
Հորիզոնական	**103**	**86**	**89**
Միավոր	**4.79**	**5.54**	**5.35**

4. «Կոռուպցիայի ընկալման ցուցիչ» / “Corruption Perception index” – 2020

«Transparency International»-ի կողմից հրապարակվող զեկույցի համաձայն՝ «Կոռուպցիայի ընկալման ցուցիչով» գծով 2020 թվականին Հայաստանը գրանցել է առաջընթաց՝ բարելավելով դիրքերը 17 հորիզոնականով: 180 երկրների շարքում 49 միավորով զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը: 2018 թվականից ի վեր Հայաստանը արձանագրել է 45 հորիզոնականով դիրքի բարելավում:

«Կոռուպցիայի ընկալման ցուցիչ»

Տարի	2018	2019	2020
Հորիզոնական	**105**	**77**	**60**
Միավոր	**35**	**42**	**49**

5. «Մամուլի ազատության ցուցիչ» / “World Press Freedom Index” – 2021

«Լրագրողներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2021 թվականի «Մամուլի ազատության ցուցիչով» Հայաստանը 180 երկրների շարքում զբաղեցրել է 63-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2 հորիզոնականով:

«Մամուլի ազատության ցուցիչ»

Տարի	2018	2019	2020	2021
Հորիզոնական	**80**	**61**	**61**	**63**
Միավոր	**29.99**	**28.98**	**28.6**	**28.83**

6. «Էլեկտրոնային կառավարության զեկույց» / “E-Government Survey” – 2020

ՄԱԿ-ի կողմից հրապարակվող երկամյա «Էլեկտրոնային կառավարության» 2020 թվականի զեկույցում 193 երկրների շարքում Հայաստանը 0.7136 միավորով զբաղեցրել է 68-րդ հորիզոնականը՝ 2018 թվականի համեմատ դիրքերը բարելավելով միանգամից 19 հորիզոնականով: Ըստ 2020 թվականի զեկույցի՝ Հայաստանը դասվում է բարձր ցուցիչ ունեցող երկրների շարքին:

«Էլեկտրոնային կառավարության զեկույց»

Տարի	2016	2018	2020
Հորիզոնական	**87**	**87**	**68**
Միավոր	**0.5179**	**0.5944**	**0.7136**

7. «Սոցիակական առաջընթացի ցուցիչ» / “Social Progress Index”- 2020

«Social Progress Imperative» կազմակերպության «Սոցիալական առաջընթաց» 2020 թվականի զեկույցում Հայաստանը ստացել է 76.46 միավոր և 163 երկրների շարքում զբաղեցրել է 50-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ իր դիրքերը բարելավելով 9 հորիզոնականով (5.32 միավորով): Հայաստանը դասվում է «միջին բարձր սոցիալական առաջընթաց» (upper middle social progress) ունեցող երկրների շարքին: 2018 թվականից ի վեր վերոնշյալ ցուցիչով Հայաստանի դիրքերը բարելավվել են:

«Սոցիալական առաջընթացի ցուցիչ»

Տարի	2018	2019	2020
Հորիզոնական	**55**	**59**	**50**
Միավոր	**70.87**	**71.14**	**76.46**

8. «Բարեկեցության ցուցիչ» / “Prosperity Index” – 2020

«Legatum Institute» հետազոտական կենտրոնի 2020 թվականի «Բարեկեցության ցուցիչով» Հայաստանը 167 երկրների ցանկում զբաղեցրել է 55-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով իր դիրքերը 8 նիշով: 2018 թվականից ի վեր Հայաստանի դիրքերը բարելավվել են 13 հորիզոնականով:

«Բարեկեցության ցուցիչ»

Տարի	2018	2019	2020
Հորիզոնական	**68**	**63**	**55**

9. «Գլոբալ ինովացիոն զեկույց» / “ Global Innovation index” – 2020

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից հրապարկված ցուցիչի համաձայն՝ 2020 թվականի վարկանիշում Հայաստանը 131 երկրների շարքում 61-րդն է՝ 3 հորիզոնականով բարելավելով դիրքը 2019 թվականի համեմատ:

«Գլոբալ ինովացիոն զեկույց»

Տարի	2018	2019	2020
Հորիզոնական	**68**	**64**	**51**
Միավոր	**32.81**	**33.98**	**32.64**